



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 125 2021

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոնի դոցենտ (գլխավոր խմբագիր)

Արմեն Մարուխյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Դավիթ Մելքոնյան իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ (համաձայնությամբ)

Արթուր Չախոյան ՀՀ գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Գլխավոր խմբագրի հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-640
Էլ. հասցե՝ ashot@yessayan.am,
orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը,
ոճը, տառաձևերը և էջադրումը՝
«ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 22.09.2021թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 5 պայմ. մասով
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն»
հրատարակչության տպարանում
Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2021թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի ուղերձը Հայաստանի Հանրապետության անկախության 30 ամյակի կապակցությամբ	3
ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Ջորայր Հարությունյան Ծառայողական պարտականությունների կատարումը՝ որպես արարքում հանցավորությունը բացառող հանգամանք	4
Հայկ Մարգարյան Հեղինակային և հարակից իրավունքների քրեաիրավական պաշտպանության որոշ հիմնախնդիրներ	10
Նելլի Կիրակոսյան, Գուրգեն Քոթանջյան Իրական շահառուի վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելու կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելու հանցակազմի քրեաիրավական բնութագիրը և որակավորման առանձնահատկությունները	15
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Նանն Մելքոնյան Բերման ենթարկելու՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի որոշ հիմնահարցեր	21
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Սամինե Պետրոսյան Ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի ծագումը	28
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Գևորգ Գյոզալյան Իրավական ֆիլոսոֆիաները Հայաստանի անկախության հռչակագրում և Հայաստանի Հանրապետության սահմանադրությունում	32
Վախթանգ Բաբայան Պետության գործառույթների էությունն ու տեսակների ընդհանուր բնութագիրը	38
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Էլյա Կարապետյան Ընտանիքում երեխաների նկատմամբ բռնությունը որպես սոցիալական և հոգեբանական հիմնախնդիր	42
ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Ջավեն Սմբատյան Վարչական իրավախախտումների ուղղակի և անուղղակի դրսևորումները	47
ՋՐՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ	
Ռազմիկ Մարիկյան Զինվորական արհմիությունները՝ միավորումների ազատության համատեքստում	52
Լեոնիդ Նահապետյան Հանցանք կատարած զինծառայողների քրեագիտական և սոցիալ-հոգեբանական առումները	55
Համլետ Հարությունյան Առողջության պահպանության իրավունքը զորահավաքային զորակոչի ընթացքում	60
ՍԵՂՄԱԳՐԵՐ	
Սեղմագրեր / Абстракты / Abstracts	66
ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ	
ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործնական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	80

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉ ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 30 ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի հայրենակիցներ,

Այսօր մեր ժողովրդի ամենաթանկ ու նվիրական օրն է՝ Հայաստանի Հանրապետության անկախության 30-րդ տարեդարձը: Օր, որ ամբողջացնում է մեր պատմական կենսատարածքում ազատ, անկախ ապրելու, պետականություն ունենալու մեր ժողովրդի բազմադարյա իղձերը, և որը սրբագործված է այդ նվիրական երազանքի կերտման համար իրենց կյանքը զոհաբերած մեր լավագույն զավակների արյամբ:



Անկախ պետականության՝ իբրև մեր ազգի գոյապահպանության միակ բանաձևի և բարձրագույն արժեքի խորքային գիտակցումով, մեր սուրբ նահատակների անձնագրիության դիմաց հավերժ ու անդավաճան պարքի զգացումով, ամենօրյա տքնաջան աշխատանքով, փոխադարձ չարությունն ու ատելությունը միմյանց հանդեպ հարգանքի ու հոգատարության փոխակերպելով՝ պետք է ամոքենք մեր վերքերը, նորոգենք մեր տունը և վերահաստատենք այս հողի վրա ապրելու, զարգանալու և հարատևելու մեր իրավունքն ու վճռականությունը, և չկա այլընտրանք:

Հազարամյա մեր պատմության ընթացքում ստիպված ենք եղել անընդհատ հաղթա-

հարել փորձություններ, վերջին ճիգով լինելության օգտին լուծել գոյութենական բարդագույն խնդիրներ: Դրանք ավելի են ամրապնդել մեր կենսասիրությունը, մեր պատմական ժառանգությունն ու գենետիկ հիշողությունը, ինքնությունն ու ազգային ինքնատիպությունը պահպանելու, ազատության ու անկախության, հզոր պետության մեր ձգտումներին հասնելու վճռականությունը:

Ներկայիս փորձություններից, վստահ եմ, դուրս ենք գալու ավելի ուժեղացած, իբրև ազգ՝ առավել իմաստնացած, յուրաքանչյուրիս անհատական ու անհատույց ներդրմամբ պետության ու պետականության անդադրում շենացումն ու հզորացումն իբրև իրագործվող համազգային տեսիլ որդեգրելով և մեր կենսակերպը դրանով պայմանավորելով, ազգային միասնությանը նոր իմաստ ու նոր բովանդակություն հաղորդելով:

Ես հավատում եմ մեր հավաքական ուժին, և այլընտրանք չունեցող այս նպատակներին հասնելու համար անհնարին թվացողը պետք է դարձնենք հնարավոր՝ առաջին հերթին խոհեմաբար ու սառնասրտորեն առավելագույն ջանք գործադրելով ներքին անվտանգության կայունացման համար: Ներպետական ու ներհասարակական համակեցությունը, համերաշխությունը պահանջում է մեր քաղաքացիական պարտքի հստակ գիտակցում, իրավունքների չարաշահում, իրավահպատակ և օրինապաշտ վարքագիծ, հավատ ու վստահություն պետական, ազգային ինստիտուտների հանդեպ:

Ուստի, շնորհավոր մեր անկախության 30-ամյակը:

Երիցս փանք ու խոնարհում, այսօրվա և մեր հայրենիքի անկախության գալիք օրերի համար իրենց կյանքը նվիրաբերելով ապրելու, ուղղվելու և հզոր երկիր կառուցելու պատգամ հղած, մեր սուրբ նահատակներին:

ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, փաստաբան
իրավ.գիտ.թեկնածու

ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԱՐՔՈՒՄ ՀԱՆՑԱԿՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ

Հանցավորության դեմ պայքարի գործում իրավապահ մարմինների գործունեության իրականացումը՝ հանցագործությունների կատարման կանխարգելումը կամ արդեն կատարված հանցանքների բացահայտումը, ծնում են մի շարք հասարակական հարաբերություններ, որոնց մեծ մասն արդեն երկար ժամանակ է, ինչ կարգավորված է գործող օրենսդրությամբ:

Նախատեսված իրավակարգավորումներն իրենց մեծամասնությամբ վերաբերում են հանցանք կատարելուն, հանցանք կատարողին պատասխանատվության կանչելուն և այլ հարակից հարցերին: Սակայն օրենսդրության այս հսկա զանգվածի մի փոքր մասն է միայն վերաբերում իրավապահ մարմինների աշխատանքին, այդ մարմինների աշխատակիցներին և նրանց կողմից ծառայողական պարտականությունների պատշաճ կատարման ապահովմանը ուղղված երաշխիքներին:

Այսպես, գաղտնիք չէ, որ հանցավորության դեմ պայքարում օպերատիվ-հետախուզական ծառայություն իրականացնող մարմինների աշխատակիցները հանդիսանում են առաջամարտիկներ, և հետևապես մշտապես գտնվում են օրինականության ու ապօրինության սահմանին:

Վերջիններիս գործունեությունը վերլուծելիս, ի թիվս այլնի, առաջանում են հարցեր ՕՀՄ կատարող անձանց կողմից իրենց գործունեությունն իրականացնելիս նախատեսված իրավական երաշխիքների վերաբերյալ:

Հայրենական գիտական գրականության մեջ բովանդակային առումով ուսումնասիրված չէ և բաց հարց է հանդիսանում՝ իրավական երաշխիքների առկայությունը ծառայողական պարտականությունների կատարման նպատակով, դրա իրացմամբ պարտադրված և ձևական առումով այս կամ այն հանցակազմի հետ

համընկնող գործողություններ կատարող անձանց նկատմամբ:

Այս հարցի ուսումնասիրությունը հարկ է սկսել «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ օրենք) 13-րդ հոդվածի վերլուծությամբ, որի համաձայն՝

«1. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձինք ազատվում են հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվությունից՝ օրենքով սահմանված կարգով:

2. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինները պարտավոր են ապահովել օպերատիվ-հետախուզական միջոցառումների նախապատրաստմանն ու անցկացմանը ներգրավված անձանց և նրանց ընտանիքի անդամների պաշտպանությունը, եթե առկա է նրանց կյանքին և առողջությանը սպառնացող իրական վտանգ, որը պայմանավորված է այդ մարմինների հետ նրանց համագործակցությամբ:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող, ինչպես նաև հանցագործությունների բացահայտմանն ու հանցագործների հայտնաբերմանն աջակցած անձինք կարող են ստանալ դրամական և այլ պարգևատրումներ: Այդ պարգևատրումների գումարները հարկման և հայտարարագրման ենթակա չեն:

4. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնող մարմինների հետ գաղտնի համատեղ համագործակցող անձի՝ օպերատիվ-հետախուզական միջոցառմանը մասնակցելու հետևանքով զոհվելու դեպքում նրա ընտանիքին և խնամքի տակ գտնվող անձանց պետական բյուջեի միջոցներից վճարվում է

միանվագ նպաստ՝ զոհվածի ամսական դրամական բավարարման տարը տարվա գումարի չափով, և օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվում է կերակրողին կորցնողի կենսաթոշակ: Իսկ եթե անձը նշված պայմաններում վիրավորվել է, ստացել է խեղում, կոնտրոլի կամ հաշմանդամություն, ապա պետական բյուջեի միջոցներից նրան վճարվում է միանվագ նպաստ՝ ամսական դրամական բավարարման հինգ տարվա գումարի չափով, և օրենսդրությամբ սահմանված կարգով նշանակվում է հաշմանդամության կենսաթոշակ:

5. Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների պաշտոնատար անձանց՝ կազմակերպված հանցավոր խմբերում հատուկ առաջադրանքներ կատարելու, ինչպես նաև հաստիքային գաղտնի աշխատակիցների կարգավիճակով ծառայության ժամանակահատվածը արտոնյալ հաշվարկով մտնում է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնում ծառայության ընդհանուր ստաժի մեջ, որի հաշվարկման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Մեջբերված իրավադրույթի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ այն կոչված է նախատեսելու որոշակի երաշխիքներ օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացմանը մասնակցություն ունեցած անձանց համար: Այդ երաշխիքների շարքում իրավադրույթը նախատեսում է նաև քրեական պատասխանատվությունից ազատվելը:

Թեև մեջբերված իրավադրույթը կրում է «**Օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցների** և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց, նրանց ընտանիքի անդամների ու խնամքի տակ գտնվող անձանց **անվտանգությունը և սոցիալական պաշտպանությունը**» վերնագիրը, սակայն դրա առաջին իսկ մասում ամրագրված երաշխիքը նախատեսված է **միայն** օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների հետ համագործակ-

ցող անձանց համար, այս իրավական երաշխիքից օգտվելու հնարավորություն չնախատեսելով անմիջապես ՕՀՄ իրականացնող անձանց համար:

Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը առանցքային ընդհանուր իրավունք-սկզբունք է, որը սահմանափակված չէ որևէ ոլորտով և գործում է ամենուրեք: Բացի այդ, հավասարության ընդհանուր իրավունքը անպայմանորեն պահանջում է համեմատություն այլ անձանց հետ: Հավասարության հատուկ իրավունք՝ խտրականության արգելքը լրացնում է ընդհանուր հավասարության իրավունքը: Ընդհանուր հավասարության և խտրականության կարգավորումը առանձին սկզբունքների տեսքով համահունչ է նաև Եվրոպական միության հիմնական իրավունքների խարտիայի 20-րդ և 21-րդ հոդվածներին, ՄԻԵԿ 12-րդ արձանագրության 1-ին հոդվածին: Նման մոտեցումն ընդգծում է խտրականության արգելքի առանձնահատուկ դերն ու նշանակությունը¹:

Հանցագործության կատարման համար քրեական պատասխանատվությունից ազատվելու երաշխիքը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների համար չնախատեսելը միանշանակ հանդիսանում է նրանց նկատմամբ խտրական վերաբերմունքի դրսևորում, խախտում է օրենքի առջև ընդհանուր հավասարության սահմանադրական իրավունք-սկզբունքը:

Ընդհանուր առմամբ օրենքի առջև հավասարության սկզբունքին հակասում է խտրականության ցանկացած դրսևորում, ինչը փաստացիորեն դառնում է որոշ մարդկանց, այլ մարդկանցից տարբերելու հիմք: Մարդկանց այսպիսի տարբերակումն, ըստ էության, նրանց համար նշանակում է ստեղծել իրավունքների ու ազատությունների իրացման տարբեր հնարավորություններ, այսինքն՝ ի վերջո խախտվում է օրենքի առջև հավասարության սկզբունքը: Այս սկզբունքը կիրառելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ բացառվում է խտրականության որևէ դրսևորում ցանկացած իրավական ակտում, **հակառակ դեպքում այդ ակտը դառնում է Սահմանադրությանը չհամապատաս-**

¹ Տե՛ս Վարդան Պողոսյան, Նորա Սարգսյան / Հայաստանի Հանրապետության 2015թ. խմբագրությամբ Սահմանադրությունը. – Եր.: Տիգրան Մեծ, 2016, էջ՝ 51-52:

խանոդ: Եվ այս առումով հավասարության սկզբունքն ունի խտրականությունը բացառող նշանակություն, միաժամանակ դա նաև պահանջ է, որից էլ միարժեքորեն բխում է, որ անթույլատրելի է համարվում խտրական բնույթի որևէ դրսևորման հնարավորությունն անգամ, և դրանք անխուսափելիորեն դառնում են Սահմանադրությանը չհամապատասխանող: Հետևաբար, օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը դառնում է ամեն տեսակի խտրականության վերացման պահանջ, ինչը ենթադրում է, որ օրենքում չեն կարող լինել որևէ տարբերության, բացառության կամ նախապատվության հնարավորություններ, որոնք հիմնված են սեռային, ռասայական, էթնիկական **կամ այլ հատկանիշի վրա**, որովհետև այդպիսի մոտեցումը հանգեցնում է մարդու և քաղաքացու իրավական հնարավորությունների հավասարության վերացմանը կամ խախտմանը:

Ընդհանուր առմամբ պետք է գործի. «*հավասար պայմանների առկայության դեպքում՝ մարդիկ պետք է գտնվեն հավասար վիճակում*» սկզբունքը:

Օրենքի առջև հավասարության սահմանադրական սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել ոչ միայն իբրև զուտ ձևական հավասարություն, այլև իբրև իրավունքների ու ազատությունների օրենսդրական կարգավորման գնահատման սահմանադրական չափանիշ:

Ինչպես իրավացիորեն նշված է ՀՀ սահմանադրական դատարանի 29.01.2008թ. ՍԴՈ-731 որոշման մեջ՝ «*պետության պոզիտիվ սահմանադրական պարտավորությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները*»:

Օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական պահանջից բխում են ոչ

միայն օրենքով բոլորի համար սահմանված արգելքների հավասարության և պատասխանատվության միասնական պայմաններ, այլև բոլորի համար օրենքի կիրառման արդյունքում առաջացած իրավական նույնակարգ հետևանքներ և **ձևականորեն հավասար սուբյեկտների նկատմամբ օրենքի կիրառման միևնույն մոտեցումներ**: Սա նշանակում է, որ բոլորը պետք է ստանան օրենքով սահմանված իրավունքների ու ազատությունների միևնույն ծավալը, ունենան այդ իրավունքների ու ազատությունների իրացման նույն հնարավորությունները, դրանց պաշտպանության և խախտման դեպքում դրանց վերականգնման նույն միջոցները, ինչպես նաև հավասար իրավական պարտականություններ:

Օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը վերաբերում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին և **պահանջում է ցանկացած օրենքում նշված մարդկանց** իրավունքների ու ազատությունների, պարտականությունների ու **պարասխանարվության հետ կապված խնդիրները լուծելիս ցուցաբերել միապեսակ մոտեցումներ** և միաժամանակ ցույց է տալիս, որ մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքներին ու ազատություններին վերաբերող օրենքները պետք է համապատասխանեն օրենքի առջև հավասարության սկզբունքի բովանդակությանն ու իմաստին²:

Քննարկման առարկա Օրենքի հոդվածի խմբագրությունը ակնհայտորեն պարունակում է պատասխանատվության հետ կապված խնդիրների լուծման տարբերակված մոտեցում, որը թույլ է տալիս հանգել այն միանշանակ հետևությանը, որ Օրենքի մեջբերված կարգավորումը (գտնվում է ուղղակի անհամապատասխանության մեջ ՀՀ Սահմանադրության 28-րդ և 29-րդ հոդվածների պահանջների հետ):

Դեռևս 2008 թվականին լույս տեսած «Օրինականություն» գիտական ամսագրի N 49-րդ համարում Ա.Ղամբարյանի «Քրեական հետապնդումից անձեռնմխելիություն տրամադրելու գլխավոր դատախազի լիազորության ամրագրումը քրեական դատավարության նոր օրենսգրքում» գիտական հոդվածում, ի թիվս

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ / Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի. - Եր.: «Իրավունք», 2010, էջ՝ 173-179:

այլնի, ընդգծվում է նաև ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների և ՕՀԳ իրականացնող մարմինների հետ համագործակցող անձանց միջև առկա անհավասարությունը, ինչը վկայում է գիտական հանրության կողմից խտրական վերաբերմունքի ներկայացված խնդրի գոյության փաստման մասին:

Շարունակելով ոլորտը կարգավորող իրավադրույթների ուսումնասիրությունը՝ պետք է նշել, որ եթե անգամ ներկայացված խտրական վերաբերմունքը առկա չլիներ, և ՕՀԳ իրականացնող մարմինների աշխատակիցների նկատմամբ ևս կիրառելի լիներ օրենքի քննարկված իրավադրույթը, ապա դա միևնույն է խնդրի լուծում չէր լինի:

Ավելին, թեև մեջբերված հոդվածի առաջին մասը ուղղակիորեն չի վերաբերվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակիցներին, այն կիրառելի է նաև նրանց նկատմամբ՝ նկատի ունենալով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումը: Մասնավորապես, հիշյալ իրավադրույթի համաձայն՝

«Եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա)»:

Այս առումով, սակայն հարկավոր ենք համարում նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ գլուխը սահմանում է հանցավորությունը բացառող հանգամանքների, իսկ 11-րդ գլուխը նախատեսում է քրեական պատասխանատվությունից ազատելու դեպքերի սպառիչ ցանկը, որոնցից ոչ մեկում, սակայն, առկա չէ որևէ տեսակի դեպք, որը կարտացոլեր օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված երաշխիքը, ինչը անհրաժեշտ է դիտարկել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող քրեական օրենքի բաց:

Մասնավորապես, հարկավոր է արձանագրել, որ օպերատիվ-հետախուզական գործու-

նեությունը կարգավորող օրենքը պարունակում է քրեաիրավական հարաբերություններ կարգավորող իրավադրույթ, որը սակայն իր ընդունման պահից՝ 2007 թվականի հոկտեմբերի 22-ից, առ այսօր չի ընդգրկվել ՀՀ քրեական օրենսգրքում, ինչը պարտադիր է, նկատի ունենալով քրեաիրավական և սահմանադրական՝ օրինականության սկզբունքը:

ՀՀ Սահմանադրական դատարանը իր ՍԴՈ-1476 որոշմամբ հերթական անգամ անդրադարձել և զարգացրել է օրենքի բացի վերաբերյալ իր դիրքորոշումները, մասնավորապես նշելով.

«Իր բազմաթիվ որոշումներում Սահմանադրական դատարանն անդրադարձել է օրենսդրական բացի հիմնահարցերին (մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1056, ՍԴՈ-1143):

Վերահաստատելով եւ զարգացնելով օրենսդրական բացի վերաբերյալ իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, տվյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից.

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու եւ կիրառելու միջոցով.

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից.

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնա- կարգման հետեւանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական եւ բնականոն իրագործումը.

● ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆ Ը 125 2021

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ուղղությամբ գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված, իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»:

Օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցները իրենց ծառայողական պարտականությունները կատարելիս ողջամտորեն կարող են հայտնվել այնպիսի իրավիճակում, որի պայմաններում հանրորեն վտանգավոր որոշակի արարքների կատարումը վերջիններիս կողմից անխուսափելի է: Նմանօրինակ իրավիճակների առաջացման հնարավորությունը հաշվի առնելով՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների համար մի շարք երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, նախատեսված են քրեաիրավական երաշխիքներ:

Այսպես՝ հայաստանյան օրենսդիրը ընտրել է օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների աշխատակիցների և այդ մարմինների հետ համագործակցող անձանց համար քրեական պատասխանատվությունից ազատող իրավադրոյթ սահմանելու ճանապարհը, սակայն դրա հստակ իրավական մեխանիզմը չի նախատեսվել հայաստանյան օրենսդրությամբ: Իսկ, օրինակ, Ղազախստանի և Ուկրաինայի օրենսդիրները նույնաբովանդակ երաշխիքը սահմանել են այն թվելով արարքում հանցավորությունը բացառող հանգամանքների շարքին:

Այսպես՝ Ղազախստանի քրեական օրենսգրքի 35-րդ հոդվածով ամրագրվում է օպերատիվ-հետախուզական, հակահետախուզական միջոցառումների կամ գաղտնի քննչա-

կան գործողությունների իրականացումը որպես արարքում հանցավորությունը բացառող հանգամանք:

Ուկրաինայի քրեական օրենսգրքի 43-րդ հոդվածով սահմանվում է. կազմակերպված խմբի կամ հանցավոր համագործակցության հանցավոր գործունեության կանխարգելման կամ բացահայտման հատուկ խնդրի իրականացումը՝ որպես արարքում հանցավորությունը բացառող հանգամանք:

Լատվիայի օրենսդիրը ընտրել է մեկ այլ ճանապարհ, քրեական դատավարության օրենսգրքի 228-րդ հոդվածով սահմանել է հանցագործության կատարման նմանակում եզրույթը, դրանով իսկ բացառելով «հատուկ քննչական գործողությունների» կատարման ընթացքում իրավապահ մարմինների աշխատակիցների կողմից որոշակի գործողությունների կատարումը՝ որպես հանցագործություն որակելու հնարավորությունը:

Սակայն, ի տարբերություն թվարկված և մի շարք այլ պետությունների Հայաստանի Հանրապետությունը չի կատարել իր պարտավորությունը քրեաիրավական հարաբերությունները կարգավորող դրոյթը քրեական օրենսգրքով նախատեսելու ուղղությամբ, ինչը իր հերթին հանգեցրել է քրեական օրենքում բացի առաջացմանը:

Օրենսդրական բացի առկայությունը հաստատվում է նաև նրանով, որ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի, տվյալ դեպքում ՀՀ քրեական օրենսգրքում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված իրավադրոյթի արտացոլման, բացակայության հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը: Ակնհայտ է, որ օրենքի 13-րդ հոդվածով երաշխավորվող և նկարագրված արարքում հանցավորությունը բացառող հանգամանքի ամրագրված չլինելը ՀՀ քրեական օրենսգրքում հանդիսանում է իրավակարգավորման թերություն, այլ ոչ օրենսդրի կամք:

Օպերատիվ-հետախուզական գործունեությամբ զբաղվող անձի համար քրեական պատասխանատվությունից ազատվելու և իր կարգավիճակում գործելու ընթացքում համապա-

տասխան նորմատիվային պատվիրանների ամբողջական բացակայությունը ևս հաստատում է օրենսդրական բացի առկայությունը, որը, սակայն, իրավակիրառ պրակտիկայում հաղթահարման ենթակա չէ:

Արտասահմանյան երկների փորձը ուսումնասիրելով՝ պարզ է դառնում, որ նմանօրինակ իրավակարգավորումների նախատեսումը նպատակ է հետապնդում ապահովել իրավապահ մարմինների աշխատակիցների և իրավապահ մարմինների հետ համագործակցող անձանց անվտանգությունն՝ իրավական տեսանկյունից: Ուսումնասիրելով վերը թվարկված արտասահմանյան քրեական օրենսդրության մեջ տեղ գտած իրավական մեխանիզմները՝ հասկանալի է դառնում, որ համապատասխան իրավական ինստիտուտի ներդրումը նպատակ պետք է հետապնդի քրեաիրավական տեսանկյունից անձի համար որևէ տեսակի բացասական հետևանքի բացառումը, ընդհուպ մինչև քրեական գործով վարույթի կարճումը կամ քրեական հետապնդման դադարեցումը արդարացնող հիմքով:

Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշման՝ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու «արդարացնող» հիմքերը նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ կետերով և 2-րդ մասով:³

Նկատի ունենալով, որ օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի աշխատակցի կողմից քննարկվող պայմաններում հանրորեն վտանգավոր արարքի կատարման դեպքում առկա կարող են լինել և՛ հանցագործության դեպքը, և՛ հանցակազմը, և՛ առկա է ապացույցների անհրաժեշտ համակցությունը, որը հանգեցնում է նաև արարքում մեղավորությունը ապացուցելու համար պարտադիր ապացույցների բավարարության շեմի ապահովվածությանը: Ակնհայտ է դառնում, որ նման դեպքերում անձի նկատմամբ քրեական հետապնդումը պետք է ենթակա լինի դադարեցման, իսկ քրեական գործի վարույթը՝ կարճման ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, այն է վնաս պատճառած արարքը քրեական օրենքով պետք է համարվի իրավաչափ:

Այսինքն՝ ակնհայտ է, որ նկարագրված դեպքում խոսքը արարքում հանցավորությունը բացառող հանգամանքի մասին է: Մասնավորապես, քրեական օրենքով պետք է նախատեսվի արարքում հանցավորությունը բացառող նոր հանգամանք, որը իր բովանդակությամբ կարտահայտի օրենքի 13-րդ հոդվածի առաջին մասով սահմանված իրավադրույթը, որի ուժով էլ համապատասխան արարքի կատարմամբ պատճառված վնասը պետք է համարվի իրավաչափ:



³ Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0009/11/13 դատական գործով 13.09.2013 թվականի որոշումը:

ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության ՀՀ-ում Ինտերպոլի ԱԿԲ-ի ավագ օպերիվազոր,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԿՆԴԻՐՆԵՐ

Մտավոր սեփականության իրավունքի ճանաչման ու պաշտպանության արդյունավետ իրականացումը յուրաքանչյուր իրավական, կայացած և ժողովրդավար պետության առաջնային նպատակներից և խնդիրներից է: Այս իմաստով բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որտեղ սեփականության բոլոր ձևերն ընդհանրապես, և մտավոր սեփականության իրավունքը, մասնավորապես, հանդիսանում է սահմանադրական իրավունքի տարատեսակ, և դրա պաշտպանությունն ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ: Մասնավորապես, 43-րդ հոդվածը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն: Միաժամանակ Սահմանադրության 60-րդ հոդվածով սահմանվում է նաև.

«1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք»¹,

«7. Մտավոր սեփականությունը պաշտպանվում է օրենքով»²:

Նշված իրավունքի հետ կապված հարաբերությունները կարգավորելու համար ընդունվել են մի շարք օրենսդրական ակտեր, որոնցով սահմանվում է այդ իրավունքների ծագման, դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման հետ կապված հարցերը, սեփականության իրավունքի պաշտպանության տարատեսակ միջոցները, որոնց շարքում պետք է առանձնացնել այդ իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը: Հեղինակային և հա-

րակից իրավունքների պաշտպանությունը քրեաիրավական ներգործությունից կարևորվում է այնքանով, որ այն նշված իրավունքի դեմ ուղղված առավել վտանգավոր ոտնձգության տեսակ է, ինչն էլ իր հերթին ստիպում է պետությանն առավել արդյունավետ, գործուն և թիրախային մեթոդներ սահմանել և կիրառել: Պետության նմանատիպ գործունեության առաջնային փուլը պատշաճ օրենսդրական դրույթների և քրեաիրավական ներգործության միջոցների սահմանումն է քրեական օրենսդրության շրջանակներում: Այլ կերպ ասած՝ պետությունը նախ պետք է սահմանի, թե ինչ են իրենցից ներկայացնում հեղինակային և հարակից իրավունքները, և ինչպիսի հետևանքներ կարող են վրա հասնել այդ իրավունքների դեմ հանցավոր ոտնձգության համար:

Չնայած այն փաստին, որ սեփականության իրավունքը իրավունքի հնագույն ճյուղերից մեկն է, այնուամենայնիվ այս ոլորտը իրավունքի զարգացման տեսանկյունից դեռևս երիտասարդ և զարգացող ոլորտ է համարվում, քանի որ ժամանակի ընթացքում մտավոր սեփականության իրավունքի ճյուղի մեջ սկսել է առանձնանալ նախ որպես իրավունքի ենթաճյուղ, իսկ հետագայում՝ 18-րդ դարից սկսած, արդեն հանրային պահանջի գեներացման արդյունքում դարձել է իրավունքի գրեթե ինքնուրույն ճյուղ: Ճիշտ է, պատմական աղբյուրները վկայում են, որ ճյուղը սկսել է առանձնանալ դեռևս 15-րդ դարից սկսած³, ինչի համար հիմք է հանդիսացել Յոհաննես Գուտենբերգի կողմից կրկնօրինակող սարքի ստեղծումը, որը մուտք գործեց Անգլիա

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 125 2021

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունված՝ 06.12.2015թ., հոդված 60, մաս 1-ին, հղում՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>, վերջին դիտում՝ 28.06.2021թ.:
² Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, ընդունված՝ 06.12.2015թ., հոդված 60, մաս 7-րդ, հղում՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docID=102510>, վերջին դիտում՝ 28.06.2021թ.:
³ Տե՛ս, Historical Development Of Law Of Copyright, հղում՝ https://iiprd.wordpress.com/2020/08/22/historical-development-of-law-of-copyright/?utm_source=Mondaq&utm_medium=syndication&utm_campaign=LinkedIn-integration, վերջին դիտում՝ 28.06.2021թ.:

1483թ-ին, ինչից հետո Ռիչարդ 3-րդ արքայի կողմից ձեռագրերի և գրքերի ներմուծման արգելք դրվեց, այդպիսով հեղինակները սկսեցին իրենց աշխատություններն ուղարկել Անգլիա տպագրման նպատակով: Այն կատարվում էր արքայական թույլտվության հիման վրա, ինչի արդյունքում Անգլիան դարձավ տպագրման եվրոպական կենտրոն, իսկ 1661թ. և 1662թ. օրենսդրական ակտով Անգլիան որդեգրեց մոտեցում, որով միայն լիցենզավորում ստացած անձինք կարող էին տպագրել աշխատություններ: Այս երևույթը հետագայում անվանվեց «Copyright», որը ներկայումս հեղինակային իրավունքի անգլո-սաքսոնական և միջազգային անվանումն է: Չնայած անվանմանը՝ այնուամենայնիվ, այս ակտերը ուղղված չէին հեղինակի իրավունքների պաշտպանությանը: Դրանց բուն նպատակն էր տպագրողին (կրկնօրինակողին), որպիսին հանդիսանում էր պետությունը, ֆինանսական եկամուտ տրամադրելը⁴: Հետագայում արդեն հեղինակային իրավունքի առաջին նորմատիվ ակտը (ստատուտը) հանդիսացել է 1710 թվականին Մեծ Բրիտանիայի Պառլամենտի կողմից ընդունված «The British Statute of Anne 1710» կամ «The Copyright act 1710», որի լրիվ անվանումն է «An Act for the Encouragement of Learning, by vesting the Copies of Printed Books in the Authors or purchasers of such Copies, during the Times therein mentioned» (Տպագիր գրքերի պատճենները հեղինակներին կամ նման պատճենների գնորդներին՝ դրանում նշված ժամանակահատվածում փոխանցման միջոցով ուսումը խթանելու մասին օրենքը): Այս անվանումից երևում է, որ սկզբնական շրջանում հեղինակային իրավունքը վերաբերվում էր միայն գրքեր պատճենելուն, սակայն ժամանակի ընթացքում այն սկսեց ներառել ստեղծագործությունների առավել մեջ շրջանակ⁵:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում հեղինակային և հարակից իրավունքների ոլորտը կանոնակարգող հիմնական օրենսդրական ակտը 15.06.2006թ-ին ընդունված և 22.07.2006թ-ին ուժի մեջ մտած «Հեղինակային իրավունքի և

հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքն է, որով ընդհանուր և մանրամասն կերպով տրվում են քննարկվող իրավունքների բնութագրումը, սահմանում է ոլորտին առնչվող իրավահարաբերությունները կարգավորող դրույթները, իսկ դրանց նկատմամբ առավել հանրային վտանգավորություն ունեցող ոտնձգություններն արդեն իսկ քրեականացվել են ՀՀ քրեական օրենսգրքով, ինչն էլ իրավունքների պաշտպանության առավել խիստ միջոց է: ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի դիսպոզիցիայում նախատեսված է քրեաիրավական պատասխանատվություն հեղինակային կամ հարակից իրավունքները խախտելու համար:

Այն մասնավորապես սահմանում է.

1. Հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ հեղինակությունը յուրացնելը, ինչպես նաև առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը շահույթ ստանալու նպատակով տեսաձայնային մագնիսական կրիչի վրա ձայնագրելը, տարածելը և (կամ) վաճառելը, եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով:⁶

ՀՀ քրեական օրենսգրքի հոդվածը, ըստ կառուցվածքի և բովանդակության, բավականին մոտ է ՌԴ և նախկին ԽՍՀՄ մի շարք երկրների քրեական օրենքներով նախատեսված մոդելին: Իհարկե, առկա են մի շարք տարբերություններ, սակայն կառուցվածքային և ներառական իմաստով բավականին մոտ են:

Այսպես՝ ՌԴ քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածը վերնագրված է «Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը»: Այդ հոդվածի 1-ին մասով պատասխանատվություն է նախատեսվում հեղինակության յուրացման (պլագիատ) համար, եթե կատարված արարքը խոշոր վնաս է պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջը: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասով պատասխանատվություն է նախատեսվում հեղինակային և հարակից իրավունքների օբյեկտի ապօրինի օգտագործման համար, ինչպես նաև իրացնելու նպատակով ստեղծագոր-

⁴ EVOLUTION OF COPYRIGHT LAW IN UK, հղում՝ <https://www.mondaq.com/india/copyright/978858/historical-development-of-law-of-copyright>, վերջին դիտում՝ 28.06.2021թ.:

⁵ Տե՛ս, Statute of Anne, հղում՝ https://en.wikipedia.org/wiki/Statute_of_Anne, վերջին դիտում՝ 25.01.2021թ.:

⁶ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրք, ընդունված՝ 18.04.2003թ., հոդված 158, հղում՝ <https://www.arlis.am/documentview.aspx?docid=69646>, վերջին դիտում՝ 28.06.2021թ.:

ծությունների կոնտրաֆակտ նմուշներ կամ հնչյունագրեր ձեռքբերելու, պահելու, տեղափոխելու համար, որը կատարվել է խոշոր չափերով⁷: ՌԴ օրենսդրության մոտեցումն, ըստ էության, բավականին մոտ է ՀՀ օրենսդրական կարգավորումներին, բնական է՝ հաշվի առնելով երկու երկրների միջև տարիներ ի վեր եղած գիտական, տնտեսական, մշակութային կապերը: Ըստ էության՝ ռուսական մոտեցումը հայկականից տարբերվում է միայն «Պլագիատ» եզրույթի ներառմամբ, ինչն ինքնին որևէ կերպ էական կարգավորում չի նախատեսում: Պլագիատն ինքնին այլոց աշխատանքը սեփականի տեղ ներկայացնելն է, և արդեն իսկ տեղավորվում է սույն հանցակազմի տրամաբանության մեջ, ուստի, կարծում ենք, այն ունի միմիայն լրացուցիչ շեշտադրման նշանակություն⁸:

Նախկին ԽՍՀՄ երկրների քրեական օրենսգրքերում մոդելային և բովանդակային նմանությունների պատճառներից մեկը կարելի է նշել նաև ԱՊՀ անդամ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի 7-րդ լիագումար նիստին ընդունված «Անկախ պետությունների համագործակցության Մոդելային քրեական օրենսգրքի խորհրդատվական օրենսդրական ակտի» մասին բանաձևը⁹, որը միասնական մոտեցում է նախատեսում անդամ երկրների քրեական օրենսգրքերի ընդունման համար (ընդունվել է 17.02.1996թ., վերջին փոփոխությունները՝ 16.11.2006թ.):

Միաժամանակ պետք է նշել նաև, որ Եվրոպական միությունը նշված ոլորտը կարգավորելու համար ընդունել է Եվրոպական Միության համակարգչային ծրագրերի մասին դիրեկտիվը, որով իրականանում է համակարգչային ծրագրերի իրավական պաշտպանությունը: Այն ընդունվել է «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների պահպանության մասին» Հռոմի 1961թ.

միջազգային կոնվենցիայի դրույթների ներքո¹⁰: Սույն դիրեկտիվն ունի պարտադիր բնույթ ԵՄ անդամ երկրների համար, սակայն այն չի տալիս կոնկրետացումներ՝ դրանք թողնելով երկրների ազգային օրենսդրություններին, որոնցով էլ կոնկրետ նախատեսվում են դրույթներն ու դրանց խախտումների համար նախատեսված պատասխանատվության տեսակները:

Ուկրաինայի քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածով, ինչպես և ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված հանցակազմը, նույնպես վերնագրված է «Հեղինակային և հարակից իրավունքները խախտելը»: Այդ հոդվածի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանվում գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները, համակարգչային ծրագրերը և տվյալների պահոցներն ապօրինի վերարտադրելու, տարածելու, ինչպես նաև կատարումները, հնչյունագրերը, տեսաշարերը և հեռարձակվող հաղորդումներն ապօրինի վերարտադրելու, տարածելու, դրանք կրկնօրինակելու և տեսաերիզների ու ձայներիզների, դիսկետների, տեղեկատվության այլ կրիչների վրա տարածելու, կամկորդինգի, կարդչերինգի կամ հեղինակային և հարակից իրավունքների դիտավորյալ այլ խախտումների համար¹¹: Վերոգրյալ սահմանումից պարզ է դառնում, որ Ուկրաինայի օրենսդիր մարմինը հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության օբյեկտների համընդհանուր ընդունված տեսակների շարքում (գիտության, գրականության և արվեստի ստեղծագործությունները) առանձնակի շեշտադրում է կատարում նաև համակարգչային ծրագրերի և տվյալների պահոցների ապօրինի վերարտադրության ու տարածման, ինչպես նաև հեղինակային և հարակից իրավունքների դիտավորյալ այլ խախտումների համար: Այսպիսի մոտեցումը, կարծում ենք արդի ժամանակաշրջանի համար բավականին խրախուսելի է, քա-

⁷ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության քրեական օրենսգիրք, ընդունված՝ 13.06.1996թ., հղում՝ http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/b683408102681707f2702cff05f0a3025daab7ab/, վերջին դիտում՝ 28.06.2021թ.:

⁸ Տե՛ս Մարգարյան Հ.Վ., «Հեղինակային և հարակից իրավունքները խախտելու հանցատեսակի ընդհանուր քրեաիրավական բնութագիրը», ք.Երևան, «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2021թ., էջ 95-96:

⁹ Տե՛ս ԱՊՀ երկրների մոդելային քրեական օրենսգիրք, ընդունված՝ 17.02.1996թ., հղում՝ <http://docs.cntd.ru/document/901781490>, վերջին դիտում՝ 04.07.2021թ.:

¹⁰ Տե՛ս Computer Programs Directive հոդված, հղումը՝ https://en.wikipedia.org/wiki/Computer_Programs_Directive, վերջին դիտումը՝ 28.06.2021թ.:

¹¹ Տե՛ս Ուկրաինայի Հանրապետության քրեական օրենսգիրք, ընդունված՝ 05.04.2001թ., հղում՝ <https://zakon.rada.gov.ua/laws/show/2341-14?lang=ru#Text>, վերջին դիտում՝ 28.06.2021թ.:

նի որ հատուկ համակարգչային ծրագրերը այսպիսի մոտեցման դեպքում նույնպես ընկնում են հեղինակային և հարակից իրավունքների քրեաիրավական պաշտպանության տակ:

Միաժամանակ հարկ է անդրադառնալ նաև արդեն ընդունված ՀՀ նոր քրեական օրենսգրքին, որն ուժի մեջ է մտնելու 2022թ-ի հուլիսի մեկից: Նոր օրենսգրքում հեղինակային և հարակից իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը նախատեսվում է 220-րդ հոդվածով, որի դիսպոզիցիան մասնավորապես սահմանում է.

1. Հեղինակությունը յուրացնելը կամ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը կամ առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը իրացնելը, եթե դա խոշոր չափի վնաս է պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջը:

Ըստ էության՝ պետք է նշել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 158-րդ հոդվածի և նոր օրենսգրքի 220-րդ հոդվածի դիսպոզիցիաներում առկա են էական տարբերություններ՝ չնայած որոշ ձևակերպումների նմանություններին:

Այսպես՝ գործող քրեական օրենսգրքում սահմանվում է «...շահույթ ստանալու նպատակով տեսաձայնային մագնիսական կրիչի վրա ձայնագրելը, տարածելը և (կամ) վաճառելը, եթե այդ արարքը կատարվել է զգալի չափերով...», իսկ նոր քրեական օրենսգրքով նախատեսվում է հետևյալ ձևակերպումը. «...իրացնելը, եթե դա խոշոր չափի վնաս է պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջը...»: Նշվածից պարզ է դառնում, որ գործող քրեական օրենսգրքը նախատեսում է քրեական պատասխանատվություն պաշտպանվող առարկան **շահույթ ստանալու նպատակով** իրացնելու համար, սակայն այս դեպքում պետք է հաշվի առնել, որ հեղինակային և հարակից իրավունքները միմիայն գույքային իրավունքներ չեն, ինչի կապակցությամբ քննարկվող ոլորտում պետք է հաշվի առնել նաև ոչ գույքային իրավունքների խախտումները: Որպես պրակտիկ օրինակ՝ կարելի է նշել այն, որ ուրիշի հեղինակությունը յուրացնողն

այդ քայլով գուցե գույքային շահույթ չի ստանում (օրինակ՝ ինտերնետային կայքերում ֆիլմերի անվճար վերբեռնում և ցուցադրություն առանց իրավատիրոջ համաձայնության), սակայն դրանով նախ խախտվում է իրավատիրոջ իրավունքն այնքանով, որ վերջինս կարող էր դրա դիմաց ակնկալել գույքային որոշակի շահ: Բացի այդ, իրավատիրոջ հեղինակային ստեղծագործության տարածման միջոցով հնարավոր է դրա դիտելիության շնորհիվ ձեռք բերել որոշակի հայտնիություն, ինչը ներկայիս ժամանակաշրջանում պոտենցիալ գույքային օգուտ կարող է բերել տվյալ անհատին¹²: Նոր քրեական օրենսգրքով նախատեսված մոտեցումը նախատեսում է իրացումը անկախ նպատակից, ինչն, ի տարբերություն, գործող կարգավորումների չի սահմանափակում քրեաիրավական պաշտպանությունը, սակայն, այնուամենայնիվ, որոշակի խնդիրներ կարող է առաջացնել: Սա կարևոր է այնքանով, որ պետք է սահմանվի իրացնելու նպատակ, որով նկատելի կլինի հանցավոր արարք կատարողի միտումը: Դրա բացակայության դեպքում, կարծում ենք, արարքի քրեաիրավական որակումը կարող է թերի լինել: ՀՀ օրենսդրությունը այսպես, թե այնպես օրենսդրական պաշտպանության միջոցներ տրամադրում է հեղինակային և հարակից իրավունքների խախտումների ոլորտում, և քրեական օրենքում պետք է նախատեսել միայն քննարկվող իրավախախտումների առավել վտանգավոր տեսակները: Սույնով պայմանավորված, կարծում ենք, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում 220 հոդվածի բովանդակությունը պետք է ներառի «օգուտ ստանալու նպատակով» դրույթը՝ միաժամանակ սահմանելով այդ օգուտի չափը, ինչն ավելի լայն իմաստ ունի և վերոնշյալ խնդիրներից խուսափելու հնարավորություն կտա:

Մյուս կարևոր առանձնահատկությունը գործող և նոր օրենսգրքերի մեջ այն է, որ գործող կարգավորումներով սուբյեկտիվ կողմի իրացման սպառիչ ձևեր են նշվում. «...տեսաձայնային մագնիսական կրիչի վրա ձայնագրելը, տարածելը և (կամ) վաճառելը...»: Այս մոտեցումը, կարծում ենք, էականորեն սահմանափակում է քրեաիրավական պաշտպանությունը, քանի որ

¹² Տե՛ս Մարգարյան Հ.Վ., «Հեղինակային և հարակից իրավունքները խախտելու հանցատեսակի ընդհանուր քրեաիրավական բնութագիրը», ք.Երևան, «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2021թ., էջ 98-99:

արդի տեխնոլոգիական ժամանակաշրջանի հետ համահունչ չէ: Հասկանալի է, որ այս հոդվածի ընդունման ժամանակ քննարկվող իրավունքների խախտման ամենատարածված միջոցները տեսաձայնային, մագնիսական կրիչների վրա տարածումն ու վաճառքն էր, սակայն ներկայումս դա գրեթե ամբողջությամբ կորցնում կամ արդեն իսկ կորցրել է իր արդիականությունը, քանի որ ինտերնետի դերի և մասսայականության բարձրացումը, առավել դյուրին և արագ հնարավորություններ է տալիս տարածման ու վաճառքի համար:

Նոր քրեական օրենսգրքում սահմանվում է իրացումն առհասարակ, իսկ 220-րդ հոդվածի 2-րդ մասում արդեն իսկ որպես ծանրացնող հանգամանք է նախատեսվում համացանցի օգտագործումը: Այս մոտեցումն, իհարկե, գովելի է այնքանով, որ չի սահմանափակում քննարկվող իրավունքների քրեաիրավական պաշտպանությունը՝ կատարման շատ նեղ միջոցներ նախատեսելով, սակայն, հաշվի առնելով համացանցի հասանելիության աճող տեմպերն ու դրա հնարավորությունները, անհասկանալի է, ընդհանրական կերպով համացանցի միջոցով իրավախախտումը կատարելը ծանրացնող հանգամանք դասելու մոտեցումը: Կարելի էր համաձայնվել մոտեցման հետ, եթե համացանցի օգտագործումը՝ որպես ծանրացնող հանգամանք համարվեր, դրա օգտագործմամբ հաքերային հարձակման միջոցով քննարկվող իրավունքները խախտելու դեպքում:

Վերոշարադրյալի կապակցությամբ, կարծում ենք, առավել արդյունավետ կլինի հեղինակային և հարակից իրավունքները խախտելու հանցատեսակը նախատեսող հոդվածի դիսպոզիցիան կամ լրացնել «համացանցի միջոցով, կամ այլ եղանակով» դրույթով, կամ էլ առհասարակ չմանրամասնելով իրավախախտում կատարելու միջոցները, ձևակերպել հետևյալ խմբագրմամբ. «Հեղինակությունը յուրացնելը կամ հեղինակային կամ հարակից իրավունքի օբյեկտն ապօրինի օգտագործելը, կամ առանց հեղինակային իրավունքի կամ հարակից իրավունքների իրավատիրոջ համաձայնության նրա ստեղծագործությունը իրացնելն օգուտ ստա-

նալու նպատակով, եթե դա խոշոր չափի վնաս է պատճառել հեղինակին կամ այլ իրավատիրոջը»: Վերջին տարբերակն առավել ընդունելի է, քանի որ իրավունքի խախտումն առկա է անկախ դրա կատարման միջոցներից և ժամանակի ընթացում ենթակա է փոփոխությունների և զարգացումների, ուստի հարկ չկա դրա կատարման կոնկրետ և սպառիչ տեսակներով ծանրաբեռնելու հոդվածը¹³:

Հաշվի առնելով ներկա ժամանակաշրջանում գիտատեխնիկական առաջընթացը, համակարգչային տեխնոլոգիաների, տարբեր ծրագրային ապահովումների (ներառյալ բջջային հավելվածների) ինտեգրումը արդի կյանքի գրեթե ոլորտներում՝ տրամաբանական է համարվում այդ ոլորտի հետ կապված օրենսդրական թարմացումների և նոր դրույթների ներառումը ոլորտային օրենսդրական ակտերում: Դա հատկապես անհրաժեշտ է քրեաիրավական ոլորտը կանոնակարգող ակտերի դեպքում, քանզի հանցավորությունը մշտապես նորանոր մոտեցումներ և մեթոդներ է կիրառում հանցավոր գործունեություն իրականացնելու, ապօրինի եկամուտներ ստանալու և պատասխանատվությունից ու պատժից խուսափելու համար: Բացի այդ, համակարգչային ծրագրերի և բջջային հավելվածների ստեղծումը ինքնին արդեն իսկ կարող է համարվել հեղինակային և հարակից իրավունքների առարկա, և դրանց օրենսդրական պաշտպանությունը նույնպես կարևորագույն խնդիր է, հատկապես հաշվի առնելով ՀՀ-ում տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման միտումները: Նշվածի կապակցությամբ օրենսդրական և հատկապես քրեական օրենսդրությամբ պաշտպանության միջոցների ներառումը համապատասխան օրենքներում և օրենսգրքերում ուղղակի խթան կհանդիսանա ոչ միայն ոլորտի կայուն զարգացման համար, այլ նաև դեպի ՀՀ ներդրումային հոսքերի ավելացմանը, քանզի յուրաքանչյուր գործարարի կամ ստեղծագործ անհատի համար կարևոր է, որպեսզի իր ստեղծած արժեքները լինեն պաշտպանված պետության կողմից:

¹³ Տե՛ս Մարգարյան Հ.Վ., «Հեղինակային և հարակից իրավունքները խախտելու հանցատեսակի ընդհանուր քրեաիրավական բնութագիրը», ք.Երևան, «Օրենքի պատվար» գիտամեթոդական ամսագիր, 2021թ., էջ 99-100:

ՆԵԼԼԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի
Իրավաբանական վարչության
Իրավական խորհրդատվության և
զարգացման բաժնի պետ, փաստաբան

ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆՁՅԱՆ

Իրավաբանական գիտությունների թեկնածու,
Փրիորիթի իրավաբանական գրասենյակի
հիմնադիր-տնօրեն, փաստաբան

ԻՐԱԿԱՆ ՇԱՅԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՂԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՔՑՆԵԼՈՒ ՅԱՆՑԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրական շահառուի վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելը կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելը վերտառությամբ իրավական նորմը զետեղված է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 216.1-ում և ՀՀ քրեական օրենսդրության նորամուծություններից է: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այս նորմը դեռևս վերջերս է ընդգրկվել ՀՀ քրեական օրենսգրքում, դրա վերաբերյալ առայժմ գոյություն չունի ձևավորված իրավական պրակտիկա: Ուստի, սույն հոդվածի շրջանակներում կատարված քրեաիրավական վերլուծությունը կարող է նպաստել քննարկվող հանցակազմի գործնական կիրառմանը՝ ապահովելով վերջինիս տեսական հիմքը:

Եվ այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 216.1 հոդվածի առաջին մասը պատասխանատվություն է սահմանում *Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմին իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացրած անձի կողմից հայտարարագրում կեղծ տվյալ ներկայացնելու կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելու համար*: Իսկ նույն հոդվածի երկրորդ մասով պատասխանատվություն է նախատեսված Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական շահառուի կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձին իրական շահառուի վերաբերյալ կեղծ տվյալ ներկայացնելու կամ ներկայացման ենթակա տվյալը թաքցնելու կամ նրա կողմից սույն հոդվածի 1-ին մասում նշված անձի ներկայացրած հարցմանն օ-

րենքով նախատեսված ժամկետում չպատասխանելու համար:

Մեր համոզմամբ՝ ուսումնասիրվող իրավական նորմի ընդգրկումը քրեական օրենսդրության մեջ միանգամայն արդարացված և տեղին է, պայմանավորված նրանով, որ քննարկվող հոդվածով նախատեսված գործողությունները որպես կանոն նպատակ են հետապնդում նպաստել տնտեսական բնույթի այլ հանցագործությունների (հարկը, տուրքը կամ պարտադիր այլ վճարը չվճարելը, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքն օրինականացնելը և այլն) կատարմանը կամ թաքցնել արդեն իսկ կատարված հանցանքները: Փաստորեն, այս հոդվածի ներմուծումը որոշ դեպքերում նպաստում է կոնկրետ հանցատեսակների կանխարգելմանը, իսկ որոշ դեպքերում էլ՝ դրանց բացահայտմանը:

Հիշատակված իրավական նորմը նախատեսված է ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 22-ում, ուստի այս և ՀՀ քրեական օրենսգրքի գլուխ 22-ում զետեղված մյուս հանցակազմերի տեսակային օբյեկտը համարվում են այն հասարակական հարաբերությունները, որոնք առաջանում են ՀՀ-ում նորմալ տնտեսական գործունեության ընթացքում՝ նյութական արժեքների արտադրության բաշխման, փոխանակման և սպառման, ինչպես նաև ծառայությունների մատուցման բնագավառում: Հեղինակներից շատերը, մեր կարծիքով իրավացիորեն, նշում են, որ քննարկվող հանցակազմի (հարկ է նշել, որ նմանաբովանդակ իրավական նորմ

¹ Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք: հատուկ մաս: Երևան, 2012, էջ 411:

առկա է նաև ՌԴ քրեական օրենսգրքում՝ հոդված 170.1) անմիջական օբյեկտը նորմատիվ իրավական ակտերով սահմանված իրավաբանական անձանց պետական գրանցման կարգն է²: Ինչպես հայտնի է, հանցագործության օբյեկտի հետ սերտորեն կապված է հանցագործության առարկան: Քննարկվող նորմով նախատեսված արարքի առարկան հայտարարագրում ներկայացված իրական շահառուների վերաբերյալ տվյալներն են: Այդուհանդերձ, Քրեական օրենսգրքի խնդրո առարկա հոդվածում չի մատնանշվում, թե իրական շահառուների վերաբերյալ ինչպիսի տվյալների մասին է խոսքը, և ովքեր են համարվում իրական շահառուներ: Հարցը նրանում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 216.1 հոդվածը բլանկետային նորմ է, և հետևաբար վերոնշյալ հարցերի պատասխանները գտնվում են այլ իրավական ակտերում, այն է. «Իրավաբանական անձանց պետական գրանցման իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» (այսուհետ՝ Գրանցման օրենք) և «փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքներում:

Այսպես՝ իրավաբանական անձանց պետական գրանցման իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին օրենքի հոդված 60.1-ի 1-ին մասի համաձայն՝ Սույն օրենքի իմաստով՝ իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափանիշներով իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը: Այսինքն՝ իրական շահառուի հասկացությունն էլ տրված է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին օրենքում, որի հոդված 3-ի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ իրական շահառուն ֆիզիկական անձ է,

որի անունից կամ օգտին հաճախորդն իրականում գործում է, և (կամ) որն իրականում (փաստացի) վերահսկում է հաճախորդին կամ այն անձին, որի անունից կամ օգտին գործարքը կատարվում է կամ գործարար հարաբերությունը հաստատվում է: Իրավաբանական անձի (բացառությամբ տրաստի կամ օտարերկրյա օրենսդրությամբ իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող այլ իրավաբանական կազմավորման) իրական շահառու է համարվում այն ֆիզիկական անձը, որը՝

ա. ուղղակի կամ անուղղակի կերպով տիրապետում է տվյալ իրավաբանական անձի՝ ձայնի իրավունք տվող բաժնեմասերի (բաժնետոմսերի, փայերի) քսան և ավելի տոկոսին կամ ուղղակի, կամ անուղղակի կերպով ունի քսան և ավելի տոկոս մասնակցություն իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում,

բ. տվյալ իրավաբանական անձի նկատմամբ իրականացնում է իրական (փաստացի) վերահսկողություն այլ միջոցներով,

գ. հանդիսանում է տվյալ իրավաբանական անձի գործունեության ընդհանուր կամ ընթացիկ ղեկավարումը իրականացնող պաշտոնատար անձ այն դեպքում, եթե առկա չէ սույն կետի «ա» և «բ» ենթակետերի պահանջներին համապատասխանող ֆիզիկական անձ»:

Մեր կարծիքով իրական շահառուի վերոգրյալ ձևակերպումը բավարար հստակ չէ:

Մինչև ձևակերպմանը անդրադառնալը նշենք, որ իրական շահառուի հասկացությունը առաջինը տվել է Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խումբը (ՖԱԹՖ)³, որը միջկառավարական անկախ մարմին է և մշակում է համաշխարհային ֆինանսական համակարգը փողերի լվացումից, ահաբեկչության ֆինանսավորումից և զանգվածային ոչնչացման զենքի տարածման ֆինանսավորումից պաշտպանելու քաղաքականություններ, սատարում է դրանց իրագործմանը: ՖԱԹՖ-ը 2003 թվականին սահմանեց իրական շահառուների վերաբերյալ ստանդարտներ, որոնք էլ ավելի ու-

² Н.Е.Крылова, Б.М. Леонтьев, некоторые вопросы уголовной ответственности за фальсификацию единого государственного реестра юридических лиц, реестра владельцев ценных бумаги системы депозитарного учета: Вест.Моск. Ун-та. Цер 11. Право,2013, N 1, ст. 22.

³ <https://www.fatf-gafi.org/publications/methodsandtrends/documents/best-practices-beneficial-ownership-legal-persons.html>

ժեղացվեցին, հստակեցվեցին և զարգացվեցին ՖԱԹՖ-ի կողմից 2012 թվականին: Չնայած երկրներում առկա կարգավորումների՝ ՖԱԹՖ-ը ևս գնահատում է, որ դեռևս շատ երկրների համար դրանց ներմուծումն ու իրագործումը իրենից ներկայացնում են մի շարք մարտահրավերներ, այդ թվում տուգանքների և սանկցիաների առումով⁴:

ՖԱԹՖ-ը փաստում է, որ իրական շահառուների բացահայտումը, մոնիտորինգը և պահպանումը կարևոր է փողերի լվացման դեմ պայքարի տեսանկյունից, և երկրները պետք է հստակ իմպլեմենտացնեն իրենց օրենսդրությունը՝ ապահովելու համարժեք, ստույգ և արդիական տվյալների ստացումը:

Եթե միջազգային ստանդարտները կարող են լինեն ընդհանրական, լայն և սկզբունքի տեսքով, ապա մեր կարծիքով դրանց ազգային օրենսդրության իմպլեմենտացումը պետք է լինի հստակ, ինչը ներկա կարգավորմամբ առկա չէ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Գրանցման օրենքի հոդված 3-ի 1-ին մասի կետ 14-ի և ենթակետում օգտագործված «*նուղակի կամ անուղակի կերպով տիրապետել*» կամ «*նուղակի կամ անուղակի ունի*» բառակապակցություններին: Այսպիսի ընդհանրական ձևակերպումները, մեր կարծիքով կարող են խնդիրներ առաջացնել իրավակիրառ պրակտիկայում՝ հատկապես ապացուցման գործընթացում: Կարծում ենք՝ Օրենսդիրը անուղակի տիրապետել և ունենալ արտահայտությունների տակ նկատի է ունեցել այն դեպքերը, երբ կազմակերպության իրավաբանական (տիտղոսային) և փաստացի (իրական) տիրապետող անձինք չեն համընկնում, այսինքն՝ տարբեր անձինք են: Այդ իսկ պատճառով, կարծում ենք՝ վերը բերված հոդվածում *նուղակի կամ անուղակի բառակապակցության* փոխարեն ավելի նպատակահարմար կլինի օգտագործել իրավաբանորեն կամ փաստացի բառակապակցությունը:

Քննության առարկա նորմի դիսպոզիցիայի վերլուծությունից պարզ է դառնում, որ դրանով նախատեսված արարքը հնարավոր է կատարել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Ընդ որում, անգործությամբ հնարավոր է կատարել սույն հոդվածի երկրորդ

մասով նախատեսված օրենքով նախատեսված ժամկետում հարցմանը չպատասխանելուն վերաբերող արարքը:

Գործնական կարևոր նշանակություն ունի այն հարցը, թե կոնկրետ ինչպիսի տեղեկություններ կեղծելու կամ չներկայացնելու համար անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության: Այսպես՝ **Գրանցման օրենքի 60.30 հոդվածով նշվում է, որ իրավաբանական անձը պետք է ներկայացնի՝**

1) իրավաբանական անձի անունից հայտարարագիրը ներկայացնող անձի վերաբերյալ (անունը, ազգանունը և պաշտոնը)։

2) իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման կամ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրման (այսուհետ՝ ցուցակման) վերաբերյալ։

3) իրավաբանական անձն ամբողջությամբ վերահսկող իրավաբանական անձի բաժնետոմսերի ցուցակման վերաբերյալ, ցուցակված բաժնետոմսերով իրավաբանական անձի վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը), ինչպես նաև այդպիսի իրավաբանական անձի մասնակցության ծավալների վերաբերյալ։

4) իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում պետության, համայնքի կամ միջազգային կազմակերպության մասնակցության ծավալների վերաբերյալ։

5) իրավաբանական անձի իրական շահառուների վերաբերյալ (անունը, ազգանունը, քաղաքացիությունը, ծննդյան ամսաթիվը, անձը հաստատող փաստաթղթի տվյալները, ՀԾՀ, բնակության (հաշվառման) վայրը, կապի միջոցները՝ առկայության դեպքում, իրական շահառու դառնալու ամսաթիվը)։

6) անձի իրական շահառու հանդիսանալու հիմքերի վերաբերյալ և իրավաբանական անձին առանձին կամ իր հետ փոխկապակցված ֆիզիկական կամ իրավաբանական անձի հետ համատեղ վերահսկելու վերաբերյալ։

7) միջանկյալ իրավաբանական անձանց վերաբերյալ (իրավաբանական անձի պետական գրանցման տվյալները և դրա գործադիր մարմնի ղեկավարի անունը և ազգանունը):

⁴ <https://www.fatf-gafi.org/media/fatf/documents/Best-Practices-Beneficial-Ownership-Legal-Persons.pdf>, էջ 13-16

Նշված տվյալները կեղծելու կամ այդ տվյալները թաքցնելու համար է նախատեսված քրեական պատասխանատվություն:

Այնուամենայնիվ, կարծում ենք, որ թե՛ Գրանցման օրենքի, թե՛ քրեական օրենսգրքի հոդված 216.1-ի կիրառման արդյունավետությանը էականորեն կնպաստի «իրավաբանական անձին վերահսկող իրավաբանական անձի», «իրական շահառու հանդիսանալու հիմք» եզրույթների հստակեցումը գրանցման օրենքում:

Առանձին վերլուծության ենթակա է դիսպոզիցիայում նշված «Իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող իրավասու պետական մարմին» արտահայտությունը:

Ինչպես գիտեք, Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց գրանցում իրականացնում է ՀՀ արդարադատության նախարարության կազմում գործող իրավաբանական անձանց պետական գրանցում, պետական մարմինների, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառում իրականացնող մարմինը՝ գործակալությունը և ՀՀ կենտրոնական բանկը՝ ֆինանսական որոշ կազմակերպությունների համար: Եթե միանշանակ է, որ իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնողը գործակալությունն է, ապա ֆինանսական կազմակերպությունների համար որևէ օրենքով սահմանված չէ, որ ՀՀ կենտրոնական բանկն իրականացնում է այդ ընկերությունների **պետական** գրանցում:

Բացի նշվածից, համակողմանի պատկերացում ունենալու համար նշենք, որ Գրանցման օրենքով սահմանվել է, որ իրական շահառուների վերաբերյալ 12.1 գլուխը չի տարածվում Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց վրա: Կենտրոնական բանկի կողմից գրանցվող իրավաբանական անձանց իրական շահառուների բացահայտման, գրանցման և տվյալների արժանահավատության ապահովման հետ կապված հա-

րաբերությունները կարգավորվում են այդ իրավաբանական անձանց գործունեությունը կարգավորող օրենսդրությամբ: Միևնույն փաթեթով փոփոխությունների են ենթարկվել նաև Կենտրոնական բանկի կողմից գրանցվող ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող բոլոր օրենքները, որոնցով նշվում է, որ համապատասխան ֆինանսական կազմակերպությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափանիշներով իրական շահառու հանդիսացող անձանց վերաբերյալ տեղեկություններ ներկայացնել պարտավոր է Կենտրոնական բանկ՝ իր գործունեությունը կարգավորող օրենքով և Կենտրոնական բանկի խորհրդի սահմանած նորմատիվ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան: Այսինքն, ինչպես տեսնում ենք, դեռևս սահմանած չէ պահանջ, որ ֆինանսական կազմակերպությունը պարտավոր է ներկայացնել հայտարարագիր:

Այսպիսով՝ հաշվի առնելով նշված վերլուծությունը. փաստում ենք, որ քրեաիրավական նշված նորմը ֆինանսական կազմակերպությունների մասով չի կարող կիրառվել:

Անդրադառնալով սույն հանցակազմի սուբյեկտին՝ ցանկանում ենք ընդգծել, որ մեր համոզմամբ այն հատուկ է: Սակայն իրավաբանական գրականության մեջ առկա են կարծիքներ, ըստ որոնց, տվյալ արարքի սուբյեկտ կարող է համարվել ցանկացած անձ, ով կեղծ տվյալներ է ներկայացրել պետական գրանցում իրականացնող մարմնին⁵: Կարծում ենք՝ հանցակազմի սուբյեկտի հետ կապված վերոգրյալ մոտեցումը հիմնավոր համարել չի կարելի, քանի որ տվյալ հանցագործության սուբյեկտ կարող է համարվել ոչ թե ցանկացած անձ, որը կեղծ տվյալներ է ներկայացրել համապատասխան պետական մարմին, այլ այն անձը, ում վրա օրենքով նման տեղեկություններ ներկայացնելու պարտականություն է դրված: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 216.1-ի 1-ին մասը պատասխանատվություն է սահմանում *հայտարարա-*

⁵ О.Ю. Исаев. Уголовно-правовая характеристика фальсификации единого государственного реестра юридических лиц, реестра владельцев ценных бумаг и системы депозитарного учета. Вестник казанского юридического института, N 3(13), 2013, ст. 4.

րագիր ներկայացրած անձի համար, իսկ Գրանցման օրենքով նախատեսված է այն անձանց շրջանակը, ովքեր պարտավոր են հայտարարագիր ներկայացնեն: Այդ օրենքի 60.3 հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գրանցված **իրավաբանական անձը** պարտավոր է սույն օրենքով նախատեսված պատշաճ ուսումնասիրության արդյունքներով գործակալություն ներկայացնել իր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 216.1-ի 2-րդ մասն էլ պատասխանատվություն է սահմանում Իրավաբանական անձի մասնակցի կամ իրական շահառուի համար: Իրական շահառուի հասկացությունն էլ, ինչպես արդեն վերը նշել ենք, տրված է Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքում: Փաստորեն, այս դեպքում էլ հանցագործության սուբյեկտ կարող են համարվել միայն իրավաբանական անձի մասնակիցները և իրական շահառուները: Այսինքն, ամեն դեպքում, տվյալ հանցակազմի սուբյեկտը հատուկ է և նրանց շրջանակը, ինչպես նշեցինք վերևում, սահմանված է ՀՀ օրենսդրությամբ, իսկ այդ շրջանակից դուրս որևէ այլ անձ սույն հոդվածով չի կարող ենթարկվել քրեական պատասխանատվության:

Քննարկվող հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանով նախատեսված արարքը հնարավոր է կատարել ինչպես դիտավորությամբ, այնպես էլ անզգուշությամբ: Մինչդեռ, մեր համոզմամբ, ուսումնասիրվող արարքի անզգուշությամբ կատարելու համար քրեական պատասխանատվության նախատեսումը արդարացված չէ: Բանն այն է, որ խնդրո առարկա հոդվածով նախատեսված գործողությունների անզգուշությամբ կատարելը չունի հանրային վտանգավորության բավարար մակարդակ քրեորեն պատժվելու համար: Իսկ, ինչպես հայտնի է արարքի քրեականացման կարևորագույն հատկանիշներից մեկը՝ արարքի հանրային վտանգավորության աստիճանն է, ինչի վերաբերյալ քրեագետները, կարելի է ասել, միակարծիք են⁶: Մեր տեսակետը առավել հիմ-

նավոր է թվում դիտարկվող արարքը տնտեսական գործունեության դեմ ուղղված մեկ այլ հանցագործության (հարկը, տուրքը և պարտադիր այլ վճարը չվճարելը՝ հոդված 205) հետ համեմատական վերլուծության արդյունքում: Մասնավորապես, հոդված 205-ի 1-ն մասը պատասխանատվություն է սահմանում օրենքով սահմանված հաշվետվությունում, հաշվարկում, հայտարարագրում կամ հարկման հիմք հանդիսացող՝ հարկը, տուրքը, պարտադիր այլ վճարը հաշվարկելու կամ վճարելու պարտավորություն առաջացնող պարտադիր այլ փաստաթղթում **ակնհայտ** կեղծ տվյալ մտցնելու համար: Հոդվածի դիսպոզիցիայի շարադրանքից պարզ է, որ անձը կարող է ենթարկվել քրեական պատասխանատվության միայն ակնհայտ կեղծ տվյալ մտցնելու համար, այսինքն՝ այնպիսի տվյալ, որի կեղծ լինելը իր համար հայտնի է: Փաստորեն, հոդված 205-ով նախատեսված արարքը հնարավոր է կատարել միայն ուղղակի դիտավորությամբ: Հատկանշական է նաև այն, որ հոդված 205-ի սանկցիան ավելի խիստ է քան, հոդված 216.1-ինը, ինչը նշանակում է՝ հոդված 205-ով նախատեսված արարքը օժտված է առավել բարձր հանրային վտանգավորության աստիճանով: Այս ամենից հետո ավելի անհիմն է թվում քննարկվող արարքը անզգուշությամբ կատարելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը: Այդպիսի արարքը, մեր կարծիքով, իր հանրային վտանգավորության աստիճանով համապատասխանում է վարչական իրավախախտմանը և կարող է նախատեսվել վարչական իրավախախտումների մասին օրենսգրքում: Իսկ քրեական օրենսգրքի հոդված 216.1-ում կեղծ տվյալ բառակապակցությունից առաջ անհրաժեշտ է ավելացնել ակնհայտ բառը, ինչը թույլ կտա սույն հոդվածը կիրառել միայն այն դեպքում, երբ արարքը կատարվել է ուղղակի դիտավորությամբ: Սրանով առկա խնդիրը կարելի է լուծված համարել:

Մեր կողմից դիտարկվող հանցագործության պահը որոշելու համար անհրաժեշտ է պարզել թե ինչպիսին է հանցակազմի օբյեկտիվ կողմի կառուցվածքը, այսինքն՝ այս հան-

⁶ Нечаев А.Д. Концептуальные основы и теоретическое моделирование криминализации и декриминализации: автореф. Дисс. Кнд. Юрид. Наук. Саратов, 2017, ст. 12.

ցակազմը նյութական, թե ձևական է: Ձևական հանցակազմ ընդունված է համարել այն հանցակազմը, որի օբյեկտիվ կողմի կառուցվածքի մեջ մտնում է հանցավոր արարքը՝ գործողության կամ անգործության եղանակով⁷: Այսինքն՝ ձևական կոչվում են այն հանցակազմերը, որոնց դիսպոզիցիայում հանրորեն վտանգավոր հետևանքներ նախատեսված չեն: Հետևաբար, հոդված 216.1-ով նախատեսված արարքը ավարտված է համարվում դրանով նախատեսված գործողության (անգործության) կատարման պահից, այսինքն՝ կեղծ տվյալներ ներկայացնելու, տվյալները թաքցնելու կամ սահմանված ժամկետում հարցմանը չպատասխանելու պահից քննարկվող արարքը համարվում է ավարտված հանցագործություն: Ընդ որում, հարց-

մանը չպատասխանելու դեպքում հանցագործության ավարտման պահ պետք է համարել օրենքով սահմանված ժամկետին հաջորդող օրը:

Այսպիսով,՝ ինչպես նշվեց, հոդվածի վերլուծությունում, հանցակազմի կիրառումը մեր կարծիքով իրենից ներկայացնում է բարդություններ, որոնք հնարավոր է հաղթահարման ոչ միայն գիտական վերլուծություններ իրականացնելով, այլ նաև միասնական կիրառություն ապահովող ձեռնարկների, մեթոդական ուղեցույցների հրապարակմամբ՝ ոչ միայն իրավապահ մարմինների, այլ նաև իրավաբանական անձանց, նրանց մասնակիցների ու իրական շահառուների համար:



⁷ Красовская О.Ю. состав преступления: учебное пособие. Саратов: Изд-во ФГБОУ ВО «Саратовская государственная юридическая академия», 2016. ст. 15.

ՆԱՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ԵՊՀ, Իրավագիտության ֆակուլտետ, Իրավագիտության մագիստրոս,
 ՀՀ ԱՆ քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի
 քաղաքականության մշակման վարչության գլխավոր մասնագետ

**ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ՝ ՈՐՊԵՍ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
 ՅԱՐԿԱԴՐԱՆՔԻ ՄԻՋՈՑԻ ՈՐՈՇ ՅԻՄՆԱՅԱՐՑԵՐ**

Քրեական վարույթի մասնակիցները ոչ միայն ունեն դատավարական իրավունքներ, այլև կրում են մի շարք դատավարական պարտականություններ: Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՔԴՕ) 59-րդ, 63-րդ, ինչպես նաև 65-րդ հոդվածներում տուժողի, կասկածյալի, մեղադրյալի համար, ի թիվս այլ պարտականությունների, նշվում է, որ այս մասնակիցները պարտավոր են ներկայանալ վարույթն իրականացնող մարմնի կանչով: Այն դեպքում, երբ վարույթի մասնակիցները կամավոր չեն կատարում իրենց պարտականությունները, դրանք կատարվում են հարկադրաբար: Այս առնչությամբ գիտնական Ի. Լ. Պետրուխինը նշում է հետևյալը. եթե անձը չի կատարում օրենքով նախատեսված որևէ պարտականություն, ապա պետք է դիմել հարկադրանքի, այն է ստիպել վարույթի մասնակցին իր կամքին հակառակ կատարել համապատասխան գործողություն (բերման ենթարկել, հարկադրաբար տեղավորել բժշկական հաստատություն և այլն) կամ կիրառել այնպիսի միջոցներ, որ վարույթի մասնակիցը չխոչընդոտի քննիչին՝ կատարելու համապատասխան դատավարական գործողությունը (զննություն, քննում, փորձաքննություն, քննչական փորձարարություն կատարելիս դիմադրությունը հաղթահարելը)¹:

Բերման ենթարկելը դատավարական հարկադրանքի միջոց է, որը կիրառվում է օրենքով

նշված դատավարության այն մասնակցի նկատմամբ, ով չի կատարել իր դատավարական պարտականությունը²: Դատավարագիտության մեջ բերման ենթարկելն առավելապես դիտարկվում է որպես դատավարական պատասխանատվության (սանկցիայի) միջոց, որը կիրառվում է դատավարական իրավախախտման դեպքում³: Այն իրավավերականգնող պատասխանատվության միջոց է, քանի որ կոչված է ապահովելու պարտականության հարկադիր կատարումը և վերականգնելու քրեական դատավարության օրինականության ռեժիմը, վերացնելու քրեական դատավարության խնդիրների իրականացմանը խոչընդոտող հանգամանքները⁴:

Այս համատեքստում հարկ է նշել, որ ըստ ՔԴՕ-ի, բերման ենթարկելն⁵ ընդգրկված է «Դատավարական հարկադրանքի այլ միջոցները» վերտառությամբ 19-րդ գլխում և համարվում է դատավարական հարկադրանքի այլ միջոց: Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծի⁶ (այսուհետ՝ Նախագիծ) կարգավորումներում այն ընդգրկված է «Դատավարական հարկադրանքի միջոցները» վերտառությամբ բաժնի «Դատավարական սանկցիաները» 17-րդ գլխում: Բացի դրանից, Նախագծում «բերման ենթարկել»-ը վերանվանվել է «վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնել»⁷: Հարկ է նշել, որ դատավարական սանկցիանե-

¹ **Петрухин И. Л.** Свобода личности и уголовно-процессуальное принуждение. Общая концепция. Неприкосновенность личности. Отв. ред.: Михайловская И. Б. М.: Наука, 1985, ст. 68.
² Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Մաս 1, Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016, էջ 555-556:
³ Տե՛ս **Булатов Б. Б., Николук В.В.** Меры уголовно-процессуального принуждения (по главе 14 УПК России). М.: Изд. Спарк, 2003, ст. 52-53.
⁴ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, Մաս 1, Հեղ. խումբ, գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016, էջ 556:
⁵ «Բերման ենթարկել» նախատեսված է ոչ միայն քրեական, այլև քաղաքացիական ու վարչական դատավարություններում:
⁶ Երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2021 թվականի հունիսի 30-ին:
⁷ Նախագծի ավելի վաղ տարբերակում այս նույն հարկադրանքի միջոցը ճյուղավորվել և ստացել էր 2 տեսակի

● ՕՐԻՆԱԿԱՆ ՈՒԹՅՈՒՆ № 125 2021

րը վարույթի իրականացման արդյունավետության հիմնական և բնականոն ընթացքի երաշխիքն են, որոնց լիարժեք իրացման տեսանկյունից խիստ կարևորվում է վարույթի թե՛ հանրային, թե՛ մասնավոր մասնակիցների և թե՛ վարույթին օժանդակող անձանց կողմից պատշաճ վարքագծի դրսևորումը⁸: Գաղտնիք չէ, որ Նախագծի համակարգային առանձնահատկություններից մեկն այն է, որ որակապես նոր մակարդակի է բարձրացված և Նախագծի բազմաթիվ դրույթներում, ընդհուպ սկզբունքի ձևով (29-րդ հոդված՝ ոչ իրավաչափ վարքագծի արգելք) իր արտացոլումն է ստացել քրեադատավարական էթիկան: Հենց վկայակոչված սկզբունքն է ընկած դատավարական հարկադրանքի այս միջոցի ակունքներում: Այն թույլ չի տալիս վարույթի մասնակիցների կողմից իրենց իրավունքների այնպիսի չարաշահում, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին (Նախագծի 29-րդ հոդվածի 2-րդ մաս): Ավելին, նույն սկզբունքը վարույթի մասնավոր մասնակիցների և օժանդակող անձանց համար նախատեսում է հիմնարար պարտականություն, ըստ որի, նրանք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն (Նախագծի 29 հոդվածի 1-ին մաս)⁹:

ՔԴՕ-ի 153-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բերման ենթարկելը առանց հարգելի պատճառի քննության չներկայացող կասկածյալին, մեղադրյալին, ամբաստանյալին, դատապարտյալին, վկային և տուժողին հարկադրաբար քրեական վարույթն իրականացնող մարմին ներկայացնելն է նրա նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված համապատասխան դատավարական գործողություններ կատարելու համար, որը կարող է զուգորդվել բերման ենթարկվող անձի իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակմամբ: Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝ բերման ենթարկելը կատարվում է վարույթն իրականացնող հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա: Բերման ենթարկելու մասին որոշումը կատարում է հետաքննության մարմինը՝ օրենքով սահմանված կարգով:

Նշված նորմի ձևակերպումից հետևում է, որ դատավարական հարկադրանքի նշված միջոցը կիրառվում է. ա) հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի պատճառաբանված որոշման հիման վրա, բ) սահմանափակ թվով անձանց նկատմամբ (կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարտյալ, տուժող, վկա), գ) առանց հարգելի պատճառի քննության չներկայանալու հիմքով, դ) օրենքով նախատեսված դատավարական գործողությունների կատարումն ապահովելու նպատակով:

Ինչպես վերը նշվեց, բերման ենթարկելու որոշում կայացնելու իրավասություն ունեն հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, ինչպես նաև դատարանը: Մինչդեռ վարույթում նման իրավասությամբ օժտված են հետաքննության մարմինը, քննիչն ու դատախազը, իսկ դատական քննության ընթացքում այդպիսի իրավասություն ունի դատարանը: Այս առումով նշենք, որ հետաքրքիր դրույթ է ամրագրված Վրաստանի քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Վրաստանի ՔԴՕ), որի՝ «Ներկայանալու պարտականությունը, բերման ենթարկելը» վերտառությամբ հոդ-

դրսևորում՝ դատավարական սանկցիաների ձևով, այն է՝ 1. կարճաժամկետ ձերբակալում (անձի ազատության սահմանափակմամբ), 2. դատարանի հարկադրաբար ներկայացնել (առանց անձի ազատության սահմանափակման): Առաջին տեսակի դրսևորման համար պետք է նշել, որ ձերբակալումը միշտ կապվում է նյութական իրավունքի տեսանկյունից իրավախախտում կատարելու հետ, մինչդեռ Նախագծով այս կարևորագույն չափանիշը չէր պահպանվել, ինչի համար արժանացավ քննադատության: Ստացվել էր, որ բերման ենթարկելու մեխանիզմը տեղափոխվել էր ձերբակալման հարթություն՝ հիմք ընդունելով միայն փաստացի ազատությունից զրկելը, մինչդեռ բերման ենթարկվող անձանց չեն զրկում ազատությունից, այլ ընդամենը սահմանափակում են ազատ տեղաշարժվելը: Իսկ դրանք տարբեր իրավական ռեժիմներ են (տ՛ս ՄԻԵԴ նախադեպային իրավունքը ազատությունից զրկելու էության վերաբերյալ): Հետագայում Նախագծից առաջին տեսակը հանվեց, իսկ այս հարկադրանքի միջոցը ստացավ «վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը» անվանումը:

⁸ Տե՛ս Հր. Ղուկասյան, Ա. Հարությունյան Դատավարական սանկցիաների կիրառման առաձնահատկություններն, ըստ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի, Պետություն և իրավունք, թիվ 2 (72), 2016թ., էջ 128:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 129:

վածում ամրագրված է, որ հետաքննության փուլում մեղադրյալին բերման ենթարկելը թույլատրվում է միայն դատարանի որոշման հիման վրա: Կարծում ենք՝ այդպիսի կարգավորումն այնքան էլ արդարացված չէ, քանի որ «տաք հետքերով» քննություն իրականացնող աշխատակիցներին բերման ենթարկելու միջնորդություններով ծանրաբեռնելը կարող է բացասական ազդեցություն ունենալ քննության որակի վրա: Միևնույն ժամանակ ուշագրավ է այն հանգամանքը, որ Վրաստանի ՔԴՕ-ում նախատեսված է դրույթ առ այն, որ իրենց պարտականությունները կամովին չկատարելու դեպքում կողմի միջնորդությամբ դատավարության մասնակիցներին կարելի է բերման ենթարկել նաև փորձագետի մոտ:

Բերման ենթարկելը կիրառվում է միայն կասկածյալի, մեղադրյալի, ամբաստանյալի, դատապարտյալի, վկայի և տուժողի նկատմամբ, այսինքն՝ այն սուբյեկտների նկատմամբ, որոնք ունեն դատավարական կարգավիճակ: Ինչ վերաբերում է քրեական վարույթին մասնակցող այնպիսի մասնակիցների, ինչպիսիք են քաղաքացիական հայցվորը, պատասխանողը, ընթերական, մասնագետը, փորձագետը, օրինական ներկայացուցիչը, տուժողի ներկայացուցիչը և այլն, ապա նրանց համար վարույթն իրականացնող մարմնի կանչով ներկայանալը ևս նախատեսված է որպես պարտականություն, սակայն, ինչպես երևում է ՔԴՕ-ի 153-րդ հոդվածից, առկա չէ նշված մասնակիցներին բերման ենթարկելու հնարավորություն: Նշված սուբյեկտները եթե չեն կատարում իրենց պարտականությունները, ապա նրանց նկատմամբ կարող են կիրառվել պատասխանատվության այլ միջոցներ: Հարկ ենք համարում ընդգծել, որ օրենսդրի կողմից նման դրույթ չնախատեսելը իրավակիրառ պրակտիկայում հանգեցնում է լուրջ խնդիրների: Այսպես՝ անչափահասի գործով քննության ժամանակ, երբ անհրաժեշտ է վերջինիս օրինական ներկայացուցչի մասնակցությունը, վերջինս չի ներկայանում, ինչն էլ հանգեցնում է գործի քննության հետաձգմանը: Հաջորդ դատական նիստերի

վերաբերյալ դարձյալ ծանուցագրեր են ուղարկվում, սակայն վարույթի այդ մասնակիցը կրկին չի ներկայանում: Արդյունքում՝ գործի քննության հետաձգվում է: Գործող օրենսգրքի պայմաններում ստացվում է, որ դատարանն իրավասու չէ նշված անձին բերման ենթարկելու որոշում կայացնել, ուստի ամեն անգամ հետաձգում է գործի քննությունը, որի հետևանքով բացի ավելորդ նյութական ռեսուրսներ ծախսվելուց, խախտվում է գործի՝ ողջամիտ ժամկետում քննության՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքը: Այս առումով նշենք, որ Նախագծում նշված հարցը ստացել է համապատասխան կարգավորում: Այսպես՝ Նախագծի 145-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարույթի մասնավոր մասնակցի (բացառությամբ փաստաբանի), ինչպես նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի կողմից սույն օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելու դեպքում վարույթն իրականացնող մարմինը, դրանց կատարումն ապահովելու նպատակով, իրավասու է որոշում կայացնել անձին վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու մասին: Նշված հոդվածից հետևում է, որ վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը կարող է կիրառվել վարույթի մասնավոր մասնակցի¹⁰ (բացառությամբ փաստաբանի), ինչպես նաև վկայի, փորձագետի կամ թարգմանչի նկատմամբ, երբ վերոնշյալ անձինք չարամտորեն խուսափում են օրենսգրքով սահմանված կարգով իրենց պարտականությունները կատարելուց: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որոշման մեջ նշվում են այն կազմելու տարին, ամիսը, օրը, հարկադրաբար ներկայացնելու ենթակա անձի տվյալները, իրավասու մարմինը, որին հանձնարարվում է հարկադրաբար ներկայացնելը, դրա հիմքը և պատճառները:

Ստացվում է, որ Նախագծում ընդլայնվել է, այսպես ասած, «բերման ենթարկվող» անձանց շրջանակը, և ի տարբերություն գործող օրենսգրքի, Նախագծում նշված դրույթը ստացել է համապարփակ կարգավորում: Այս հար-

¹⁰ Ըստ Նախագծի 6-րդ հոդվածի՝ վարույթի մասնավոր մասնակիցներն են՝ մեղադրյալը, նրա օրինական ներկայացուցիչը, տուժողը, պաշտպանը, գույքային պատասխանողը, տուժողի և գույքային պատասխանողի օրինական ներկայացուցիչը և լիազոր ներկայացուցիչը:

ցի կապակցությամբ նշենք, որ, օրինակ, Մոլդովայի ՔԴՕ-ում բերման ենթարկվող անձանց շրջանակը կոնկրետ չի նշվում, ընդամենն ամրագրված է հետևյալը. բերման կարող են ենթարկվել քրեական վարույթի մասնակից անձինք, որոնց համար պարտադիր է քրեական հետապնդման կամ դատական քննության մարմնի կանչով ներկայանալը և որոնք. 1. խուսափում են ծանուցագիրը ստանալուց, 2. թաքնվում են քրեական հետապնդում կամ դատական քննություն իրականացնող մարմնից, 3. չունեն մշտական բնակության վայր:

Ինչ վերաբերում է բերման ենթարկելու հիմքերին, ապա պետք է նշել, որ գործող օրենսգրքի համաձայն՝ այդպիսի հիմք է նախատեսված առանց հարգելի պատճառի քննության չներկայանալը: Ընդ որում՝ ՔԴՕ-ի 153-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ նշանակված ժամկետում կանչով ներկայանալուն խոչընդոտող հարգելի պատճառների առկայության մասին կասկածյալը, մեղադրյալը, ամբաստանյալը, դատապարտյալը, ինչպես նաև վկան և տուժողը պարտավոր են տեղյակ պահել իրենց կանչած մարմնին: Մեր կարծիքով՝ մինչև համապատասխան անձին բերման ենթարկելու մասին որոշում կայացնելը վարույթն իրականացնող մարմինը պետք է պարզի նրա չներկայանալու պատճառները և համոզվի, որ դրանք հարգելի չեն, այնուհետև կայացնի բերման ենթարկելու մասին որոշում: «Ձուտ կասկածը, որ անձը չի ներկայանա վարույթն իրականացնող մարմնի կանչով, դեռ բավարար հիմք չէ անձին բերման ենթարկելու համար»¹¹: Այսինքն՝ բերման կարելի է ենթարկել այն անձին, որը պատշաճ ծանուցված է եղել, սակայն չի ներկայացել քրեական վարույթն իրականացնող մարմին:

Հարկ ենք համարում նշել, որ գործնականում վարույթն իրականացնող մարմնի կողմից ուղարկված ծանուցագրերը վերադառնում են «չպահանջված» նշումով: Այն նշանակում է, որ ուղարկված ծանուցագրերը չի պահանջվել իր հասցեատիրոջ կողմից: Սակայն հաշվի առնե-

լով, որ փոստային ծառայությունն աշխատում է, ըստ աշխատանքային ժամերի, իսկ ծանուցագրերի հասցեատերերն այդ ժամերին լինում են աշխատանքի վայրում՝ հաճախ ծանուցագրերը չեն կարողանում ստանալ: Նման պայմաններում ուղարկված ծանուցագրերը վերադառնում են «չպահանջված» նշումով, որպիսի պարագայում վարույթն իրականացնող մարմնի համար անորոշ է մնում դատավարության մասնակցի կողմից չներկայանալու իրական պատճառը՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Այս առումով հատկանշական է, որ Նախագծի կարգավորումներով ծանուցման եղանակներն ընդլայնվել են¹²: Բացի այդ, ծանուցագրերը հանձնելու հարցը ստացել է որոշակի կարգավորում: Այսպես՝ Նախագծի 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարույթի ընթացքում անձի ծանուցումը կատարվում է՝

1) թղթային կամ էլեկտրոնային ծանուցագրով.

2) ծանուցվող անձի մասնակցությամբ կատարվող վարույթային գործողության կամ ընթացող դատական նիստի ժամանակ ծանուցման մասին հայտարարելով և միաժամանակ համապատասխան արձանագրության մեջ այդ մասին նշում կատարելով.

3) ծանուցվողի համաձայնությամբ՝ ցանկացած այլ եղանակով:

Նախագծի 151-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թղթային ծանուցագիրը հանձնվում է անմիջականորեն կամ փոստով՝ ծանուցվող անձի նշած հասցեով: Եթե անձն առաջին անգամ է ծանուցվում, ապա թղթային ծանուցագիրը հանձնվում է նրա մշտական բնակության վայրի կամ հաշվառման հասցեով, իսկ եթե այն հայտնի չէ, ապա աշխատանքի, ուսման կամ ծառայության վայրի հասցեով Նախագծի 153-րդ հոդվածն էլ ուղղակիորեն նշում է, որ պատշաճ ծանուցմամբ հրավիրված անձը պարտավոր է վարույթային գործողության կատարման վայր կամ դատական նիստի ներկայանալ նշանակված ժամին կամ վարույթն իրականացնող մարմնին նախապես իրազեկել չներկայանալու

¹¹ Стн Курс уголовного процесса, Под редакцией доктора юридических наук, профессора Л.В. Головки, 2-е издание, исправленное, Москва 2017, ст. 564.

¹² Հարկ է նշել, որ գործող օրենսգրքի շրջանակներում վերջերս՝ 2021 թվականի հունվարի 19-ի ՀՕ-19-Ն օրենքով են ամրագրվել ծանուցման նոր եղանակները:

պատճառների մասին: Անհարգելի պատճառով չներկայացած անձի նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենսգրքով նախատեսված հարկադրանքի միջոցներ:

Սույն հոդվածի շրջանակներում հարկ ենք համարում քննարկել նաև այն հարցը, թե որ դեպքերում է չներկայանալու պատճառը հարգելի: Տեսության մեջ նշվում է, որ չներկայանալու պատճառը կարող է հարգելի համարվել, եթե դա տեղի է ունեցել հիվանդության, գործուղման մեջ գտնվելու, բնական աղետների կամ անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով և այլն: Սա արդեն վկայում է այն մասին, որ չներկայանալու պատճառները հարգելի կամ անհարգելի համարելը գնահատողական կատեգորիա է: Նշենք, որ, օրինակ, 2015 թվականին ուժի մեջ մտած Ղազախստանի նոր ՔԴՕ-ում այս հարցը կարգավորված է օրենսդրական մակարդակով: Այսպես՝ Ղազախստանի ՔԴՕ-ի 157-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված է՝ չներկայանալու հարգելի պատճառ է այնպիսի հիվանդությունը, որը զրկում է անձին ներկայանալու հնարավորությունից, հարազատների մահը, տարերային աղետները և այլ պատճառներ, որոնք զրկում են անձին նշանակված ժամկետում ներկայանալու հնարավորությունից: Մեր կարծիքով՝ այս հարցի օրենսդրական մակարդակով ամրագրումը խնդրահարույց է, քանի որ հարգելի համարվող պատճառների սպառիչ ցանկ, այնուամենայնիվ, անհնար է սահմանել¹³:

Այժմ անդրադարձ կատարենք Նախագծի կարգավորումներին՝ հասկանալու ընդհանրապես՝ ինչ հիմքերի առկայության դեպքում են կիրառվում դատավարական սանկցիաները, և մասնավորապես, վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելը: Նախագծի 141-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավարական սանկցիաները կիրառելու հիմքերն են՝ 1. վարույթի մասնակցի կամ այլ անձի կողմից իր իրավունքները չարաշահելը կամ 2. իր պարտականությունները չարամտորեն չկատարելու միջոցով վարույթի բնականոն ընթացքը խոչընդոտելը, ինչպես նաև 3. դատարանի

նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելը: Այս առումով ավելի լայն ձևակերպում առկա է Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքում: Այսպես՝ վերոնշյալ օրենսգրքի համաձայն՝ դատավարական սանկցիաներ կիրառելու հիմքերն են՝ 1. դատավարական պարտականության չկատարումը, 2. դատավարական գործողության ընթացքը խոչընդոտելը, 3. պատշաճ ծանուցված լինելու պայմաններում առանց հարգելի պատճառ ունենալու դատավարական գործողության կատարմանը չներկայանալը, 4. դատավարական պարտականությունների կատարումն անհարգելի պատճառով հետաձգելը:

Նախագծի 141-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ դատավարական սանկցիայի կիրառումը պետք է նպատակ հետապնդի ապահովելու վարույթի բնականոն ընթացքը: Բացի դրանից, անձի նկատմամբ կիրառված սանկցիան պետք է համաչափ լինի նրա վարքագծի բնույթին և հետևանքներին: Սա նշանակում է, որ դատավարական սանկցիայի կիրառման նպատակը պետք է լինի վարույթին ներգրավված անձի պատշաճ գործելակերպն ապահովելը: Դեռ ավելին՝ նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ դատավարական սանկցիայի կիրառումն արգելք չէ սանկցիայի ենթարկված անձին օրենքով նախատեսված այլ պատասխանատվության ենթարկելու համար:

Ի տարբերություն գործող օրենսգրքի, որտեղ կիրառված է «առանց հարգելի պատճառի քննության չներկայանալ» ձևակերպումը՝ Նախագծի կարգավորումների պայմաններում վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու հիմքն անձի կողմից իր պարտականությունների կատարումից չարամտորեն խուսափելն է: Մեր կարծիքով՝ «չարամտորեն» տերմինը զուտ գնահատողական հասկացություն է, և այդպիսով յուրաքանչյուր դեպքում վարույթն իրականացնող մարմինը պետք է որոշի անձի կողմից չարամտություն ցուցաբերած լինելու կամ չլինելու հանգամանքը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի ոչ միատեսակ պրակտիկայի ձևավորմանը:

¹³ Հատկանշական է, որ Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 59-րդ կետում առկա է հետևյալ ձևակերպումը. հարգելի պատճառ՝ հիվանդություն, մերձավոր ազգականի մահ կամ անձի կամքից անկախ այլ հատուկ և օբյեկտիվ հանգամանք:

Հարկ է արձանագրել, որ իրավական որոշակիության սկզբունքի պահպանման պահանջին անդրադարձել է ՀՀ Սահմանադրական դատարանը: Մասնավորապես, «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ **հստակ են, կանխատեսելի, մատչելի**» (ՍԴՈ-1270), «Օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (ՍԴՈ-1176, ՍԴՈ-1449):

Այս համատեքստում հարկ է նկատել, որ «չարամտորեն խուսափել» բառակապակցության իմաստն ու բովանդակությունը հստակեցված չէ: Կարծում ենք՝ արդյունքում հնարավոր չի լինի հասկանալ, թե ինչ չափանիշներով է անհրաժեշտ գնահատել անձի արարքում չարամտության առկայությունը, ինչն անընդունելի է: Կարծում ենք՝ տարակարծիք մեկնաբանությունների տեղիք չտալու համար այս ձևակերպումը հստակեցում է պահանջում:

Գործող օրենսգրքի բացերից կարելի է առանձնացնել այն, որ հստակ ամրագրված չէ, թե, օրինակ, մեղադրյալը, տուժողը կամ վկան բերման ենթարկվելու դեպքում որքան ժամանակ են պահվելու անազատության մեջ: Գործող օրենսգրքը միայն նշում է իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակում, իսկ որքան տևողությունն է ժամանակավոր, պարզ չէ: Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագծում նախատեսվել է այդպիսի երաշխիք: Այսպես՝ Նախագծի 145-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է, որ անձին անազատության մեջ պահելը չի կարող տևել ավելին, քան այն պարտականության կատարումը, որի ապահովման նպատակով նա հարկադրաբար ներկայացվել է, սակայն բոլոր դեպքերում ոչ ավելի, քան տասներկու ժամը: Անձին անազատության մեջ պահելու անհրաժեշտությունը վերանալու կամ սույն մասով սահմանված առավելագույն ժամկետը լրանալու

դեպքում անձն անհապաղ ազատ է արձակվում: Այդ փաստը և անձին ազատ արձակելու հիմքը, տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն նշվում են համապատասխան արձանագրության մեջ, որի պատճենը կամ քաղվածքը հանձնվում է անձին:

Նախագծում առկա այս մոտեցումը, անկասկած, առաջադիմական է: Ստացվում է, որ անձին հարկադրաբար վարույթն իրականացնող մարմին ներկայացնելու դեպքում այս սուբյեկտներն իրենց պարտականությունները կատարելուց հետո պետք է ազատ արձակվեն անհապաղ, ընդ որում, եթե նույնիսկ պարտականությունների կատարումն ավարտին չի հասել, սակայն լրացել է տասներկու ժամը: Ընդ որում, ամրագրված տասներկու ժամը հաշվարկվում է անձի ազատությունը փաստացի սահմանափակելու պահից: Սա բխում է Նախագծի 24-րդ հոդվածում առկա այն դրույթից, որի համաձայն, անձին անազատության մեջ պահելու ժամկետը պետք է սահմանափակվի ամենակարճ անհրաժեշտ ժամանակահատվածով: Մեր կարծիքով՝ նախատեսված նորմն անձի պաշտպանության կարևորագույն երաշխիք է, քանի որ գործող օրենսգրքի պայմաններում օրենսդիրը միայն նշել է «ժամանակավոր սահմանափակում» ձևակերպումը:

Գործող օրենսգրքի պայմաններում հաջորդ չկարգավորված հարցերից մեկն այն է, որ անդրադարձ չկա այն հարցին, թե ինչպես պետք է հավաստվի անձին բերման ենթարկելու փաստը: Նախագծի 145-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձին հարկադրաբար ներկայացնելուց առաջ ստորագրությամբ նրան է հանձնվում հարկադրաբար ներկայացնելու մասին որոշման պատճենը: Հարկ է նկատել, որ նշված որոշման կազմումն ինքնանպատակ չէ: Այդ որոշման մեջ կարևոր է այն, որ նշվում են վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու որոշման հիմքերը, որով ապահովվում է որոշման պատճառաբանվածությունը և հետագայում հիմք տալիս բողոքարկման: Համանման կարգավորում նախատեսված է նաև Վրաստանի, ինչպես նաև ՌԴ ՔԴՕ-ներում: Սա նշանակում է, որ վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշմանը հարկադրաբար ներկայացող անձը ծանոթանում է, որը հավաստվում է անձի ստո-

րագրությամբ: Ազատությունից փաստացի զրկվելուց անմիջապես հետո անձը ներկայացվում է վարույթն իրականացնող մարմին: Վարույթն իրականացնող մարմնում հարկադրաբար ներկայացնելու փաստն ամրագրվում է համապատասխան արձանագրությամբ, որի պատճենը, իսկ դատարանի դեպքում քաղվածքը հանձնվում է անձին: Արձանագրության մեջ նշվում են՝ անձի անունը, ազգանունը, հայրանունը, նրան փաստացի ազատությունից զրկելու տարին, ամիսը, օրը, ժամը, ընդամենը, վայրը, պայմանները և հիմքերը, նրա հայտարարությունները, նրան հարկադրաբար ներկայացրած իրավասու անձի անունը, ազգանունը, պաշտոնը, կոչումը, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմին անձին բերելու և արձանագրություն կազմելու տարին, ամիսը, օրը, ժամը և ընդամենը: Արձանագրությունը կամ քաղվածքը ստորագրվում է հարկադրաբար ներկայացված անձի, նրան ներկայացրած իրավասու անձի, ինչպես նաև վարույթն իրականացնող մարմնի կողմից: Կարծում ենք՝ այս կարգավորմամբ ևս Նախագծով անձի իրավունքների պաշտպանությունը նոր մակարդակի է բարձրացվում:

Այժմ անդրադարձ կատարենք այն հարցին, թե որ դեպքերում չի կարելի անձին բերման ենթարկել: ՔԴՕ-ի 153-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ չի թույլատրվում բերման ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասներին, հղի կանանց և ծանր հիվանդությամբ տառապող անձանց, բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի: Այս նորմի «բացառությամբ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ կասկածվելու դեպքերի» դրույթի առնչությամբ նշենք, որ այն վերլուծելու արդյունքում ստացվում է, որ անձանց բերման են ենթարկում անմիջականորեն ծագած կասկածանքի հիման վրա, մինչդեռ «նման ձևակերպումը անարդարացիորեն փոխում է բերման ենթարկելու՝ որպես դատավարական հարկադրանքի միջոցի էությունը, քանի որ ՔԴՕ-ի 153-րդ հոդվածի 1-ին մա-

սը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ կասկածվելը բերման ենթարկելու հիմք չի համարում»¹⁴: Այս հանգամանքը անորոշություն է առաջացնում անմիջականորեն առաջացած կասկածանքի հիման վրա ձերբակալելու և բերման ենթարկելու ինստիտուտների միջև: Բերման ենթարկելը դատավարական համապատասխան սուբյեկտի կարգավիճակ ունեցող և իր պարտականությունները կամովին չկատարած անձին այն հարկադրաբար կատարելու նպատակ է հետապնդում, այլ ոչ թե հանցանք կատարելու կասկածի հիման վրա անձին ձերբակալելու: Հաշվի առնելով նշվածը՝ կարծում ենք՝ վերը նշված նորմի այդպիսի ձևակերպումը չպետք է նախատեսվեր այս ինստիտուտի իրավակարգավորումներում:

Գործող օրենսգրքի կարգավորումներում առկա է նաև դրույթ, համաձայն որի՝ բերման չի կարելի ենթարկել մինչև 14 տարեկան անչափահասներին, հղի կանանց և ծանր հիվանդությամբ տառապող անձանց: Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագծի կարգավորումներում բարոյական տեսանկյունից արդարացված այս դրույթը բացակայում է: Այսպիսի ամրագրում նախատեսված է նաև մի շարք երկրների օրենսդրությամբ (օրինակ՝ Բելառուս, Ղազախստան, ՌԴ): Նման իրավակարգավորման պայմաններում հարց է առաջանում՝ ինչպես պետք է վարույթն իրականացնող մարմինն ապահովի այս անձանց ներկայանալը, եթե, օրինակ, հարյուրավոր ծանուցագրեր են ուղարկվում նրանց, սակայն վերջիններս չեն ներկայանում: Դա իր հերթին հանգեցնում է գործի քննության հետաձգմանը, որի հետևանքով խախտվում է նաև գործի՝ ողջամիտ ժամկետում քննության իրավունքը: Կարծում ենք՝ Նախագծում նման դրույթի բացակայությունն արդարացված է, քանի որ վարույթն իրականացնող մարմինն իրավասություն է ունենում առանց հարգելի պատճառի քննության չներկայացող դատավարության մասնակցին վարույթն իրականացնող մարմին հարկադրաբար ներկայացնելու մասին որոշում կայացնելու:

¹⁴ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն, նույն տեղում, էջ 385:

ՍԱՄԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Արարատի մարզի դատախազության դատախազ,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԻ ԾԱԳՈՒՄԸ**

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ 189-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ ընդհանուր սեփականությունը ծագում է այն գույքը երկու կամ մի քանի անձանց սեփականության վերածվելու դեպքում, որը չի կարող բաժանվել առանց դրա նշանակության փոխման (անբաժանելի գույք) կամ օրենքով ենթակա չէ բաժանման:

Բաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը ծագում է օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում:

Վերոգրյալ քաղաքացիաիրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ միևնույն գույքը երկու և ավելի անձանց սեփականության վերածվելու դեպքում ծագում է ընդհանուր սեփականությունը, իսկ բաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր բաժնային սեփականության ծագման երկու հիմք է ամրագրված, այն է օրենքով և պայմանագրով, ընդ որում, ընդհանուր սեփականության ծագման համար բավարար է նշված հիմքերից միայն մեկի առկայությունը:

Տվյալ դեպքում անհրաժեշտ է պատասխանել այն իրավական հարցադրմանը, թե ՀՀ քաղաքացիական օրենսգրքով՝ որպես ընդհանուր բաժնային սեփականության ծագման հիմք նախատեսված, «Օրենքով» արտահայտությունն ինչ համատեքստում է կիրառելի, մասնավորապես, պրակտիկայում, որ դեպքերում է առկա ընդհանուր բաժնային սեփականության ծագման քննարկման առարկա հանդիսացող հիմքը:

ՀՀ Սահմանադրության «Իրավական նորմերի աստիճանակարգությունը» վերտառությամբ 7-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով ամրագրված է, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Օրենքները

պետք է համապատասխանեն սահմանադրական օրենքներին, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը՝ սահմանադրական օրենքներին և օրենքներին:

Սահմանադրության գերակայությունն իրավական պետության այն առանցքն է, որը պայմանավորում է ամբողջ իրավակարգի կառուցվածքը և ներքին տրամաբանությունը: Սահմանադրությունն այն հիմնական օրենքն է, «օրենքների օրենքը», որը կառուցակարգում է ամբողջ պետությունը և դուրս է հանրային իշխանությունների (օրենսդիր, գործադիր և դատական) իրավազորությունից²:

Հարկ է արձանագրել, որ առկա չէ սահմանադրաիրավական նորմ, որը բացահայտում է «Օրենք» եզրույթը, Սահմանադրությամբ սահմանվում է միայն իրավական նորմերի աստիճանակարգությունը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտը ՀՀ ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտն է, որը պարունակում է վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ օրենսդրական ակտը Հայաստանի Հանրապետության ժողովրդի կամ Ազգային ժողովի ընդունած նորմատիվ իրավական ակտն է Սահմանադրությունը, սահմանադրական օրենքները և օրենքները:

Վերոգրյալ իրավական նորմի համատեքստ

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 125 2021

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքը, ՀՀՊՏ 1998.08.10/17(50), ընդունվել է 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.:

² Տե՛ս Հարությունյան Գ.Գ., Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, 2010, էջ 103:

տում անհրաժեշտ է փաստել, որ նշված օրենքում ևս օրենսդիրը չի սահմանել «Օրենք» հասկացությունը, սակայն համակարգային վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել, որ այն անորոշ թվով անձանց համար վարքագծի պարտադիր կանոններ պարունակող և իրավասու մարմինների կողմից ընդունված գրավոր իրավական ակտ է, ընդ որում, «Օրենսդրական ակտ» հասկացությունը կիրառվում է ավելի լայն իմաստով և իր մեջ ներառում է «Օրենք» հասկացությունը:

Այսպիսով՝ «Օրենքով» արտահայտությունը ենթադրում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այն իրավական հիմքը, որի հիման վրա ծագում է ընդհանուր բաժնային սեփականությունը, այսինքն՝ որպես ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի ծագման քննարկվող հիմք կարող ենք դիտարկել օրենսդրությամբ նախատեսված լինելու պարտադիր պայմանի առկայությունը:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ամրագրված ընդհանուր բաժնային սեփականության ծագման երկրորդ հիմքին՝ պայմանագրին, հարկ է նշել, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքը սահմանում է քննարկման առարկա հանդիսացող հիմքի հասկացությունը:

Այսպես.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագիր է համարվում երկու կամ մի քանի անձանց համաձայնությունը, որն ուղղված է քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն կամ դադարելուն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 438-րդ հոդվածի համաձայն՝ պայմանագիրը պետք է համապատասխանի այն կնքելու պահին գործող օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված՝ կողմերի համար պարտադիր կանոններին (իմպերատիվ նորմերին):

Եթե պայմանագիրը կնքելուց հետո ընդունվել է օրենք, որը սահմանում է կողմերի համար պարտադիր այլ կանոններ, քան պայմանագիրը կնքելիս գործող կանոնները, ապա կնքված պայմանագրի պայմանները պահպանում են իրենց ուժը, բացի այն դեպքերից, երբ օրենքում սահմանված է, որ դրա գործողու-

թյունը տարածվում է նախկինում կնքված պայմանագրերից ծագող հարաբերությունների վրա:

ՀՀ վճռաբեկ դատարանը իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու քաղաքացիական օրենսդրության սկզբունքներից կամ քի ինքնավարության, պայմանագրի ազատության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքները և պարտականություններն ազատ սահմանելու, պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման որոշելու սկզբունքների իրականացումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների մասնակիցների՝ կողմերի համար նախատեսել է հնարավորություն՝ կնքելու ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր և սահմանելու պայմանագրի պայմանները, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով³:

Նկատենք, որ ՀՀ օրենսդրությամբ ամրագրված է, որ պայմանագիրը պետք է համապատասխանի օրենքին: Ինչը նշանակում է, որ այն լայն իմաստով կարող է ներառվել նախորդ հիմքում, մասնավորապես, հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի հասկացությունը, տեսակներն ամրագրված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, միաժամանակ նախատեսված է պարտադիր պայման, այն է պայմանագրի համապատասխանությունը օրենքին, կարող ենք արձանագրել, որ այն ներառվում է առաջին հիմքում:

Բացի նշված հիմքերից, մասնագիտական գրականությունում առանձնացվում են նաև այլ հիմքեր, որոնք թեև դիտարկվում են առանձին, սակայն կարծում ենք, որ գրականությունում քննարկվող հիմքերն անհրաժեշտ է սահմանել որպես ենթահիմքեր:

Գ. Հ. Ղարախանյանը նշել է, որ ընդհանուր սեփականության իրավունքի առաջացման համար անհրաժեշտ է իրավաբանական որևէ փաստի կամ մի քանի փաստերի առկայություն: Ընդհանուր սեփականության իրավունք առաջանում է արտադրության, մի քանի անձանց

³ Տես ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2015 թվականի հուլիսի 17-ի թիվ ԵԱԲԳ/2796/02/13 քաղաքացիական գործով որոշումը:

կողմից համատեղ կարգով որևէ իր ստեղծելու, համատեղ միջոցներով գույք ձեռք բերելու, քաղաքացիաիրավական գործարքների միջոցով, օրենքի ուժով և այլ հիմքերով: Միաժամանակ նշել է, որ ընդհանուր սեփականության իրավունքի առաջացման եղանակ է արտադրելու միջոցով նոր գույք ստեղծելը, կտակը և այլն: Ընդհանուր սեփականության իրավունք կարող է առաջանալ քաղաքացիական-իրավական այնպիսի գործարքների միջոցով, որով տեղի է ունենում սեփականության իրավունքի փոխանցում⁴, իսկ գործարքը նպատակաուղղված իրավաչափ իրավաբանական գործողություն է, որի հետևանքով կարող են իրավական հետևանքներ առաջանալ, եթե այն համապատասխանում է օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին: Բացի այդ, գործարք է համարվում ոչ թե ամեն մի իրավաչափ և օրինական գործողություն, այլ միայն այն կամային գործողությունը, որն ուղղված է որոշակի իրավական հետևանքներ առաջացնելուն՝ իրավական արդյունքի հասնելուն⁵:

Ե. Ա. Սուխանովը նշել է, որ ընդհանուր սեփականության իրավունքի ծագման հիմքեր են տարբեր իրավաբանական փաստերը⁶:

Միաժամանակ Ա. Պ. Սերգեևը, Յ.Կ. Տոլստոյը նշել են, որ ընդհանուր բաժնային սեփականություն կարող է ծագել օրենքով կամ պայմանագրով նախատեսված դեպքերում, բացի այդ, ընդհանուր համատեղ սեփականության մասնակիցների համաձայնությամբ կամ դատարանի որոշմամբ նրանց ընդհանուր սեփականությունը կարող է վերածվել բաժնային սեփականության, այսինքն՝ թույլատրվում է ընդհանուր համատեղ սեփականության ռեժիմը փոխել ընդհանուր բաժնային սեփականության ռեժիմի⁷:

Ժառանգությունը հանդիսանում է ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի ծագման հիմնական հիմքերից մեկը⁸, քանի որ

ժառանգության ընդունման պահից ժառանգը դառնում է այն իրավունքների և պարտականությունների կրողը, որոնք պատկանել են ժառանգատուին⁹: Հեղինակը նաև նշել է, որ ժառանգության իրավունքի իրական նշանակությունն այն չէ, որ այն կրողն ընդհանրապես ունի այդ իրավունքը, այլ այն հանդիսանում է սեփականության իրավունքի ծագման նոր հիմք¹⁰, մինչդեռ նշված տեսակետը քննադատության է արժանացել այլ հեղինակների կողմից, ովքեր նշել են, որ այն իրավիճակը, երբ սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքը տալիս է իրավական հնարավորություն դառնալ այլ իրավունքների տիրապետող, դեռևս իրավաբանական փաստի նշանակություն չի ստանում¹¹:

Մեր կարծիքով վերջին տեսակետը փաստարկված և հիմնավորված չէ, քանի որ ժառանգությամբ ծագում է նոր իրավահարաբերություն, իսկ ժառանգության իրավունքը ծագում է բացառապես օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 11-րդ բաժնում ամրագրված քաղաքացիաիրավական նորմերի համատեքստում ակնհայտ է, որ ժառանգության իրավահարաբերությունների կարգավորումը հստակ նախատեսված է, որպիսի պայմաններում կարող ենք արձանագրել, որ ժառանգությունը կատարվում է, ըստ կտակի, և ըստ օրենքի, ընդ որում, երկու դեպքում էլ ժառանգությունն ընդունելու ընթացակարգ է նախատեսված, իսկ ժառանգությունն ընդունելուց հետո ժառանգը ստանձնում է ժառանգատուի իրավունքներն ու պարտականությունները, որի արդյունքում էլ առաջանում է սեփականության իրավունքը: Իսկ այն դեպքերում, երբ ժառանգությունն ընդունում են մի քանի ժառանգներ, առաջանում է ընդհանուր սեփականության իրավունքը՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող գույքի նկատմամբ:

⁴ Տե՛ս Ղարախանյան Գ.Հ., Ընդհանուր սեփականության իրավունք, Ե., 1971, էջ 15-23:

⁵ Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 3-րդ հրատ., Ե., 2006, էջ 203:

⁶ Տե՛ս Гражданское право, под ред. Е. А. Суханов, том 1, М., 1998, ст. 579.

⁷ Տե՛ս Гражданское право, под ред. А.П.Сергеев, Ю.К. Толстой, т. 1, М., 2008, ст. 524.

⁸ Տե՛ս Мананкова Р. П., Правоотношение общей долевой собственности граждан по советскому законодательству, Т., 1977, ст. 146.

⁹ Տե՛ս Иоффе О. С., Советское гражданское право, Курс лекций, Ч. 3, 1965, ст. 295.

¹⁰ Տե՛ս Иоффе О. С., Правоотношение по советскому гражданскому праву, Л., 1949, ст. 138.

¹¹ Տե՛ս Антимонов Б. С., Графе К. А., Советское наследственное право, М., 1955, ст. 62.

Մասնագիտական գրականությունում ընդհանուր սեփականության իրավունքի ծագման հիմքերի սպառիչ ցանկ չի նախատեսվում և գրեթե բոլոր հեղինակների կողմից նշվում է «Այլ հիմքեր» արտահայտությունը, սակայն կա ընդհանուր կանոն, այն է՝ ընդհանուր սեփականության իրավունքի ծագման որևէ հիմք չպետք է հակասի օրենքին:

Նկատենք, որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը առանձնացնում է նաև սեփականության իրավունք ձեռք բերելու հիմքերը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 172-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ՝ անձի կողմից իր համար պատրաստած կամ ստեղծած նոր գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք է բերում այդ անձը: Մասնագիտական գրականությամբ առանձնացված է սեփականության իրավունքի ձեռքբերման երկու եղանակ՝ սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական և ածանցական եղանակ, մասնավորապես, երբ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերվում առաջին անգամ, ապա սեփականության իրավունքի ձեռքբերման այդպիսի եղանակը կոչվում է սկզբնական եղանակ: Իսկ երբ տվյալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ձեռք է բերվում նախորդ սեփականատիրոջ կամքով, ապա կոչվում է ածանցական եղանակ¹²:

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը հստակ տարանջատել է սեփականության իրավունքի և ընդհանուր սեփականության ծագման հիմքերը՝ նախատեսելով առանձին քաղաքացիաիրավական նորմեր: Պատահական չէ նման տարանջատումը, քանի որ սեփականության իրավունքը և ընդհանուր սեփականության իրավունքը քաղաքացիական իրավունքի ինքնուրույն և առանձին ինստիտուտներ են, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները:

Այսպիսով՝ կարող ենք եզրահանգել, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված սեփականության իրավունքը և ընդհանուր սեփականության իրավունքը, լինելով քաղաքացիական ի-

րավունքի առանձին ինստիտուտներ, էապես տարբերվում են, միաժամանակ կարող ենք փաստել, որ քննարկվող ինստիտուտները նաև լրացնում են միմյանց, մասնավորապես, սեփականության իրավունքի ծագման հիմքերը կարող են նաև տարածվել ընդհանուր սեփականության ծագման հիմքերի վրա այն դեպքերում, երբ միևնույն գույքի նկատմամբ սեփականության իրավունք են ձեռք բերում միաժամանակ երկու կամ ավելի անձինք:

Ուշագրավ է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ հոդվածի 4-րդ մասը նախատեսում է միայն բաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության ծագման հիմքերը, որպիսի պայմաններում ակնհայտ է, որ առկա չէ օրենսդրական ուղղակի կարգավորում անբաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր սեփականության ծագման հիմքերի վերաբերյալ, միայն ամրագրված է, որ անբաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր սեփականությունը ծագում է այն գույքը երկու կամ մի քանի անձանց սեփականության վերածվելու դեպքում: Այսինքն՝ ամրագրված է ծագման մեկ հիմք, սակայն նշված կարգավորումն առավել վերաբերելի է անբաժանելի գույքը երկու կամ մի քանի անձանց սեփականության վերածվելու ընթացակարգին, որն ընդհանուր դրույթներ է պարունակում, հետևաբար համանման նորմերի կիրառմամբ կարող ենք փաստել, որ թե՛ բաժանելի, թե՛ անբաժանելի գույքի նկատմամբ ընդհանուր սեփականություն ծագում է օրենքով և պայմանագրով նախատեսված դեպքերում:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի առանձնացրել ընդհանուր համատեղ սեփականության և ընդհանուր բաժնային սեփականության իրավունքի ծագման հիմքերը, այլ ամրագրված է ընդհանուր սեփականության ծագման հիմքերը, ինչը նշանակում է, որ օրենսդիրը ընդհանուր սեփականության երկու տեսակների դեպքում էլ նախատեսել է միևնույն հիմքերը՝ նույնացնելով դրանք, որպիսի պայմաններում կարող ենք եզրահանգել, որ ընդհանուր բաժնային սեփականություն ծագում է օրենքով և պայմանագրով նախատեսված դեպքերում:

¹² Տե՛ս Բարսեղյան Ս. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, առաջին մաս, 3-րդ հրատ., Ե., 2006, էջ 291-299:

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՂԱԼՅԱՆ

ՀՀ Փաստաբանների պալատի անդամ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և
իրավունքի ինստիտուտի հայցորդ

**ԻՐԱՎԱԿԱՆ ՖԻԿՑԻԱՆԵՐՆ ՅԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԵՈՒԹՅԱՆ
ՀՈՉԱԿԱԳՐՈՒՄ ԵՎ ՅԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Մի շարք պետությունների իրավական համակարգերում սահմանադրական իրավունքը համարվում է իրավունքի ճյուղ, որի կարգավորման առարկան պետական իշխանության ինստիտուտների գործունեության սկզբունքներն են, անձի և քաղաքացու իրավական կարգավիճակը և նրա իրավահարաբերությունները պետական իշխանության հետ: Հիմնական աղբյուրը սահմանադրությունն է, որի նորմերը ունեն բարձրագույն իրավաբանական ուժ՝ համեմատած մյուս բոլոր իրավունքի աղբյուրների՝ պառլամենտի օրենքների, գործադիր իշխանության իրավական ակտերի, դատական ակտերի և սովորույթային նորմերի նկատմամբ:

Վերջին երեք տասնամյակներում իրավական ֆիկցիաների մասով բավականին շատ հետազոտություններ են իրականացվել ինչպես տեսական մակարդակում, այնպես էլ պրակտիկայում՝ ճյուղային օրենսդրություններում, սակայն, որքան էլ, որ զարմանալի է, սահմանադրաիրավական ֆիկցիաների մասով հետազոտություններ բավականին քիչ են¹:

Իրավունքի տեսությունում ընդունված է համարել, որ իրավական ֆիկցիաներն ավելի շատ տարածված են քաղաքացիաիրավական ոլորտում, մասնավորապես, քաղաքացիական դատավարությունում, որը կապված է քաղաքացիաիրավական արդարադատության կարգավորմամբ և «մրցակցային պրոցեսում օբյեկտիվ իրականությունը բացահայտելուց հրա-

ժարմամբ»²: Շատ իրավական ֆիկցիաների մենք հանդիպում ենք նաև վարչաիրավական կարգավորումներում: Այսուհանդերձ պետք է փաստել, որ «օբյեկտիվ իրականության բացահայտման հրաժարում» լինում է նաև սահմանադրաիրավական կարգավորումներում, որը քիչ ուսումնասիրված ոլորտներից է և դեռ հետազոտման կարիք ունի:

Մինչ Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումներում ֆիկցիաների մասին խոսելը, հարկ ենք համարում համառոտ ներկայացնել ֆիկցիայի լեզվաբանական և իրավաբանական նկարագիրը:

«**Ֆիկցիա**» եզրույթն արդի հայերեն բացատրական բառարաններում բնորոշվում է որպես պատրանք, մտացածին՝ անիրական բան³: Ֆիկցիան (Ֆր. fiction) թարգմանվում է նաև որպես կեղծիք, երևակայության հնարվածք, որը իրականությանը չի համապատասխանում⁴:

Օտարերկրյա բառերի բառարանում ֆիկցիան (լատ. fictio) բնորոշվում է՝ 1) հորինվածք, մտացածին բան, հնարովի բան, երևակայության արգասիք, 2) եղանակ, ըստ որի, իրականությունը պայմանավորված է որոշակի պայմանական ֆորմուլայով⁵:

Իրավաբանական գրականության մեջ ֆիկցիան այնպիսի երևույթ է, որն իր ամրագրման պահից զուրկ է իրականությունից⁶: Իրավական ֆիկցիայի բնորոշումը թեև մեկ սահմանմամբ ուղղակի անհնար է տալ, այնպես ինչ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 125 2021

¹ Տե՛ս **Ильина Е. В.** Классификация конституционно-правовых фикций //Электронный научно-практический журнал “Современные научные исследования и инновации” <http://web.snauka.ru/issues/2011/10/3011/22.01.2021>.
² **Танимов О. В.** Теория юридических фикций, монография, М., Проспект, 2016. ст. 158.
³ Տե՛ս **Աղայան Է.Դ.**, Արդի հայերենի բացատրական բառարան», Երևան, Հայաստան հրատ., 1976, էջ 1605:
⁴ Տե՛ս **Մալխասեանց Ա.**, Հայերեն բացատրական բառարան, Երևան, ԵՊՀ հրատ.,2010, էջ 626:
⁵ Տե՛ս Современный словарь иностранных слов: ок. 20000. Москва, 1999. ст. 647.
⁶ Տե՛ս **Танимов О.В.**, նշտված աշխտ. էջ 6.

պես մեկ սահմանամաճը անհնար է սահմանել էներգիայի կամ ինֆորմացիայի հասկացությունները: Այդուհանդերձ, տեսական գրականության մեջ իրավական ֆիլզիան բնորոշվում է որպես ունիվերսալ, համաիրավական ֆենոմեն, իրավունքի բովանդակության տարր, որը դրսևորվում է տարբեր ձևերով և կոչված է ճանաչելու անիրական իրավիճակը իրականի և հակառակը⁷: Իրավական ֆիլզիան իրականությանն առավելապես չհամապատասխանող մտահանգում է: Իրավական ֆիլզիային ներհատուկ է գոյություն չունեցող երևույթը գիտակցաբար ճանաչել գոյություն ունեցող կամ գոյություն ունեցող երևույթը գիտակցաբար ճանաչել գոյություն չունեցողը⁸:

Սույն հետազոտության շրջանակներում իրավական ֆիլզիան ներկայացված է, որպես հասարակական հարաբերություններում հատուկ նպատակային նշանակություն ունեցող միջոց, որը կոչված է իրավական անորոշությունները վերացնելու և հասարակական իրավահարաբերությունները որոշակի դարձնելուն:

Հարկ ենք համարում ներկայացնել երկու հիմնական հարց. 1) «Հայաստանի անկախության մասին հռչակագրում» արդյո՞ք առկա են իրավական ֆիլզիաներ, 2) Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում արդյո՞ք առկա են իրավական ֆիլզիաներ:

1. «Հայաստանի անկախության մասին հռչակագրում»⁹ (այսուհետև՝ Հռչակագիր) արդյո՞ք առկա են իրավական ֆիլզիաներ

Հռչակագրում իրավական ֆիլզիաների առկայության հարցը քննարկելու նպատակով կանդիդատանք երկու ենթահարցի՝

- արդյո՞ք Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը արտահայտել է Հայաստանի ժողովրդի միասնական կամքը,
- արդյո՞ք Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական,

մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է:

Ինչ վերաբերում է միասնական կամքին, ապա հայտնի է, որ Հռչակագրի նախաբանում նշված է. «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, գիտակցելով իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղծերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ելնելով մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի սկզբունքներից և միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերից, կենսագործելով ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը, հիմնվելով 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշման վրա, զարգացնելով 1918 թվականի մայիսի 28-ին ստեղծված անկախ Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ավանդույթները, խնդիր դնելով ժողովրդավարական, իրավական հասարակարգի ստեղծումը, հռչակում է...»¹⁰:

Առաջին հայացքից թվում է, թե Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը Հռչակագրի նախաբանում դիմել է իրավական ֆիլզիայի օգնությանը այն իմաստով, որ ամրագրել է Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը՝ արտահայտելով Հայաստանի ժողովրդի միասնական կամքը...

Արդյո՞ք Հռչակագիրն արտացոլում է Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, թե օրենսդիրը դիմել է իրավական ֆիլզիայի՝ ակնհայտորեն իրականության չհամապատասխանող դրույթը դիտել է իրականությանը համապատասխանող:

Նախ, հարկ է արձանագրել, որ 1990թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի հերթական նիստում հռչակագիրը վերջնական տեսքով դրվել է քվեարկության, որի արդյունքում

⁷ Տես նույն տեղում էջ 111:

⁸ Տես **Ղամբարյան Ա., Մուրադյան, Մ.**, Պետության և իրավունքի տեսություն, Ուս. ձեռնարկ, Երևան, Լուսաբաց հրատ., 3-րդ լրամշ. հրատ., 2018, էջ 382:

⁹ Տես ՀՀԳԽՏ 1990/16, հոդ. 256:

¹⁰ Տես նույն տեղում:

183 կողմ, 2 դեմ, 2 ձեռնպահ ձայներով այն ընդունվել է¹¹: Այդուհանդերձ, հաջորդ օրը ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի նիստում պատգամավորները կրկին անդրադառնալով Հռչակագրին, վերջնական խմբագրումից հետո այն դրել են նոր քվեարկության, որի արդյունքում այն ընդունվել է 192 կողմ, 2 ձեռնպահ ձայներով¹²: Ընդ որում՝ քննարկվող ժամանակահատվածում Գերագույն խորհուրդը կազմված էր 260 պատգամավորներից¹³:

Եթե հիմնվենք այն կանխավարկածին, որ քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի ժողովրդի միասնական կամքը արտահայտում էին ընտրված 260 պատգամավորները¹⁴, ապա Հռչակագրի ընդունման գործում մասնակցել է մի դեպքում 187 պատգամավոր, որից 2 պատգամավոր եղել են դեմ, իսկ 2-ը՝ ձեռնպահ, իսկ մյուս դեպքում մասնակցել է 194 պատգամավոր, որից 2-ը եղել է ձեռնպահ: Այս պարագայում կարող ենք արդյո՞ք պնդել, որ 196 պատգամավորները ներկայացրել են Հայաստանի ժողովրդի միասնական կամքը, դժվար է ասել:

Նման պայմաններում առաջ է գալիս այն թեզը, որ օրենսդիր մարմինը դիմել է իրավական ֆիլցիայի օգնությանը, մասնավորապես, գոյություն չունեցող երևույթը ճանաչելով գոյություն ունեցող: Եթե զարգացնենք այս թեզը, ապա տրամաբանական է, որ նորաստեղծ պետությունների կառուցման հիմքում պետք է դրվի որոշակի վեհություն, որոշակի փիլիսոփայություն, որը գալիս է կոնկրետ ժողովուրդների պատմական ակունքներից, նրանց պայքարներից, ուստի և տրամաբանական է նման կարգավորումը: Իհարկե այս հարցը դեռևս խորքային հետազոտման կարիք ունի և կատեգորիկ հետևություններ անելը դեռ վաղ է:

Ինչ վերաբերվում է ժողովրդի սեփականություն հիմնահարցին, ապա նույնատեսակ խնդրի, կարծես թե, մենք հանդիպում ենք նաև

Հռչակագրի 7-րդ հոդվածում, որը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները, նրա ժողովրդի սեփականությունն է: Դրանց տիրապետման, օգտագործման և տնօրինման կարգը որոշվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով»¹⁵:

Ինչ ասած է ժողովրդի սեփականություն կամ արդյո՞ք ժողովուրդը իրապես հանդիսացել կամ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության հողի, ընդերքի, օդային տարածության, ջրային և այլ բնական պաշարների կամ տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունների սեփականատերը:

Այս մասով ակնհայտ է, որ Հռչակագիրը ուրվագծել է հետագայում իրականացվելիք հողի սեփականաշնորհման գործընթացը, ըստ որի, հողը պետությունից պետք է անցնել ՀՀ քաղաքացիներին: Մասնավորապես, ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 29/01/1991թ. ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի» 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ **հողը Հայաստանի Հանրապետության ազգային հարստությունն է, հանրապետության տարածքում բնակվող ժողովրդի սեփականությունը**: Միաժամանակ նույն օրենսգրքի 4-րդ հոդվածով սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունում հողի սեփականության ձևերն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սեփականություն, կոլեկտիվ սեփականություն, պետական սեփականություն, այլ պետությունների սեփականություն՝ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների համար¹⁶:

Հետագայում, 1991թ. հողի սեփականաշնորհումը ՀՀ-ում իրականացվեց մի շարք սկզբունքներից ելնելով, այդ թվում հողը տրվեց գյուղացուն վճարովի հիմունքներով, սահման-

¹¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, 16 (972), 31.08.1990, էջ 5-6:

¹² Տե՛ս Մինասյան Է., Հայաստանի երրորդ հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 116:

¹³ Տե՛ս նույն տեղում, էջ 104:

¹⁴ Թեև ժողովրդի կամք հասկացությունը խիստ վիճելի է, մասնավորապես արդյո՞ք պառլամենտը ներկայացնում է ժողովրդի կամքը, ամեն դեպքում այս հարցը սույն ուսումնասիրության առարկա չի հանդիսանում, ուստի և դրան անդրադարձ չի կատարվում:

¹⁵ ՀՀԳԽՏ 1990/16, հոդ.256:

¹⁶ ՀՀ Հողային օրենսգրքը (գործել է 28.02.1998-ից մինչև 15.06.2001թ.) <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150888/22.01.2021/>:

վեց երկու տարվա ընթացքում, այսպես կոչված կադաստրային զուտ եկամտի 70%-ի չափով գումարի վճարման պարտականություն¹⁷: Այսինքն՝ ակնհայտ է, որ հողը պետության կողմից վաճառվել է ՀՀ քաղաքացիներին, թեև փոքր գումարով:

Այդ ժամանակ գործող Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 92-րդ հոդվածը սահմանում էր, որ *սեփականատիրոջն են պարկանում գույքը տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունքները՝ օրենքով որոշված սահմաններում*: Միաժամանակ, նույն օրենսգրքի 95-րդ հոդվածը սահմանում էր, որ *հողը, նրա ընդերքը, ջրերն ու անտառները պետության բացառիկ սեփականությունն են*¹⁸:

Համադրելով այս նորմերը Հոչակագրի հետ՝ մենք տեսնում ենք, որ, կարծես թե, կիրառվել է իրավական ֆիկցիա, քանի որ Հոչակագրով նշվել է, որ հողը նրա ժողովրդի սեփականությունն է, սակայն այդ ժամանակաշրջանում առկա օրենսդրության համապատասխան նույն այդ հողը պետության կողմից վաճառվել է ՀՀ քաղաքացիներին, մի բան, որ անհամատեղելի էր սեփականության իրավունքի հասկացության հետ: Եվ ուրեմն, այստեղ, կարծես թե, գործ ունենք իրավական ֆիկցիայի հետ և այն տրամաբանական է, քանի որ սովետական ռեժիմից դեպի անկախություն ընթանալով, օրենսդիրը ազդարարել է ժողովրդի սեփականության մասին, այսինքն՝ մասնավոր սեփականության մասին, մի բան, որն մինչ այդ չի եղել:

Հետագայում, թե՛ 1995թ. Սահմանադրությամբ (89-րդ հոդվածի 3-րդ կետ՝ *կառավարությունը կառավարում է պետական սեփականությունը*), և թե՛ ճյուղային օրենսդրությամբ հստակ տարանջատում կատարվեց մասնավոր սեփականության և պետական սեփականության միջև: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 44-րդ հոդվածը հողի սեփականատեր է դիտում մասնավոր սուբյեկտներին՝ քաղաքացիներին կամ իրա-

վաբանական անձանց, ինչպես նաև պետությանը, որն իրավասու է մասնավորեցնել պետական ու համայնքային հողերը: Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի¹⁹ 4-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է՝ *ընդերքի օգտագործման և պահպանության հետ կապված հարաբերությունների իրավական կարգավորման հիմնադրույթներն են՝ ընդերքի ճանաչումը՝ որպես պետության բացառիկ սեփականություն*²⁰:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 6-րդ գլուխը Հայաստանի Հանրապետությանը դիտում է որպես առանձին քաղաքացիաիրավական սուբյեկտ, միաժամանակ ժողովրդին չդիտելով այդպիսին²¹: Այդուհանդերձ հարկ ենք համարում նշել, այս հարցի պատասխանը թերևս լրացուցիչ, խորը հետազոտման կարիք ունի և գոնե այս պահին միանշանակ պատասխան չունի: Մի կողմից Հոչակագրում, կարծես թե, չէր կարող տեղ գտնել այնպիսի մի բան, որը չէր արտահայտում օբյեկտիվ իրականությունը և օրենսդրական տեխնիկայի միջոցով անհրաժեշտ էր այդ բացը լրացնել, սակայն մյուս կողմից էլ, կարծես թե, առերևույթ օգտագործվել է իրավական ֆիկցիա, մասնավորապես, ժողովրդի միասնական կամքի մասով կամ ժողովրդի սեփականության մասով:

Ի տարբերություն Հոչակագրի՝ ՀՀ Սահմանադրությունում օգտագործվել է իրավական ֆիկցիաներ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում արդյո՞ք առկա են իրավական ֆիկցիաներ:

ՀՀ Սահմանադրությունը կազմելիս, շատ իրավիճակներ կարգավորելիս մենք դիմել ենք իրավական ֆիկցիաների օգնությանը: Օրինակ՝ 1995թ-ին ընդունված Սահմանադրության 74-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում էր. «*Կառավարությանն անվտանգություն հայտնելու մասին որոշման նախագիծ չներկայացվելու կամ նման որոշում չընդունվելու դեպքում նրա*

¹⁷ Տե՛ս Մինասյան Է., նշված աշխտ., էջ 204:
¹⁸ Տե՛ս ՀՍՍՀԳՍ 1964/17 (323), 13.06.1964, հոդ. 84:
¹⁹ Տե՛ս ՀՀԴՍ 2011/69 (872), 21.12.11, հոդ. 1661: ՀՀԴՍ 2012/ 4 (878), 18.01.12, ուղղում
²⁰ Տե՛ս ՀՀԴՍ 2001/17 (149), 15.06.01, հոդ. 457
²¹ ՀՀԴՍ 1998/17 (50), 10.08.98: ՀՀԴՍ 1998/17 (50), 10.08.98

գործունեության ծրագիրը համարվում է հավանության արժանացած»²² կամ 75-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանվել էր. «*Կառավարությունն իր ներկայացրած օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 74 հոդվածով սահմանված կարգով որոշում չի ընդունում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին, վերջինիս ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված»²³:*

Վկայակոչված նորմերում Սահմանադիրը դիմել է իրավական ֆիկցիայի օգնությանը բոլոր այն դեպքերում, երբ ինչ-ինչ պատճառներով կառավարության անվստահության վերաբերյալ որոշման նախագիծ չի ներկայացվում կամ այդպիսի որոշում չի ընդունվում, ապա համարվում է, որ կառավարության գործունեության ծրագիրը արժանացել է հավանության, այնինչ ակնհայտ է, որ օբյեկտիվ իրականության մեջ այն չի արժանացել: Նույն մոտեցումն է ցուցաբերվել նաև կառավարության կողմից ներկայացված օրենքի նախագծի դեպքում, և եթե Ազգային ժողովը անվստահություն չի հայտնել կառավարությանը, ապա համարվում է, որ վերջինս ներկայացրած օրենքի նախագիծն ընդունվել է, թեև կրկին պարզ է, որ օբյեկտիվ իրականության մեջ այն չի ընդունվել: Հարկ է նկատել, որ Սահմանադրության 2005թ. փոփոխություններով այս կարգավորումն էապես փոխվեց և Սահմանադիրը կառավարության գործունեության ծրագրի մասով հրաժարվեց դիմել իրավական ֆիկցիայի օգնությանը, ինչը, թերևս, հայեցակարգային մոտեցման արդյունք էր: Մասնավորապես, 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության 74.1-րդ հոդվածով Սահմանադիրը սահմանել էր, որ *Հանրապետության Նախագահն արձակում է Ազգային ժողովը, եթե Ազգային ժողովը երկու անգամ անընդմեջ երկու ամսվա ընթացքում հավանություն չի փայլիս կառավարության ծրագրին*²⁴:

2005թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ պահպանվեց մինչ այդ գործող 75-րդ

հոդվածի իրավաֆիկցիոն այն կարգավորումը, ըստ որի, Կառավարությունն իր կողմից ներկայացված օրենքի նախագծի ընդունման առնչությամբ կարող է դնել իր վստահության հարցը, և եթե Ազգային ժողովը չի ներկայացնում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին որոշման նախագիծ կամ նման նախագիծ ներկայացվելու դեպքում սահմանված ժամկետում որոշում չի ընդունում կառավարությանն անվստահություն հայտնելու մասին, ապա վերջինիս ներկայացրած օրենքի նախագիծը համարվում է ընդունված: Ինչպես տեսնում ենք, այս մասով իրավական ֆիկցիան չի փոփոխվել: 2005թ. խմբագրությամբ Սահմանադրության մեջ մենք հանդիպում ենք այլ իրավական ֆիկցիաների ևս, մասնավորապես, 90-րդ հոդվածի 1-ին մասում, ըստ որի, *Կառավարությունը պետական բյուջեի նախագիծն Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում բյուջեարային տարին սկսվելուց առնվազն իննսուն օր առաջ և կարող է պահանջել, որ այն իր կողմից ընդունված ուղղումներով քվեարկության դրվի մինչև այդ ժամկետի ավարտը: Բյուջեի հաստատման առնչությամբ կառավարությունը կարող է դնել իր վստահության հարցը: Եթե Ազգային ժողովը Սահմանադրության 75-րդ հոդվածով նախատեսված կարգով կառավարությանն անվստահություն չի հայտնում, ապա պետական բյուջեն՝ կառավարության կողմից ընդունված ուղղումներով, համարվում է հաստատված:*

2015թ. բարեփոխված Սահմանադրությամբ ևս նախատեսված է իրավական-ֆիկցիոն կարգավորումներ: Մասնավորապես, Սահմանադրության 115-րդ հոդվածի 2-րդ մասում նշված է, որ եթե Ազգային ժողովի կողմից ընդունվում է որոշում, որով անվստահություն է հայտնվում վարչապետին, **ապա համարվում է, որ վարչապետը հրաժարական է ներկայացրել**²⁵: Նմանատիպ կարգավորում է առկա նաև Սահմանադրության 150-րդ հոդվածում, ըստ որի, եթե Հանրապետության նախագահը եռօրյա ժամկետում չի նշանակում փոխվարչապետներ

²² ՀՀ Սահմանադրություն (ընդ. 05.07.1995թ.), հոդվ. 74, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=231/22.01.2021/>:

²³ Տե՛ս նույն տեղում, հոդվ. 75, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=231/22.01.2021/>:

²⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ.27.11.2005թ.) <https://www.president.am/hy/constitution-2005/22.01.2021/>:

²⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփ.06.12.2015թ.), <https://www.president.am/hy/constitution-2005/22.01.2021/>:

րին և նախարարներին և չի դիմում Սահմանադրական դատարան նրանց թեկնածությունների հետ կապված, ապա համապատասխան փոխվարչապետը կամ նախարարը նշանակված է համարվում իրավունքի ուժով: Այս ամենից ակնհայտ է, որ առանց իրավական ֆիլցիաների անհնար է արդյունավետ կերպով կարգավորել մի շարք իրավահարաբերություններ, այդ թվում նաև սահմանադրական մակարդակում: Ցավոք շատ դեպքերում ֆիլցիա բառը օգտագործվում է դրա կենցաղային մակարդակում, ինչն էլ իր հերթին ընկալվում է որպես ամենապարզ խաբկանքը:

Ամփոփելով, հարկենք համարում նշել, որ եթե Սահմանադրության մեջ ֆիլցիաների օգտագործումը ոչ միայն տրամաբանական է այլև անհրաժեշտ, ապա Հոչակագրի մասով խնդիրը մի փոքր այլ է: Մասնավորապես, լրացուցիչ հետազոտման կարիք ունի այն հարցը, ըստ որի, կարող էր պետականության ստեղծման հիմքերում դրվել մի բան, որը իրական չէ: Արդյո՞ք չի գործում այն կանխավարկածը, որ Հոչակագրի յուրաքանչյուր նորմը, ինչպես նաև նախաբանը արտահայտել են օբյեկտիվ իրակա-

նությունը և զերծ են եղել անիրականության տարրեր պարունակելուց: Արդյո՞ք օրենսդիրը կարիք է ունեցել դիմելու օրենսդրական տեխնիկայի միջոց՝ իրավական ֆիլցիային և գոյություն չունեցող երևույթը համարել գոյություն ունեցող:

Ընդ որում, այստեղ առկա են երկու հիմնական ուղղություն: Մի դեպքում օրենսդիրը դիմել է օրենսդրական տեխնիկայի կանոնին ընդգծելու համար, որ անկախ Հայաստանի Հանրապետություն ստեղծելը հայ ժողովրդի միասնական կամքն է, որի արտահայտողը Գերագույն խորհուրդն է, և որ մինչ այդ պետական սեփականություն հանդիսացող հողը, ընդերքը և այլն, Հոչակագրի ընդունմամբ սեփականության իրավունքով պատկանելու են ժողովրդին, իսկ մյուս կողմից՝ օբյեկտիվ իրականության մեջ, Գերագույն խորհուրդը իրապես արտահայտել է ժողովրդի **միասնական կամքը**, իսկ հողը, ընդերքը և այլն Հոչակագրի ընդունմամբ անցել են **ժողովրդի սեփականությանը**: Վերջիններս ուղղություններ են սրանք, որոնք առանձին վերցրած դեռևս ունեն խորը հետազոտման կարիք:



ՎԱՆԹԱՆԳ ԲԱԲԱՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, իրավունքի և սոցիոլոգիայի ինստիտուտի հայցորդ,
 ՀՀ Միասնական սոցիալական ծառայության նշանակման վարչության
 երրորդ բաժնի պետ

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԷՈՒԹՅՈՒՆ ՈՒ
 ՏԵՍԱԿՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

«Գործառույթ» հասկացությունը իրավագիտությունում ընդօրինակվել է այլ գիտություններից՝ մաթեմատիկայից, ֆիզիկայից, որտեղ այն արտահայտում է կախվածություն, երբ մեկ մեծության փոփոխումից որոշակի կերպով փոփոխվում է մեկ այլ մեծությունը¹: Ավելին, «գործառույթ» եզրույթը օժտված է տարաբնույթ նշանակությամբ: Փիլիսոփայական և ընդհանուր սոցիալական համատեքստում այն դիտարկվում է որպես «հարաբերությունների տվյալ համակարգում որևէ օբյեկտի հատկությունների արտաքին դրսևորում»²: Պետության և իրավունքի տեսությունում գործառույթը նշանակում է ուղղություն, այս կամ այն քաղաքական հաստատության գործունեություն, այդ գործունեության բովանդակություն: Հենց այդ իմաստով է խոսվում պետության, կառավարության և այլ պետական մարմինների գործառույթների մասին: Պետության գործառույթի հասկացությունը ի հայտ եկավ և լայնորեն օգտագործվեց պետության և իրավունքի տեսության զարգացման նախորդ փուլում: Պետության՝ մարքս-լենինյան մոտեցման շրջանակներում առանձնացվել է պետության էությունը, հասարակական-սոցիալական նշանակությունը: Քանի որ պետության գործունեության ուղղությունը, առարկան, բովանդակությունը և դրանց ապահովման մարմինների կառուցվածքային համակարգը փոխվում են կախված պետության ձևի և դասի փոփոխությունից, այդ կախվածության սահմանման համար միանգամայն տեղին է հենց գործառույթի հասկացությունը³:

Պետության և իրավունքի տեսության զարգացման ժամանակակից փուլում պահպանվում է պետության գործառույթային մոտեցումը ուղղ-

ված պետության գործող (ակտիվ) կողմին, բայց էական հստակեցմամբ ընդլայնվում է, խորացվում է պետության սոցիալական նշանակության հասկացությունը, մերժվում է կապը պետության հատկանիշների փոփոխությունների և նրա գործառույթներ միջև: Այդ կապը, ինչպես ցույց տվեց պատմական փորձը, մեր կարծիքով, բազմակողմանի է: Պետության գործառույթների վրա որոշիչ ազդեցություն են թողնում հասարակության ժամանակակից կենսագործունեության նոր պայմանները և խնդիրները (բնապահպանություն, միջուկային զենք, ժողովրդագրական, հումքային և այլ տիպի գլոբալ խնդիրներ), քաղաքակրթության առկայությունը: Հարկ է նշել, որ պետության գործառույթները հանդիսանում են պետական կառուցակարգ հասարակական գործընթացների և հարաբերությունների վրա ազդելու համար, որը որոշում է նրա գործունեության գլխավոր ուղղությունները հասարակության կայացման գործընթացում⁴: Այսպես՝ հայտնի ռուս իրավաբան Ի. Ա. Իլյինը նշում է, որ պետության էությունը այն է, որ նրա բոլոր քաղաքացիները, իրենց տարբեր շահերից և նպատակներից բացի, ունեն միասնական շահեր և նպատակներ, իսկ ավելի կոնկրետ՝ ընդհանուր շահ և ընդհանուր նպատակ: Պետության սոցիալական նշանակությունը և էությունը արտահայտվում է նրա գործառույթներում⁵:

Պետության գործառույթների մասին հարցը ունի ոչ միայն տեսական այլ նաև գործնական կարևորություն: Այն թույլ է տալիս տեսնել պետությունը ոչ միայն նրա ձևերի, ներքին կառուցվածքի և բովանդակության տեսանկյունից, այլ նաև բազմակողմանի գործունեության տե-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 125 2021

¹ Տե՛ս **Венгеров А.В.** Теория государства и права, М., 2000. стр. 85.
² Տե՛ս **Чепурнова Н.М, Серегин А.В.** Теория государства и права, М., 2008. стр. 27.
³ Տե՛ս **Венгеров А. В.** Теория государства и права. М. 2000, стр 87.
⁴ Տե՛ս **Морозова Л.А.** Теория государства и права, М. 2001 стр 79.
⁵ Տե՛ս **Абдулаев М.И.** Теория государства и права, М., 2004. стр. 32.

սանկյունից: Գործառույթների օգնությամբ հնարավոր է դառնում բավականին հստակ որոշել պետության գործունեության բնույթը:

Պետության գործառույթները նրա գործունեության հիմնական ուղղություններն են, որոնք արտահայտում են պետության էությունը և սոցիալական նշանակությունը, ուղղված են հասարակության պետական կառավարման նպատակների ու խնդիրների իրագործմանը:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ պետության գործառույթներն օժտված են մի շարք բնութագրիչ հատկանիշներով: Դրանք են.

1. Պետության գործառույթները սերտորեն փոխկապված են պետության խնդիրների հետ, սակայն նույնական չեն: Պետության խնդիրն այն է, ինչը լուծում է պահանջում, իսկ գործառույթն այդպիսի լուծմանն ուղղված գործունեության տեսակն է:

2. Պետության յուրաքանչյուր գործառույթ ունի իր ներգործության օբյեկտը: Օբյեկտը հասարակական հարաբերությունների որոշակի ոլորտն է (տնտեսություն, երկրի պաշտպանություն), որին ուղղված է պետական ներգործությունը: Օրինակ՝ պետության խնդիրներից մեկն էլ երկիրը արտաքին հարձակումներից պաշտպանելն է: Այդ խնդրի իրացման համար պետությունն իրականացնում է երկրի պաշտպանության գործառույթ, որը ենթադրում է զինված ուժերի (բանակի) ստեղծում, դրա անընդհատ կատարելագործում, բանակի մարտունակության և մարտական պատրաստականության բարձրացում և այլն:

3. Պետության գործառույթները կազմում են ենթահամակարգ, փոխկապակցված միասնություն, որի վրա վճռական ազդեցություն է թողնում պետության կառավարամ ձևը:

4. Պետության գործառույթները պետք է տարբերել պետական մարմնի գործառույթից: Առաջինը ներառում է պետության գործունեությունն ամբողջությամբ, ունի հավաքական, համալիր բնույթ, մինչդեռ պետական մարմնի գործառույթը նեղ է, մասնակի, պայմանավորված է միայն այդ մարմնի առջև դրված խնդիրներով:

5. Պետության գործառույթների շրջանակը քարացած չէ: Ցանկացած պետություն պետք է գործի մշտապես: Պետության անգործությունը հավասարազոր է և՛ պետության, և՛ հասարակության կործանմանը: Հետևաբար պետությունը իրականացնում է բազմաթիվ գործառույթներ: Դրանց առաջացումը, փոփոխումը կախված է զարգացման ընթացքում տվյալ պահին հասարակության առջև կանգնած խնդիրներից: Դարաշրջանային և այլ փոփոխությունները, պետության խնդիրների և առաջնահերթությունների վերակառուցումն անխուսափելիորեն հանգեցնում է գործառույթների և փոփոխության և գործառույթների բովանդակության վերակառուցման: Գործառույթների մի մասը անհետանում է, իսկ մյուս մասը առաջանում է: Սակայն կան գործառույթներ, որոնք մշտական են: Օրինակ՝ իրավական, ներառյալ իրավակարգի պահպանությունը՝ բնորոշ է բոլոր դարաշրջանների համար:

6. Պետության գործառույթներն իրականացվում են որոշակի ձևերով ու մեթոդներով, պայմանավորված հասարակության և պետության փոխհարաբերության օրինաչափությամբ⁶:

Պետության կողմից իր գործառույթների չկատարելը հասարակության կյանքում կրեթի բացասական հետևանքների: Պետության գործառույթների օբյեկտիվ բնույթը չի նշանակում, որ դրանք իրականացվում են մարդկանց կամքով ու գիտակցությամբ: Պետությունը գործում է արդյունավետ միայն այն ժամանակ, երբ նրա գործառույթները ընդհանուր առմամբ համապատասխանում են հասարակության օբյեկտիվ պահանջներին: Մեր կարծիքով՝ սկզբից պետք է ճանաչվեն օբյեկտիվ հասարակական պահանջները, հետո որոշվեն պետության գործառույթները և դրանց իրականացման մեխանիզմը⁷:

Պետության և իրավունքի տեսությունում պետության գործառույթներն դասակարգվում են մի շարք չափանիշներով, որոնցից են.

- ա. ըստ ուղղվածության (ոլորտների),
- բ. ըստ շարունակականության,
- գ. ըստ պետության տարածքի ընդգրկման,
- դ. ըստ պետության կառավարման ձևի⁸:

⁶ Տե՛ս Վաղարշյան Ա. Պետության և իրավունքի տեսություն, Եր., 2013, էջ 98-100:

⁷ Տե՛ս Алексеев С.С., Архипов С.И., Леушин В.И. Теория государства и права, М., 2003. С.127-128.

⁸ Տե՛ս Վաղարշյան Ա. նշված աշխտ., 2013, էջ 100:

Իր հերթին, ըստ հասարակական կյանքի բնագավառի, պետության գործառույթները բաժանվում են ներքին և արտաքին գործառույթների: Առաջինը պայմանավորված է պետության ներքին քաղաքականությամբ և նպատակամղված է երկրի ներքին խնդիրների լուծմանը, իսկ երկրորդը՝ պետության արտաքին հարաբերություններով և նպատակաուղղված է այլ պետությունների հետ որոշակի հարաբերությունների հաստատմանը, դրանց զարգացմանը, երկրի պաշտպանության ամրապնդմանը⁹:

Ըստ շարունակականության չափանիշի՝ պետության գործառույթները բաժանվում են մշտականի և ժամանակավորի: Ըստ պետության տարածքում գործողության՝ կարելի է առանձնացնել համապետական (համազգային) և լոկալ (տեղական) գործառույթները: Համապետական են այն գործառույթները, որոնք իրականացվում են պետության ողջ տարածքում և համատարած են: Տեղական գործառույթները սահմանափակվում են պետության տարածքի մի մասով: Օրինակ՝ ՀՀ-ն իրականացնում է 1988թ. երկրաշարժի հետևանքների վերացման գործառույթ աղետի գոտում:

Ըստ պետության էության հետ կապի՝ պետության գործառույթները դասակարգվում են համասոցիալականի և դասակարգայինի: Այս բաժանումը պայմանավորված է պետության էությամբ և սոցիալական առաքելությամբ¹⁰: Պետության ներքին գործառույթներ ասելով հասկանում ենք պետության գործունեության հիմնական ուղղությունները պետության ներսում: Այդ գործառույթները բազմաթիվ են և բազմազան, շրջափում են հասարակական հարաբերությունների գրեթե բոլոր բնագավառները¹¹: **Պետության ներքին գործառույթներն են՝ տնտեսական, սոցիալական, ֆինանսական վերահսկողության, իրավական, բնապահպանական (էկոլոգիական):**

1) Տնտեսական գործառույթի շրջանակներում գոյություն ունեն պետական տնտեսական կարգավորման երկու հիմնական մեթոդներ՝

ա. բավականաչափ ամուր ֆինանսական քաղաքականություն,

բ. բարենպաստ պայմանների ստեղծում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու համար:

2) Սոցիալական գործառույթը ընդգրկում է միջոցառումներ ուղղված անհատի սոցիալական ապահովության, առողջապահության, կրթության, հանգստի, սպասարկման, հաղորդակցության, հասարակության բոլոր անդամների կյանքի նորմալ պայմանների ապահովմանը:

3) Ֆինանսական վերահսկողության գործառույթը նախատեսված է ֆինանսատնտեսական, հարկային, մաքսային համակարգի կազմակերպման և վերահսկողության համար:

4) Իրավական գործառույթը ընդգրկում է իրավական կարգավորման նորմատիվային հիմքի (օրենսդրության) ստեղծում, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրավական ամրագրում և ապահովում, պահպանում, պաշտպանություն:

5) Բնապահպանական (էկոլոգիական) գործառույթն ուղղված է շրջակա միջավայրի պահպանությանը, վերականգնմանը և բարելավմանը, բնական ռեսուրսների պահպանության և ռացիոնալ օգտագործման ապահովմանը¹²: Էկոլոգիական (բնապահպանական) գործառույթը ժամանակակից պետության գործունեության նոր զարգացող ուղղություն է, որը կապված է աշխարհում էկոլոգիական (բնապահպանական) խնդիրների սրման հետ: Այն արտահայտվում է բնապահպանական օրենսդրության մշակման մեջ, որի շնորհիվ պետությունը սահմանում է բնության օգտագործման իրավական ռեժիմ¹³:

Ուշագրավ է այն փաստը, որ պետության արտաքին գործառույթների թվին է դասում ռազմական, արտաքին քաղաքական, արտաքին տնտեսական և մշակութային կապերի, էկոլոգիական գործառույթները: Վերջինս ապահովում է միջազգային համագործակցություն շրջակա միջավայրի պահպանության գործում: Որոշ հեղինակներ արտաքին գործառույթների համակարգում առանձնացնում են ուրիշի տարածք-

⁹ Տե՛ս Սաֆարյան Գ. Հ. Պետության և իրավունքի տեսություն(ուսումնական ձեռնարկ), Եր., 1996, էջ 32:

¹⁰ Տե՛ս Վաղարշյան Ա. նշված աշխտ. 2013, էջ 100-101:

¹¹ Տե՛ս Բաղդասարյան Գ. Պետության և իրավունքի տեսություն, Երևան, 2002, էջ 87:

¹² Տե՛ս Хропанюк В.Н. Теория государства и права. М.,2008. С. 146-147

¹³ Տե՛ս Григорьева И.В. Теория государства и права. Тамбов, 2009.С. 18-19

ների նվաճման և ազդեցության գոտիների ընդլայնման գործառույթը: Պատմաբանների հաշվարկով պետական հասարակության գոյության մոտ 5000 տարվա ընթացքում մարդկությունը 4700 տարի անընդհատ պատերազմել է: Ճիշտ է, արդի ժամանակաշրջանում ուղղակի ագրեսիան արգելված է, սակայն չի վերացել ուրիշների բնական ռեսուրսների նկատմամբ վերահսկողությունը, տնտեսական շահագործումը¹⁴:

Պետությունը իրականացնում է իր գործառույթները իրավական և կազմակերպական ձևերով: **Իրավագիտության մեջ գոյություն ունի պետության գործառույթների իրականացման ձևերի և մեթոդների միասնություն:** Այսպես՝ պետության օրենսդրական գործառույթը իրականացվում է ներկայացուցչական և օրենսդրական մարմինների կողմից և ուղղված է օրենքների հրապարակմանը, որոնք պարտադիր են սովյալ պետության տարածքում գտնվող անձնաց և պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների համար¹⁵: Պետության գործառույթների իրականացման կազմակերպչական ձևերն ունեն կառավարչական – փաստական բնույթ, զրկված են իրավական բովանդակությունից, չեն պահանջում խստագույն իրավական ձևավերպում, կապված չեն իրավականորեն նշանակալի գործողությունների հետ, չեն առաջացնում իրավական հետևանքներ: Որպես պետության գործառույթների իրականացման կազմակերպական ձևեր՝ առանձնացնում են կազմակերպական-կանոնակարգող, կազմակերպական-տնտեսական, կազմակերպական – գաղափարախոսական ձևերը: Կազմակերպական – կանոնակարգող ձևը ներառում է փաստաթղթերի նախագծերի պատրաստումը, պետական կառավարման կադրային ապահովումը, ընտրությունների կազմակերպումը և այլ ընթացիկ աշխատանքներ:

Կազմակերպական – տնտեսական ձևը ներառում է հաշվապահական հաշվառման, վիճակագրության, մատակարարման կազմակերպումը, ինչպես նաև օպերատիվ – տեխնիկական և

տնտեսական գործունեության ձևերը: Կազմակերպական – գաղափարախոսական ձևը ընդգրկում է պետական քաղաքականության և նորմատիվ ակտերի վերաբերյալ բնակչությանը տեղեկացնելը, դրանք բացատրելը, ինչպես նաև այլ քարոզչական, կրթական և դաստիարակչական գործունեությունը: Պետության գործառույթների իրականացման կազմակերպչական մեթոդներն այն եղանակներն են, որոնց օգնությամբ պետությունը ապահովում է իր գործառույթների իրականացումը: Սրանք մեծամասամբ ունեն սպասարկող նշանակություն: Օրինակ՝ սոցիոլոգիական հետազոտությունը (դիտարկում, անկետավորում, հարցում), ծրագրավորումը, հիմնախնդիրների հետազոտությունը, ընթացիկ վերլուծությունը, արդյունքների ամփոփումը¹⁶:

Այսպիսով՝ վերոգրյալի հիման վրա կարող ենք հանգել հետևյալ եզրակացության, որ պետության գործառույթները բազմազան են, նրանց ձևավորումը ընթանում է պետության ձևավորման և զարգացման գործընթացով: Պետության գործառույթներից յուրաքանչյուրն ասքի է ընկնում ինքնուրույնությամբ: Սակայն այդ ինքնուրույնությունը հարաբերական է, քանի որ գործառույթներից ամեն մեկը նախադրյալային, սպասարկող, երաշխավորող նշանակություն ունի մյուսի համար: Ակնհայտ է, որ տնտեսական գործառույթի կազմակերպված, խելացի իրականացումը, ճիշտ հարկային քաղաքականությունը նախադրյալ են սոցիալական գործառույթի բովանդակության իրականացման համար: Իրավական գործառույթի լիարժեք իրականացումը պատշաճ օրենսդրությունը և օրինականության հաստատումը պայմաններ են ստեղծում մնացած բոլոր գործառույթների պատշաճ և լիարժեք իրականացման համար: Ընդհանուր առմամբ պետք է փաստել, որ ժողովրդավարական պետության և հասարակության զարգացմանը համընթաց փոխվում է նաև պետության դերը, որը հանդիսանում է ոչ միայն որպես ճնշող ապարատ, այլ նաև հասարակական-քաղաքական կազմակերպություն, որն արտահայտում է ողջ հասարակության շահերը:

¹⁴ Տե՛ս **Протасов В.Н.** Теория права и государства. Проблемы теории права и государства. М.,1999. С. 118.

¹⁵ Տե՛ս **Колышкин Л.Ю.** Теория государства и права, М.,2004.С. 39.

¹⁶ Տե՛ս **Վաղարշյան Ա.** նշված աշխտ.էջ 108-110:

ԷԼՅԱ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ոստիկանության շտաբի միջազգային համագործակցության վարչության ավագ տեսուչ,
 ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՐԵՆԱԼՆԵՐԻ ՆԿԱՏԱՍԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ

1961թ. մանկաբույժ Հենրի Քեմպը Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի ամենամյա հանդիպմանը ներկայացրեց ֆունդամենտալ հետազոտության արդյունքները, որում առաջին անգամ նշվեց ծեծված երեխայի համախտանիշը: Կարելի է ասել, որ երեխաների հետ աշխատող մասնագետներն, այս ժամանակվանից ի վեր երեխաների նկատմամբ բռնության երևույթը սահմանեցին որպես հատուկ հիմնախնդիր, որի լուծումը պահանջում է տարբեր մասնագետների, հասարակության և ծնողների համատեղ ջանքեր¹:

Աշխարհում միլիոնավոր երեխաներ ամեն օր ենթարկվում են բռնության: Բռնությունը տեղի է ունենում տանը, ընտանիքում, դպրոցում, ուսումնական հաստատությունում և փողոցում, որտեղ նրանք կարող են դառնալ բռնության օբյեկտ՝ հարվածի, բուլինգի, պատժի, սեռական բռնության կամ նույնիսկ սպանության միջոցով: Շատ երեխաների համար չկա աշխարհում ոչ մի ապահով վայր²:

Միջազգային փաստաթղթերի և ՀՀ օրենսդրության համաձայն անչափահասներն օժտված են իրավունքների և ազատությունների համալիրով, այդ թվում՝ ծնողների կամ իրավասու այլ անձանց կողմից դաստիարակության և խնամքի իրավունքով: Ընտանիքը համարվում է երեխայի ձևավորման բնական միջավայրը: Հենց այստեղ են ձևավորվում մարդու հոգեբանական և ֆիզիկական առողջության հիմքերը:

Հաշվի առնելով հայ հասարակությունում ընտանիքի դերը, ինչպես նաև երեխաների դաստիարակության գործում առկա ավանդույթներն ու սովորույթները՝ թվում է, թե հիմնախնդիրն արդիական չէ մեր երկրի համար: Սակայն վերջին

ժամանակահատվածում, ըստ ՁԼՄ-ների և վիճակագրության, գործ ունենք այլ պատկերի հետ: Կան բազմաթիվ ծնողներ, որոնց մոտ ծնողական զգացմունքներն այլ կերպ են արտահայտվում: Նրանք բավականաչափ հոգատարություն չեն դրսևորում իրենց երեխաների նկատմամբ, դաժան վերաբերմունք են ցուցաբերում, ներքաշում հանցագործությունների կատարման և հակահասարակական գործողությունների մեջ: Ծնողների բացասական վերաբերմունքը պատճառ է հանդիսանում բարոյապես կոտրված անձի ձևավորման համար: Այսպիսի անձինք հասարակությունում առանձնանում են վառ արտահայտված հակահասարակական վարքով և համալրում հանցագործություն կատարած անձանց շարքերը:

Ընդհանուր առմամբ բռնությունը կամ դաժան վերաբերմունքը բազմաչափ երևույթ է: Եթե ծնողները երեխային պարբերաբար ծեծում են, ապա կասկած չի հարուցում այն փաստը, որ երեխաները ենթարկվում են հոգեբանական և հուզական բռնության, նրանց մոտ առաջանում են նյութական և բժշկական խնդիրներ, զրկվում են սեփական խնդիրների մասին այլոց բողոքելու հնարավորությունից:

«Երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունք» կամ «ընտանիքում երեխաների նկատմամբ բռնություն» արտահայտությունները համապատասխանում են «հարվածել», «պատժել», «չկերակրել», «հոգ չտանել», «չսիրել» արտահայտությունների հետ: Սակայն վարքագծի այս դրսևորումները չեն արտահայտում մեծահասակի կողմից երեխայի առողջությանը վնաս պատճառելու երևույթի ամբողջ էությունը:

Անգլալեզու գրականությունում հանդիպում ենք «Child abuse and neglect» տերմինը, որը

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 125 2021

¹ Международный симпозиум «Л. С. Выготский и современное детство», сб. тезисов / отв. ред. К. Н. Поливанова; Нац. исслед. ун-т «Высшая школа экономики», М.: Изд. дом Высшей школы экономики, 2017, ст. 33.
² Know Violence in Childhood. 2017. Ending Violence in Childhood. Global Report 2017. Know Violence in Childhood. New Delhi, India.

կարող ենք թարգմանել «երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունք և անտեսում»: Երեխաների նկատմամբ բռնության սահմանման տեսանկյունից հանդիպում ենք բազմաթիվ մոտեցումների: Հեղինակների մի մասը երևույթն ուսումնասիրելիս կենտրոնանում է բացառապես երեխաների նկատմամբ ֆիզիկական բռնության ուղղությամբ: Այլ հեղինակներ ուսումնասիրում են սեռական բռնության երևույթը: Երրորդ խմբի հեղինակները կենտրոնանում են երեխաների անտեսման կամ հոգեբանական բռնության հասկացության ուղղությամբ:

Սակայն երևույթն ինքնին միջդիսցիպլինար բնույթ ունի: Բժշկական ոլորտի աշխատակիցներն առնչվում են ֆիզիկական բռնության հետևանքներին, հոգեբանները՝ հոգեբանական փոփոխություններին, սոցիալական աշխատողները՝ այն ծառայությունների կամ ինստիտուտների աշխատանքին, որոնք աշխատում են ընտանիքի հետ, փաստաբանները՝ օրենքների ազդեցությանը բռնության կիրառման գործում և այլ հարցեր³:

Առավել հանցավոր ձևերն են առողջությանը դիտավորյալ վնաս հասցնելը կամ սպանությունը: Եվ այս իրավիճակում գործ ունենք զոհերի, դժբախտության հետ, եթե նրանք չունեն ոչ հոգեբանական, ոչ ֆիզիկական, ոչ տնտեսական և հաճախ ոչ էլ իրավաբանական ռեսուրսներ, որպեսզի իրենց պաշտպանեն նման տեսակի բռնությունից: Պատճառն առաջին հերթին այն է, որ զոհի դերում հանդես եկող երեխաներն ամբողջությամբ կախվածության ներքո են իրենց ծնողներից, և նրանց, նման վարքագծով հանդերձ, ընդունում են այնպիսին, ինչպիսին որ կան, առանց տարբերակելու սերն ու դաժանությունը:

Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքը (child maltreatment) սահմանում

է 18 տարին չլրացած անձանց նկատմամբ բռնությունը և անտեսումը: Այն ներառում է ֆիզիկական և հուզական, սեռական բռնությունը, անտեսումը, անփութությունը, առևտրային կամ այլ շահագործումը, ինչի արդյունքում վնաս է պատճառվում երեխայի առողջությանը, գոյատևմանը, բնականոն զարգացմանը կամ արժանապատվությանը, սոցիալական հարաբերություններում պատասխանատվությանը և վստահությանը⁴:

Միջազգային մասնագետները տարբերակում են նաև բռնության այնպիսի տեսակ, ինչպիսին է «harresment»-ը՝ սեռական բնույթի վերբալ և ոչ վերբալ հավակնությունները և չարաշահումները⁵, ինստիտուցիոնալ բռնությունը՝ մանկավարժական, երեխայի կամքին հակառակ խնամակալությունը, երեխաներին մանր իրավախախտումների համար հաշվառման մեջ վերցնելը և այլն⁶:

Խոսելով ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության մասին՝ կարելի է բռնության բոլոր տեսակները համախմբել 4 խմբերում՝ *ֆիզիկական, սեռական, հոգեբանական կամ հուզական և անտեսում*⁷:

Բռնության ձևերից ամենատարածվածը *ֆիզիկականն* է: Երեխաները ֆիզիկական բռնության հիմնական զոհերից են աշխարհում: Ֆիզիկական բռնությունն արտահայտվում է դեմքին հարվածելով, ապտակելով, հրելով, զոտիով կամ պարանոցով հարվածելով, ծանր առարկաներով կամ դանակով վնասելով և ցանկացած այլ գործողություն, որը ֆիզիկական հետևանքներ ունի⁸: Երեխաների դեպքում այն կարող է հանցավոր դառնալ՝ սպանություն (այդ թվում՝ նորածինների), ինքնասպանության հասցնելը, հիվանդ երեխային օգնության չհասնելը, վտանգի մեջ թողնելը, մարմնավաճառությամբ զբաղվելը, երեխաների թրաֆիքինգը և այլն:

Երեխաները հաճախ ֆիզիկական բռնու-

³ National Research Council 1993. *Understanding Child Abuse and Neglect*. Washington, DC: The National Academies Press. <https://doi.org/10.17226/2117>, p. 7.
⁴ Child maltreatment <https://www.who.int/news-room/fact-sheets/detail/child-maltreatment>
⁵ *Psychology of Women Quarterly*, 33 (2009), 21–24. Wiley Periodicals, Inc. Printed in the USA. Copyright C 2009 Division 35, American Psychological Association. 0361-6843/09, p. 21.
⁶ Schmidt, V. 2017. “Institutional Violence against Children: How to Cope with the Inevitable and the Unconquerable.” Background paper. Ending Violence in Childhood Global Report 2017. Know Violence in Childhood. New Delhi, India p. 7-8.
⁷ Fortson, B. L., Kleven, J., Merrick, M. T., Gilbert, L. K., & Alexander, S. P. (2016). Preventing child abuse and neglect: A technical package for policy, norm, and programmatic activities. Atlanta, GA: National Center for Injury Prevention and Control, Centers for Disease Control and Prevention. p. 8.
⁸ <https://www.healthline.com/health/mental-health/types-of-child-abuse#physical-abuse>

թյան զոհ են դառնում խտրականության պատճառով, որի հիմքում կարող է ընկած լինել հաշմանդամությունը, արտաքին տեսքը, սեռական կողմնորոշումը, ռասայական, էթնիկ կամ կրոնական ուղղվածությունը և այլն⁹։

Բռնության հաջորդ տեսակը *սեռական բռնությունն է*։ Անգլերեն տերմինաբանությամբ՝ child sexual abuse: Ամերիկացի հետազոտողներն այս տերմինը սահմանում են որպես երեխայի նկատմամբ ցանկացած տեսակի սեռական գործողություն (այդ թվում՝ սեռական օրգանների փաղաքշանք, մերկ մարմնին դիպել, արյունապղծություն, բռնաբարություն, սեռական շահագործում, պոռնոգրաֆիկ նյութերում նկարահանում և այլն) դեռահաս կամ չափահաս անձի կողմից¹⁰։

Երեխաների նկատմամբ սեռական բռնությունը երեխայի ներգրավումն է սեռական գործողություններում, որոնք նա լիովին չի հասկանում, որոնց երեխան, իր տարիքին համապատասխան զարգացման առանձնահատկություններից ելնելով, չի կարող տալ համաձայնություն, որոնք խախտում են հասարակությունում առկա արժեքներն ու նորմերը։ Երեխայի նկատմամբ սեռական բռնությունը դրսևորվում է երեխայի և մեծահասակի միջև վստահություն և իշխանություն ենթադրող հարաբերություններում։ Այսպիսի գործողությունները կարող են ներառել, բայց չսահմանափակվել հետևյալ արարքներով.

- երեխային հարկադրանքի կամ սպառնալիքի միջոցով ցանկացած անօրինական սեռական գործունեության մեջ ներգրավելով,
- երեխայի շահագործումը մարմնավաճառության կամ այլ սեռական ակտիվության մեջ,
- երեխաների շահագործումը պոռնոգրաֆիկ տեսանյութերում¹¹։

Նման գործողությունները կարող են լինել ինչպես ուժի կիրառմամբ, այնպես էլ երեխա-

ների համաձայնությամբ։ Սակայն այն համարվում է հանցավոր արարք, անկախ երեխայի համաձայնությունը ստանալու հանգամանքից, քանի որ նրանք, իրենց տարիքի հոգեբանական և ֆիզիկական առանձնահատկությունները հաշվի առնելով, չեն կարող հասկանալ այդ գործողությունների էությունը։

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ աշխարհում յուրաքանչյուր 8-րդ երեխան իր կյանքի ընթացքում ենթարկվել է սեռական բռնության¹²։

Ինչպես նշեցինք՝ բռնության հաջորդ տեսակը *հոգեբանական կամ հուզական բռնությունն է*։ Եվ ֆիզիկական, և սեռական բռնության ենթարկված երեխաների մոտ անխուսափելիորեն վերանում են ընտանեկան սիրո և վստահության զգացողությունները, առաջանում է վախ, ընդհանուր առմամբ հոգեբանական բռնություն։ Հոգեբանական բռնությունը զուգակցվում է ֆիզիկական կամ սեռական բռնության հետ։ Հոգեբանական բռնություն է համարվում այնպիսի վարքագիծը, որը վնասում է երեխայի ինքնազնահատականը և հուզական ոլորտը։ Այն կարող է արտահայտվել երեխային այլ անվամբ կոչելով, ամոթալի իրավիճակում դնելով, մերժելով, սիրո բացակայությամբ և սպառնալիքներով¹³։

Մանկաբուժության ամերիկյան ակադեմիայի հետազոտությունների շրջանակում հոգեբանական բռնությունը սահմանվում է որպես ընտանիքի անդամի կողմից գործողություն (մերժում, ահաբեկում) կամ անգործություն (երեխաների սոցիալական փոխազդեցությունների անտեսում), որը կարող է լինել վերբալ և ոչ վերբալ, ակտիվ և պասիվ, վնաս պատճառելու դիտավորությամբ կամ առանց դիտավորության, և որը բացասական է ազդում երեխայի կոգնիտիվ, սոցիալական, հուզական և ֆիզիկական զարգացման վրա։ Հոգեբանական բռնությունը հանգեցնում է զարգացման, կրթության, սոցիալականացման, ա-

⁹ Know Violence in Childhood. 2017. Ending Violence in Childhood. Global Report 2017. Know Violence in Childhood. New Delhi, India., p. 6.

¹⁰ Child Neglect: A Guide for Prevention, Assessment, and Intervention, p. 90.

¹¹ https://www.who.int/violence_injury_prevention/resources/publications/en/guidelines_chap7.pdf 7 Child sexual abuse, էջ 75

¹² United Nations Children's Fund (2020) Action to end child sexual abuse and exploitation: A review of the evidence, UNICEF, New York, p. 32.

¹³ Fortson, B. L., Klevens, J., Merrick, M. T., Gilbert, L. K., & Alexander, S. P. (2016). Preventing child abuse and neglect: A technical package for policy, norm, and programmatic activities. Atlanta, GA: National Center for Injury Prevention and Control, Centers for Disease Control and Prevention. p. 8.

պակառուցողական վարքագծի և հոգեկան շեղումների խնդիրների¹⁴:

Ընտանիքում հոգեբանական բռնությունը ներառում է.

1. Մերժում՝ ստորացում, ծաղրել, քննադատություն, հանրային նվաստացում և այլն,

2. Ահաբեկում՝ կյանքին սպառնացող արարքներ. ստիպել երեխային զգալ անպիտան, ոչ իրատեսական սպասումներ, որոնց չկատարման արդյունքում երեխային կորցնելու սպառնալիք, վտանգի մեջ թողնելու սպառնալիք, բռնության գործադրման սպառնալիք երեխայի համար սիրելի անձանց կամ կենդանիների նկատմամբ,

3. Շահագործում կամ անառակացում (հակահասարակական վարքագծի խրախուսում)

4. Հուզական արձագանքի մերժում՝ երեխայի նկատմամբ սիրո և ուշադրության արտահայտման ձախողում կամ անկարողություն,

5. Մեկուսացում՝ ազատ տեղաշարժի և սոցիալական շփումների արգելք,

6. Անհետևողական դաստիարակություն,

7. Հոգեկան, բժշկական և կրթական կարիքների անտեսում,

8. Ընտանիքի այլ անդամների միջև առկա բռնություն¹⁵:

Բռնության հաջորդ տեսակն *անտեսումն է* երեխայի պահանջումների չբավարարումը: Անտեսումը կարող է արտահայտվել չկերակրելով, հագուստով չապահովելով, բժշկական օգնություն չցուցաբերելով, եղանակին ոչ համապատասխան հագուստ տրամադրելով: Գոյություն ունի նաև կրթական անտեսում, որը վերաբերում է երեխային կրթությամբ չապահովելուն: Անտեսում է նաև հոգատարության, սիրո բացակայությունը¹⁶: Այն կարող է հանգեցնել երեխայի ֆիզիկական և հոգեբանական առողջության վատթարացմանը: Այս իրավիճակին համապատասխան գոյություն ունի «պասիվ անտեսում» հասկացությունը, որը նշանակում է ե-

րեխաների մեկուսացում, միայնակ թողնել առանց հետևելու և հաճախ նաև մերժումը¹⁷:

ԱՄՆ առողջապահության և սոցիալական ծառայությունների նախարարության ներքո գործող երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի և անտեսման գրասենյակի զեկույցներում անտեսման տեսակները դասակարգվում են մի քանի խմբերում.

- ֆիզիկական անտեսում (լքում, արտաքսում, այլ անձանց հսկողության տակ թողնելը, վտարում, սննդային անտեսում, հագուստի անտեսում, հիգիենայի անտեսում և այլն),
- բժշկական անտեսում, (առողջության ապահովման մերժում, առողջության ապահովման ուշացում),
- ոչ պատշաճ վերահսկողություն,
- հուզական անտեսում,
- կրթական անտեսում¹⁸:

Ընդհանուր առմամբ ընտանիքում երեխաների նկատմամբ բռնի գործողությունները կարելի է պայմանականորեն բաժանել 2 խմբի՝ *անձնավորված* և *ապասանձնավորված*: Առաջինի դեպքում միջանձնային կամ ներընտանեկան հարաբերությունների ենթատեքստում բռնությունն ուղղված է ընտանիքում երեխաներից կոնկրետ մեկին: Ապասանձնավորված բռնության դեպքում գործ ունենք բռնության այնպիսի դեպքերի հետ, որոնք հիմնվում են բռնարարի ներքին հոգեբանական վիճակի վրա. նրանց նպատակը ոչ թե երեխային վնասելն է, այլ հոգեբանական պահանջումների բավարարումը, և այս պարագայում բռնարարն ի սկզբանե չի ընտրում իր բռնության օբյեկտին:

Ընտանիքում երեխաների նկատմամբ բռնությամբ կատարվող վերոնշյալ գործողությունները կարելի է դասակարգել նաև, ըստ վտանգավորության աստիճանի, հետևյալ խմբերում.

- Պանդեմիկ (ամենատարածված տեսակն է)՝ քույր-եղբայրների միջև, ծնողների և

¹⁴ Psychological Maltreatment Roberta Hibbard, Jane Barlow, Harriet MacMillan and the Committee on Child Abuse and Neglect and AMERICAN ACADEMY OF CHILD AND ADOLESCENT PSYCHIATRY, Child Maltreatment and Violence Committee Pediatrics August 2012, p. 372.

¹⁵ The Psychological Maltreatment of Children—Technical Report, Steven W. Kairys, Charles F. Johnson and Committee on Child Abuse and Neglect, Pediatrics 2002; p. 1.

¹⁶ Child Neglect: A Guide for Prevention, Assessment, and Intervention, Diane DePanfilis, 2006, p. 89.

¹⁷ The Psychological Maltreatment of Children—Technical Report, Steven W. Kairys, Charles F. Johnson and Committee on Child Abuse and Neglect, Pediatrics 2002; p. 38.

¹⁸ Child Neglect: A Guide for Prevention, Assessment, and Intervention, Diane DePanfilis, 2006, p. 11-14.

ընտանիքի այլ բարեկամների կողմից երեխաների նկատմամբ ֆիզիկական և վերբալ ագրեսիա,

- Սուր (դրվագային բնույթ ունեցող)՝ բռնաբարություն, ֆիզիկական և սեռական շահագործում, ծնողների կողմից ոչ պատճառ խնամատարություն
- Էքստրաօրդինար (հազվագյուտ հանդիպող)՝ երեխաների առևանգում, սպանություն¹⁹:

Այն ընտանիքները, որտեղ հարաբերությունները կառուցվում են բռնության հիման վրա, համարվում են բարձր ռիսկայնություն ունեցողներ: Յուրաքանչյուրն, ով ապրում է ընտանեկան բռնության պայմաններում, երբեք չի կարող իրեն հոգեբանորեն անվտանգ զգալ: Ընտանիքում առկա բռնությունն իր դրսևորման յուրահատուկ ձևերն է ունենում երեխաների նկատմամբ:

1. Տրավմատիկ սթրեսային հակազդեցություն՝ բնորոշ է բռնության ենթարկված երեխաներին և արտահայտվում է վախի և տագնապայնության զգացողություններով, քնի խախտմամբ, ախորժակի բացակայությամբ, անհանգստությամբ:

2. Կասկածամտություն և անվստահություն՝ բռնության ենթարկված երեխաները դժվարությամբ են սկսում վստահել մեծահասակներին: Նրանցից շատերն աշխարհը համարում են վտանգավոր վայր: Նրանք ոչինչ այլև չեն սպասում իրենց ծնողներից և շրջապատից: Այս երեխաները մշտապես կարծում են, որ բոլորը փորձում են իրենց ցավ պատճառել:

3. Ընկճախտ և ինքնասպանության վարքագիծ՝ բռնության ենթարկված երեխաների մոտ հաճախ կարող են դրսևորվել ընկճախտի ախտանիշներ, որոնք արտահայտվում են տխրությամբ և դրական զգացողությունները չընդունելու հակումով: Առավել ուժեղ արտահայտված ընկճախտի դեպքում երեխայի մոտ առաջանում են ինքնասպանության մտքեր:

4. Իմպուլսիվություն և վարքագծային խանգարումներ՝ այս դեպքում երեխաները

հաճախ դրսևորում են ապակառուցողական և անվերահսկելի վարքագիծ տանը և դպրոցում: Նրանք առանձնանում են հասակակիցների և քույր-եղբայրների նկատմամբ ագրեսիվությամբ: Այս երեխաները կարող են հաճախ փախուստի դիմել տանից:

5. Ցածր ինքնագնահատական՝ այս դեպքում երեխաներն իրենց նկատմամբ դժգոհություն և արհամարհանք են դրսևորում: Այս երևույթը հիմնականում հատուկ է սեռական բռնության ենթարկված երեխաներին, որոնք ամոթի և մեղքի զգացողություններ ունեն իրենց հետ կատարվածի համար:

6. Դպրոցում հետաքրքրության կորուստ՝ բռնության ենթարկված երեխաների մոտ ձևավորվում է թերարժեքության զգացողություն: Նրանք ամեն պահի սպասում են անհաջողության և կորցնում են իրենց ուժերի հանդեպ հավատը²⁰:

Այսպիսով՝ խոսելով ընտանիքում երեխաների նկատմամբ բռնության մասին, կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյո՞ք երեխայի նկատմամբ բռնություն գործադրող անձն իր կողմից կատարված գործողությունները որակում է որպես բռնություն: Այս պարագայում առաջարկում ենք բռնության սահմանումը տալիս կարևորել կողմերի սուբյեկտիվ ընկալումները:

Կարևոր է նաև բռնության նպատակը: Չէ՞ որ ծնողները որոշ գործողություններ կատարում են երեխայի շահերից ելնելով՝ դասերը սովորել, ստիպել դեղահաբ ընդունել, հաճախել երաժշտական դպրոց (բազմաթիվ հայտնի երգահանների մանուկ հասակում ծնողները ստիպել են զբաղվել երաժշտությամբ) և այլն:

Երեխաների նկատմամբ բռնությունից խոսելիս՝ պետք է նաև ուշադրություն դարձնել, թե երեխան որ տարիքային խմբում է: Դեռահասության տարիքի երեխաներն ավելի բարձր իրավագիտակցություն ունեն, քան փոքրերը: Հետևաբար վերջիններս ավելի «պաշտպանված» են, քան՝ մնացածը:

¹⁹ Насилие над детьми: Сходство и различие психологических последствий И.А. Фурманов, «Теоретические и прикладные аспекты кризисной психологии». Сб. науч. трудов. – Мн.: НИО, 2001. – С. 150-158.

²⁰ Насилие над детьми: Сходство и различие психологических последствий И.А. Фурманов, «Теоретические и прикладные аспекты кризисной психологии». Сб. науч. трудов. – Мн.: НИО, 2001. – С. 150-158, էջ 150:

ԶԱՎԵՆ ՍՄՐԱՏՅԱԼ

ԵՀ, իրավագիտության ամբիոն, հայցորդ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՈՒՂԱԿԻ ԵՎ ԱՆՈՒՂԱԿԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Իրավունքի գերակայության երաշխավորման, անձանց օրենքի ոգով դաստիարակելու, վերջիններիս մոտ հակաիրավական վարքագծի դրսևորումների բացառման գործում կորդինալ տեղ է զբաղեցնում վարչական պատասխանատվության միջոցի կիրառումը՝ որպես իրավաբանական պատասխանատվության տեսակ:

Վարչական պատասխանատվությունը կիրառվում է վարչական զանցանքի համար: ՀՀ-ում վարչական պատասխանատվությունն իրականացվում է ինչպես դատական, այնպես էլ արտադատական կարգով:

Վարչական իրավախախտումները՝ որպես հակաիրավական վարքագծի ուրույն տեսակ, կարող են դրսևորվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևով:

Վարչական իրավախախտման ուղղակի դրսևորման ինստիտուտն իր էությամբ ավելի պարզ է, քան վարչական իրավախախտման անուղղակի դրսևորման ինստիտուտը:

Վարչական իրավախախտման ուղղակի դրսևորումն, ըստ էության, վարչական իրավախախտումն անձի կողմից անձամբ կատարելն է:

Այսինքն՝ անձն ինքն է դրսևորում հակաիրավական վարքագիծ, որը կարող է արտահայտվել ինչպես գործողությամբ, այնպես էլ անգործությամբ: Գործողությամբ է դրսևորվում, օրինակ, արգելված տեղում անասուններ պահելը, իսկ անգործությամբ է դրսևորվում, օրինակ, վթարի փաստի թաքցնելը:

Ի տարբերություն վարչական իրավախախտման ուղղակի դրսևորման՝ վարչական իրավախախտման անուղղակի դրսևորումն ավելի լայնաբովանդակ է, դրա էությունն այն է, որ անձը վարչական պատասխանատվության է ենթարկվում ոչ անձամբ իր կողմից կատարված իրավախախտման համար:

Իրավախախտման անուղղակի դրսևոր-

ման ինստիտուտի կարևոր տարր է այն հանգամանքը, որ անուղղակի վարչական իրավախախտում կարող է կատարվել միայն ֆիզիկական անձի կողմից (այդ թվում պաշտոնատար անձնաց):

Չի կարող իրավախախտումն անուղղակի կերպով դրսևորվել անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից:

Վարչական իրավախախտումն անուղղակի ձևով կարող է դրսևորվել երկու իրավական եղանակներով՝

1. վարչական իրավախախտման անուղղակի դրսևորում՝ պայմանավորված որոշակի պաշտոնական դիրքով,
2. վարչական իրավախախտման անուղղակի դրսևորում՝ պայմանավորված որոշակի իրավունքների առկայությամբ:

Թվարկվածներից առաջինի էությունն այն է, որ անձը զբաղեցնելով, որևէ պաշտոնատար դիրք, կարող է վարչական պատասխանատվության ենթարկվել ի պաշտոնե:

Պաշտոնատար դիրք եզրույթը վերաբերում է ինչպես պետական որոշակի պաշտոնի զբաղեցմանը (աշխատակազմի ղեկավար, աշխատակազմի քարտուղար, գլխավոր քարտուղար), այնպես էլ մասնավոր ոլորտի իրավաբանական անձի ղեկավար պաշտոն զբաղեցնելուն (տնօրեն, նախագահ և այլն):

ՎԻՎ օրենսգրքի 9-րդ հոդվածով սահմանված հասկացությունից բխում է, որ վարչական իրավախախտման առկայության փաստի մասին կարող է խոսվել միայն հետևյալ հատկանիշների միաժամանակյա առկայության դեպքում՝

1. Կատարված արարքը պետք է ունենա հակահասարակական բնույթ,
2. Կատարված արարքը պետք է ունենա հակաիրավական բնույթ,
3. Արարքի դրսևորման մեջ անձը պետք է ունենա մեղավորություն,

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 125 2021

4. Կատարված արարքը պետք է առաջացնի պատասխանատվություն (արարքի պատժելիությունը):

Նշված հատկանիշների շարքից անհրաժեշտ է առանձնացնել թվով երրորդ հատկանիշը, այն է՝ արարքի դրսևորման մեջ անձը պետք է ունենա մեղավորություն, այսինքն՝ զանցանքի սուբյեկտիվ կողմը, որի հատկանիշն, ըստ էության, մեղքն է, անձի հոգեբանական, կամային, գիտակցական վերաբերմունքն իր կողմից դրսևորված հակաիրավական վարքագծի նկատմամբ: Ըստ էության՝ զանցանքի սուբյեկտի կողմը կարող է դրսևորվել միան դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

Նմանօրինակ դրսևորման օրենսդրական ուղղակի ամրագրումը վկայում է այն մասին, որ ՎԻՎ օրենսգրքի իմաստով վարչական պատասխանատվության կարող են ենթարկվել միայն ֆիզիկական անձինք:

Այսինքն՝ իրավաբանական անձինք չեն կարող հանդես գալ որպես ՎԻՎ օրենսգրքով նախատեսված հակաիրավական արարք կատարելու համար վարչական պատասխանատվության սուբյեկտ:¹

Վերոգրյալ իրավական դիրքորոշումն ավելի քան առարկայական ընդհանրացում է վարչական իրավախախտում կատարած իրավաբանական անձի կողմից վարչական պատասխանատվության միջոցի կիրառման հայեցակարգի ընդգծումը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի իմաստով իրավաբանական անձը չի կարող ենթարկվել վարչական պատասխանատվության, իսկ վերջինիս մեղքը, կատարված տվյալ իրավախախտման մեջ դրսևորվում է որպես պաշտոնատար անձ, այսինքն՝ պատասխանատվության միջոցի կիրառումը պայմանավորված է ոչ թե վերջինիս ուղղակի գործողությամբ, այլ անուղղակի՝ որոշակի պաշտոնեական դիրք զբաղեցնելով:

Նույն իրավիճակն է դրսևորվում անհատ ձեռնարկատիրոջ կողմից վարչական իրավախախտում կատարելու դեպքերում: Անհատ ձեռնարկատերը ևս չի կարող ենթարկվել վարչա-

կան պատասխանատվության, վարչական պատասխանատվության կարող է ենթարկվել անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը՝ որպես պաշտոնատար անձ:

ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադառնալով Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված իրավախախտումների՝ անհատ ձեռնարկատիրոջ կողմից կատարման հայեցակարգին, ինչպես նաև անդրադառնալով «պաշտոնատար անձ» եզրույթի հասկացությանը՝ արձանագրել է հետևյալը. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում բացակայում է «պաշտոնատար անձ» հասկացության սահմանումն այդ օրենսգրքի իմաստով, հետևաբար, «պաշտոնատար անձ» և «քաղաքացի» հասկացություններն «Իրավական ակտերի մասին. ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի հիման վրա պետք է մեկնաբանվեն ընդհանուր իմաստով՝ չփոխելով դրանց էությունը, չնեղացնելով կամ չընդլայնելով դրանք, ընդ որում, ի նկատի ունենալով այն, որ դրանցից մեկի վերաբերյալ տրված մեկնաբանությունը որոշակիացնում է մյուսի հասկացության տրամաբանական մեկնաբանության սահմանները: Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում «պաշտոնատար անձ» հասկացության մեկնաբանման համար հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ օրենսգիրքը ընդունվել է դեռևս 1986 թվականին՝ Խորհրդային ժամանակներում, երբ պաշտոնատար անձ հասկացության տակ հասկացվում էր միայն պետական իշխանական լիազորություններով օժտված անձը: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի առաջին հոդվածի համաձայն՝ ի թիվս այլ խնդիրների, Վարչական իրավախախտումների մասին ՀՀ օրենսդրության խնդիրներից է կանխել իրավախախտումները, իսկ «պաշտոնատար անձի» և «քաղաքացու» նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցի տարբերակումը նպատակ է հետապնդում ավելի խիստ պատասխանատվության ենթարկել սահմանված կանոնների կատարման ապահովման պարտականություն

¹ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանը թիվ 3-1787 քաղաքացիական գործի շրջանակներում 28.09.2006 թվականին կայացված նախադեպային որոշումը:

կրող անձին, տվյալ դեպքում պաշտոնատար անձին:²

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի առաջին հոդվածը պարունակում է ուղղակի ամրագրում՝ անհատ ձեռնարկատիրոջ ձեռնարկատիրական գործունեության նկատմամբ իրավաբանական անձանց գործունեությունը կանոնակարգող կանոնների կիրառման վերաբերյալ:

Ասվածի լույսի ներքո, հարկ է արձանագրել, որ իրավասու մարմինն յուրաքանչյուր դեպքում պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու մասին որոշման իրավազատությունը ստուգման ենթարկելիս, պետք է հաշվի առնի Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 14-րդ հոդվածի դիսպոզիցյայով սահմանված հայեցակարգը, որում ամրագրված պաշտոնական պարտականություն հասկացությունը ՀՀ գործող օրենսդրության շրջանակներում պետք է մեկնաբանել որպես կազմակերպչական ու կառավարչական գործառույթներ:

Նշված մեկնաբանության տրամաբանությունը հիմնված է այն իրավական դատողության վրա, ըստ որի, թեև անհատ ձեռնարկատերը ձևականորեն օբյեկտիվ իրականությունում որևէ պաշտոնեական դիրք չի զբաղեցնում, սակայն իրենց գործունեությունն ծավալելիս նրանք իրականացնում են դրա կառավարում ու կազմակերպումն այնպես, ինչպես դա կիրառործեր նմանօրինակ գործունեությամբ զբաղվող որևէ իրավաբանական անձի ղեկավարը՝ պաշտոնատար անձը:

Հետևապես, այդ պարագայում, երբ ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է որպիսի անհատ ձեռնարկատիրոջ գործունեության կանոնակարգման նկատմամբ կիրառեն այն նույն կանոններն ինչ իրավաբանական անձի գործունեության նկատմամբ, ապա անհատ ձեռնարկատերը վարչական պատասխանատվության իմաստով նույնպես պետք է որակվի որպես պաշտոնատար անձ, այն հանգամանքի ուժով, որ նա իրականացնում է առաջինի հետ

բնույթով նույնանման կազմակերպչական ու կառավարչական գործառույթներ:

Ի տարբերություն որոշակի պաշտոնեական դիրքով պայմանավորված վարչական պատասխանատվության միջոցի կիրառմանը՝ Վարչական իրավախախտման անուղղակի դրսևորման մյուս տեսակը պայմանավորված է անձի մոտ որոշակի իրավունքի առկայությամբ:

Այսինքն՝ անձն ունենալով որոշակի իրավունքներ, ինքն է իր ռիսկով պատասխանատվություն կրում այդ իրավունքների՝ այլ անձանց կողմից միջնորդավորված չարաշահման համար:³

Վարչական իրավախախտումների անուղղակի դրսևորման այս տեսակը կարող է պայմանավորված լինել օրինակ սեփականության, վարձակալության, գույքի անհատույց օգտագործման և այլ իրավունքների առկայության դեպքերում:

Վերոգրյալից հետևում է, որ իրավունքից օգտվելու հնարավորությունն իր կամքով առանց իրավական հիմքի հանձնելով այլ անձի հայեցողությանը, այդ իրավունքի հասցեատերը պետք է ապահովի, որ իրավունքն իրացվի երրորդ անձի կողմից իրավաչափ, և կրում է դրա չապահովման բացասական հետևանքների ռիսկը՝ վարչական պատասխանատվության ենթարկվելու ձևով:

Փաստորեն, տվյալ դեպքում իրավունքի հասցեատերն ենթարկվում է վարչական պատասխանատվության ոչ թե այլ անձի կողմից, այլ իր կողմից մեղավորությամբ կատարված արարքի համար, ինչը համապատասխանում է «անձնական պատասխանատվության» և «ըստ մեղքի պատասխանատվության» սկզբունքներին:⁴

Իհարկե այս դատողությունը կիրառելի չէ բոլոր դեպքերի համար, սակայն վարչական պատասխանատվության սուբյեկտի ճիշտ ընտրություն կատարելու հարցի պարզման նպատակով անհրաժեշտ է քննարկման առարկա դարձնել նաև այս հանգամանքը:

Օրինակ՝ Վարչական իրավախախտումներ

² Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության Կոտայքի մարզային կենտրոնի հայցի ընդդեմ Սեդա Ադամյան՝ վարչական տուգանքը բռնագանձելու պահանջով թիվ 3-690/ՎԴ քաղաքացիական գործով 30.03.2007 թվականի որոշումը:

³ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանը, 21.06.2016 թվականի թիվ ՍԴՈ-1282 որոշումը:

⁴ Տե՛ս ՀՀ սահմանադրական դատարանը, 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշումը:

րի վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի առաջին մասի առաջին պարբերությունը վարչական պատասխանատվություն է նախատեսում սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձանց կողմից այդ հողամասի վրա շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու, ինչպես նաև բազմաբնակարան շենքերում կամ շենքերին կից ինքնակամ կառույցներ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմի տրամաբանությունից բխում է, որ անձը, ունենալով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք, կրում է այդ գույքի միջոցով կամ այդ անշարժ գույքի տարածքում հակաիրավական վարքագծի դրսևորումների բացառման պոզիտիվ պարտականություն, իսկ այդ պարտականության ոչ պատշաճ իրականացման կամ առհասարակ անտեսման պայմաններում հնարավոր բացասական հետևանքների ռիսկը կրում է հենց գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող անձը:

Ասվածի դասական օրինակ է ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների համար կիրառվող վարչական պատասխանատվության միջոցը, որպիսի իրավահարաբերության մասին իրավական դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը:⁵

Այսպիսիով՝ վերոգրյալ երկու հայեցակարգերի ընդհանրացումից հանգում ենք հետևյալ իրավական դիրքորոշումներին՝

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված իրավախախտումներ կատարելու համար, որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող են հանդես գալ միայն ֆիզիկական անձինք:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքից բացի, այլ իրավական ակտերում (օրինակ՝ Հարկային օրենսգրք, «Գովազդի մասին» ՀՀ օրենք և այլն) նախատեսված վարչական իրավախախտումներ կատարելու համար, որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ կարող են հանդես գալ ինչպես ֆիզիկական անձինք, այնպես էլ ի-

րավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը:

3. Այն դեպքում, երբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված իրավախախտումներ կատարվում է ֆիզիկական անձի կողմից ուղղակի դրսևորմամբ, ապա վարչական պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում տվյալ ֆիզիկական անձը:

4. Այն դեպքում, երբ իրավաբանական անձանց կողմից դրսևորվում է հակաիրավական վարքագիծ, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված է վարչական պատասխանատվություն, ապա որպես պաշտոնատար անձ, վարչական պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավարը՝ տնօրենը, նախագահը և այլն (որպես պաշտոնատար անձ):

5. Այն դեպքում, երբ անհատ ձեռնարկատերերի կողմից դրսևորվում է հակաիրավական վարքագիծ, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված է վարչական պատասխանատվություն, ապա վարչական պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում, անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձը (որպես պաշտոնատար անձ):

6. Այն դեպքում, երբ պետական կամ համայնքային մարմինների կողմից դրսևորվում է հակաիրավական վարքագիծ, որի համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված է վարչական պատասխանատվություն, ապա որպես պաշտոնատար անձ վարչական պատասխանատվության սուբյեկտ է հանդիսանում, այն անձը, ով իրավախախտման կատարման պահին, համապատասխան հաշվառում վարող պետական մարմնում գրանցված է որպես տվյալ պետական կամ համայնքային մարմնի աշխատակազմի ղեկավար, աշխատակազմի քարտուղար կամ գլխավոր քարտուղար:

7. Այն դեպքում, երբ անձը որոշակի գույքի նկատմամբ ունի սեփականության կամ դրան նմանեցվող այլ իրավունքներ, ինքն է իր ռիս-

⁵ Տե՛ս, O'Halloran and Francis v. The United Kingdom (15809/02, 25624/02) գործով Եվրոպական դատարանի 29.06.2007 թվականի վճիռը, 52-63-րդ կետեր:

կով պատասխանատվություն կրում իր այդ իրավունքների այլ անձանց կողմից չարաշահման համար (սույն դիրքորոշումը կիրառելի չէ բոլոր դեպքերի համար և ենթակա է պարզման յուրաքանչյուր դեպքով առանձին):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- 1. ՀՀ Սահմանադրություն ընդունված 05.07.1995 թվականին, փոփոխված 2015 թվականին:
- 2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրք ընդունված 06.12.1985 թվականին:

- 3. O’Halloran and Francis v. The United Kingdom (15809/02, 25624/02) գործով Եվրոպական դատարանի 29.06.2007 թվականի վճիռը:
- 4. ՀՀ սահմանադրական դատարանը, 21.06.2016 թվականի թիվ ՍԴՈ-1282 որոշում:
- 5. ՀՀ սահմանադրական դատարանը, 12.10.2010 թվականի թիվ ՍԴՈ-920 որոշում:
- 6. ՀՀ վճռաբեկ դատարանի 28.09.2006 թվականին թիվ 3-1787 քաղաքացիական գործով կայացված որոշում:
- 7. ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2007 թվականին թիվ 3-690/ՎԴ քաղաքացիական գործով կայացված որոշում:



ՌԱԶՄԻԿ ՄԱՐԻԿՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների
իրավունքների պաշտպանության բաժնի պետ
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի
գիտակրթական միջազգային կենտրոնի
Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դասախոս
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԱՐՅՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՄԻՎՎՈՐՈՒՄՆԵՐԻ
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Այլոց հետ միավորվելու ազատությունը հիմնարար իրավունք է, որն անվերապահորեն ճանաչված է մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային կարևորագույն փաստաթղթերով:

Այսպես՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի միավորումներ կազմելու իրավունք:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի այլոց հետ միավորվելու ազատության իրավունք՝ ներառյալ իր շահերի պաշտպանության համար արհմիություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 8-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ պետությունները պարտավորվում են ապահովել յուրաքանչյուրի՝ իր տնտեսական և սոցիալական շահերի ներկայացման ու պաշտպանության նպատակով արհեստակցական միություններ ստեղծելու և իր ընտրությամբ արհեստակցական միության անդամակցելու իրավունքը:

Չնայած այն հանգամանքին, որ նշված դրույթները կիրառելի են բոլոր ոլորտների բոլոր աշխատակիցների նկատմամբ, այնուամենայնիվ, դրանք պարունակում են կարևոր վերապահումներ: Նշված փաստաթղթերը պետություններին հնարավորություն են տալիս օրինական սահմանափակումներ նախատեսել զինված ուժերի, ոստիկանության կամ պետական վարչակազմի անդամների համար:

Հավանաբար հենց այս հնարավորության հիման վրա էլ մեր օրենսդրությամբ նույնպես

զինծառայողների համար նախատեսվել է նման սահմանափակում: Այսպես՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ զինծառայողն իրավունք չունի անդամակցել որևէ արհեստակցական միության: «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ արհեստակցական կազմակերպության մասնակից (անդամ) չեն կարող լինել, ի թիվս այլնի, նաև զինված ուժերի ծառայողները:

Կարևոր է նշել, որ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1572 (2002) հանձնարարականը ողջունելի է համարում զինծառայողներին արհեստակցական միություններ ձևավորելու հնարավորություն տալը: Մասնավորապես, հանձնարարականի 5-րդ կետի համաձայն՝ զինված ուժերի անդամները՝ որպես «համազգեստով քաղաքացիներ», խաղաղ պայմաններում պետք է լիարժեք իրավունք ունենան հիմնադրել, միանալ և ակտիվորեն մասնակցել ժողովրդավարական ինստիտուտների շրջանակներում ստեղծված հատուկ միությունների՝ ծառայողական պարտականությունները կատարելիս իրենց մասնագիտական շահերը պաշտպանելու համար: Հանձնարարականի 7-րդ կետով պետություններին առաջարկվում է վերացնել զինված ուժերի անդամների համար ներկայում գործող՝ միավորումներ կազմելու անհիմն սահմանափակումները, և այդ նպատակով զինվորական օրենսդրության մեջ կատարել համապատասխան փոփոխություններ:

Խորհրդարանական վեհաժողովն իր մոտեցումը հաստատել է նաև թիվ 1742 (2006)

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 125 2021

հանձնարարականում, որով մեկ անգամ ևս անդամ պետություններին կոչ է արել թույլ տալ զինձառայողներին միանալ մասնագիտական ներկայացուցչական միավորումներին կամ արհմիություններին, որոնք օժտված կլինեն բանակցելու լիազորությամբ, և զինված ուժերի անձնակազմի բոլոր խմբերի ներկայացուցիչների ներգրավմամբ հիմնել խորհրդատվական մարմիններ:

Միջազգային իրավական փաստաթղթերով սահմանվում են զինձառայողների արհեստակցական միությունների ձևավորման և գործունեության չափանիշներ, որոնք պետությունները պետք է ապահովեն: Մասնավորապես՝

1. պետությունները պետք է բոլոր զինձառայողներին թույլատրեն անդամակցել կամ մասնագիտական միավորման կամ իրենց շահերը ներկայացնող արհմիության,

2. այս միավորումները պետք է իրավունք ունենան խորհրդակցական մարմնի կարգավիճակով մասնակցել զինձառայողների ծառայության պայմաններին վերաբերող քննարկումներին,

3. պետք է արգելվեն զինձառայողների նկատմամբ կարգապահական տույժերի կիրառումը կամ դրանց կիրառման սպառնալիքը նման մասնագիտական միավորումներին կամ արհմիություններին անդամակցելու համար,

4. միավորման ազատության որևէ սահմանափակում (օրինակ կոլեկտիվ աշխատանքային վեճի հետ կապված) պետք է նախատեսված լինի օրենքով, համաչափ լինի մարդու իրավունքների պայմանագրերով նախատեսված՝ պետության իրավաչափ նպատակներին և զերծ լինի խտրականությունից:

Այս կապակցությամբ կարևոր արձանագրում է կատարել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը: Մասնավորապես, Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 11-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված «օրինական սահմանափակում» հասկացությունը չի նշանակում, որ այս իրավունքները սահմանափակող յուրաքանչյուր ներպետական օրենսդրություն ինքնին համատեղելի կլինի

Կոնվենցիայի պահանջների հետ: Այդ նպատակով կարևորվում է նաև սահմանափակման որակական չափանիշը, որը պետք է լինի կանխատեսելի և զերծ կամայականություններից¹:

Այս առումով, հետաքրքրական է Իտալիայի և Լեհաստանի սահմանադրական դատարանների որոշումները: Լեհաստանի սահմանադրական դատարանը որոշել է, որ զինված ուժերում արհմիություններին անդամակցելու արգելքը սահմանադրական է, եթե գոյություն ունեն միավորման ազատությունն իրացնելու այլընտրանքային եղանակներ²: Իսպանիայի սահմանադրական դատարանն էլ որոշել է, որ զինձառայողներն իրենց սոցիալական և տնտեսական շահերը ներկայացնող մարմիններում մասնակցության իրավունք ունեն, եթե վերջիններս չեն մտադրվում իրականացնել գործադուլային ակցիաներ:

Միավորման ազատությունը ճանաչելու առնչությամբ տարբեր է նաև միջազգային փորձը: Ընդ որում, պետությունների որդեգրած մոտեցումները տարբեր են՝ սկսած համապատասխան մարմինների գոյությունն ընդհանրապես արգելելուց մինչև նույնիսկ այդ մարմինների (ոչ անկախ միավորումների) պետական ֆինանսավորումը: Ֆրանսիայում, օրինակ, զինձառայողների անդամակցությունը մասնագիտական միավորումներին արգելվում է, սակայն Չինված ուժերի հարցերով բարձրագույն խորհուրդը թույլ է տալիս նրանց մասնակցությունը ծառայության պայմաններին վերաբերող հարցերի քննարկմանը: Բուլղարիայում գործում է Ռակովսկու անվան Բուլղարիայի սպաների լիգան, որը ֆինանսավորվում է Պաշտպանության նախարարության կողմից: Իսկ մի շարք երկրներում, որտեղ զինվորական միավորումների կամ միությունների գործունեությունը թույլատրված է, դրանց անդամներին, որոշ բացառություններով, արգելվում է մասնակցել գործադուլներին: Օրինակ՝ Հունգարիայում օրենքով արգելվում է զինձառայողների գործադուլը: Շվեդիայում գործում է Շվեդիայի զինված ուժերի սպաների միությունը, որը զինված ուժերի հրամանատարության հետ կնքել է մի

¹ Տես, Ռեքվենյի ընդդեմ Հունգարիայի (Rekvenyi v. Hungary) գործով 1999 թվականի մայիսի 20-ի վճիռը, գանգատ թիվ 25390/94, կետ 59:

² Տես, Լեհաստանի սահմանադրական դատարանի 2000 թվականի մարտի 7-ի թիվ X 26/28 որոշումը:

շարք պայմանագրեր աշխատանքային ժամերի, գործուղումների և բնակության պայմանների, պահեստազորի սպաների զբաղվածության, զինված ուժերի անձնակազմի այլ ներկայացուցիչների զբաղվածության և միջազգային առաքելություններում ծառայության հարցերի շուրջ: Չնայած գործադուլ հայտարարելն օրենքով արգելված չէ՝ միությունը գործողության սահմանափակ ժամկետ ունեցող կոլեկտիվ պայմանագրով համաձայնել է, որ գործադուլային ակցիաների չի դիմելու:

Միջազգային իրավական փաստաթղթերով պետություններին առաջարկվում է թույլատրել զինված ուժերի անդամներին ներկայացուցչական միությունների միջոցով ինքնակազմակերպվել՝ վարձատրության և աշխատանքային պայմաններին առնչվող հարցեր բարձրացնելու նպատակով: Մեր օրենսդրությամբ նույնպես արհեստակցական միությունների նպատակները հստակ սահմանված են³: Ընդ որում, նշված բոլոր նպատակներն ուղղված են աշխատողների աշխատանքային ու դրա հետ կապված սոցիալական և այլ շահերի ու իրավունքների պաշտպանությանը:

Հետևաբար, պետք է որպես հարցի լուծման ելակետ նկատի ունենալ, որ զինծառայողների արհեստակցական միության նպատակը զինծառայողների ծառայողական (աշխատանքային) և դրա հետ կապված այլ շահերի ու իրավունքների պաշտպանությունն է:

Կարծում եմ՝ կոլեկտիվ մարմինները կարող են կարևոր դեր ունենալ իրենց անդամների շահերը ներկայացնելու, ներառյալ նրանց իրավունքները պաշտպանելու գործում: Չինվորական միավորումները կամ միությունները կարող են նպաստել զինծառայողների բարեկեցությանը, ներկայացնել նրանց շահերը տարբեր մակարդակներում, տրամադրել խորհրդատվություն կամ բանակցել զինված ուժերում ծառայության պայմանների վերաբերյալ: Նրանք կարող են որպես միջնորդ կարևոր դեր ունենալ Պաշտպանության նախարարության և զինծառայողների միջև, ինչպես նաև այնպիսի հարցերի քննարկման ընթացքում, ինչպիսին է զինված ուժերի վերակազմավորումը:

Հետևաբար, պետությունը, ի դեմս Պաշտպանության նախարարության, պետք է շահագրգռված լինի ստեղծել զինծառայողների արհեստակցական միություններ և աջակցի դրանց գործունեությանը: Ընդ որում, այս գաղափարի իրացման համար առաջին հերթին պետք է անհրաժեշտ փոփոխություններ կատարել թե՛ «Չինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում և թե՛ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքում՝ նկատի ունենալով, որ Չինված ուժերի ծառայողների համար սահմանված է արհեստակցական կազմակերպությանը մասնակցելու (անդամակցելու) արգելք:



³ Տե՛ս, «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը:

ԼԵՈՆԻԴ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ
Երևան քաղաքի Աջափնյակ-Դավթաշեն վարչական շրջանների
դատախազության ավագ դատախազ

**ՀԱՆՑԱՆՔ ԿԱՏԱՐԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼ-ՅՈՒԳԵՐԱՆԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐԸ**

Հազարավոր մարդիկ ապրում են նույն սոցիալական միջավայրում, նույն կլիմայական գոտում, ունեն զբաղմունքի նույն տեսակը, սակայն այդ մարդկանց համեմատական շատ փոքր տոկոսն է օժտված այն հատուկ հատկանիշներով, որոնք արտահայտվում են հանցագործ վարքագծում:

Եթե նման մարդու գնահատման մեջ մոտենանք դարերի և հազարամյակների ընթացքում մշակված մարդկային քաղաքակրթության նորմերի տեսանկյուններից, ապա կարելի է ասել, որ նա նախնադարյան վայրենի է, ով ճակատագրի ինչ-որ տարօրինակ քմահաճույքով հայտնվել է ժամանակակից մարդկանց շարքում:

Մարդու ագրեսիան ունի տարբեր դրդապատճառների առավել լայն անչափելի տրամագիծ: Ինչպես շատ ճշգրիտ նշել է լեհ գիտնական Ստանիսլավ Եժի Աենցը. «Եթե վագրը սպանում է գիտակցված, նշանակում է, նրա մոտ արտահայտվում է մարդկային բնազդը»:

Յուրաքանչյուր մարդու մոտ հնարավոր է բացահայտել պոտենցիալ ագրեսիա, սակայն բոլորը չեն ունակ այն իրականացնել, առավել ևս այն մակարդակում, ինչը դասակարգվում է որպես հանցագործություն:

Նորմալ հոգեբանությամբ քաղաքակիրթ մարդը օժտված է ներքին արգելքներով, որոնք հուսալի զսպում են ագրեսիան: Այս արգելքները պայմանավորված են մարդկային զարգացող հասարակության բազմաթիվ սերունդների կողմից մշակված սոցիալական նորմերով: Այդ արգելքներն իրենցից ներկայացնում են ոչ միայն անհատի բարոյական և հուզական դրոյթներ-

ը, այլ նաև բնութագրվում են ագրեսիվ-հանցագործ արտահայտումների օրգանական մերժմամբ¹:

Ուրիշ անձի սպանության տաբուն ապրում է յուրաքանչյուր նորմալ մարդու մեջ, և այդ արգելքի հաղթահարման ունակությունը բնորոշ է միայն հոգեկան հիվանդներին և հանցավորության թույնով ախտահարված անձանց:

Ինչպես անցյալ, այնպես նաև ներկա ժամանակի որոշ հետազոտողներ պնդում են, որ հանցագործությունը հիվանդություն է, որը անհրաժեշտ է պատեհաժամ հայտնաբերել և բուժել²:

Կարելի է իհարկե խնդիրը դիտարկել նաև այս առումով, համարելով անհատի բացասական բարոյական կողմնորոշումները և դրոյթները որոշակի վարակիչ հիվանդություն, սակայն այս դեպքում անհրաժեշտ է ընդունել, որ դրանով կարող է ախտահարվել յուրաքանչյուր մարդ, իսկ դա այդպես չէ:

Հատկապես մարդկանց որոշակի խմբին բնորոշ հատուկ հատկանիշները կանխորոշում են վերջիններիս հանցագործ վարքագիծը: Այս հատկություններով չօժտված մարդը որևէ հանցամանքում ունակ չէ հաղթահարել, ասենք սպանության արգելքը:

ՀՀ Զինված ուժերում հանցավորության կրիմինալոգիական ասպեկտի քննարկման ժամանակ կարևոր նշանակություն ունի հանցագործ-գինձառայողի անձի քրեագիտական բնութագրական հատկանիշների բացահայտումը:

Հանցագործությունների կանխման գործընթացում կարելի է հաջողության հասնել միայն այն դեպքում, եթե ուշադրությունը կենտ-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 125 2021

¹ Տե՛ս **Антонян Ю. М.** Проблемы изучения личности преступника (соотношение социального- биологического) //Профилактика правонарушений. М., 1976, Вып. 4, ст. 35-48.
² Տե՛ս Криминология. Перевод с чешского. Под ред. **Н. А. Стручкова. М.**, Прогресс, 1982, ст. 70-71, **Сахаров А. Б.** Учение о личности преступника. // «Сов. гос. и право», 1986, № 9, ст. 64-65.

րոնացված լինի հանցագործի անձի վրա³, քանզի հենց անձն է հանդիսանում ոչ միայն տվյալ հանցավոր արարքի կատարողը, այլև հանցագործության պատճառների կրողը: Դրա համար էլ կարող ենք պնդել, որ հենց անձն է հանցավոր վարքագծի մեխանիզմի հիմնական և կարևոր օղակը: Այդ է պատճառը, որ հանցագործի անձի հարցը հանդիսանում է կրիմինոլոգիայի ամենաբարդ խնդիրներից մեկը: Հանցագործի անձը դիտելով որպես կրիմինոլոգիական իմացության առարկա՝ պետք է նախ պատասխանել հետևյալ երկու կարևոր հարցերին.

1. Հետազոտել այն բոլոր անձանց, ովքեր կատարել են հանցագործություն, թե նրանց մի մասին:

2. Հանցագործի անձի դր կողմերն ու առանձնահատկություններն են ենթակա կրիմինալոգիական հետազոտման:

Այսպես՝ Դ. Ա. Ռեզնիկը գտնում է. «Հանցագործի անձի մասին կարելի է խոսել միայն անձանց շատ նեղ կոնտինգենտի հետ կապված, որոնց համար հանցագործությունը դարձել է հիմնական, առաջնային գործունեություն»⁴: Ա. Ի. Դոլգովան նշում է, որ իմաստ չկա խոսելու հանցագործի անձի մասին որպես գիտական հիմնախնդրի, եթե նրան բնորոշ չեն այնպիսի հատկանիշներ, որով նա տարբերվում է այն անձանցից, որոնք չեն կատարում հանցագործություն⁵: Հանցագործի անձն իրենից ներկայացնում է սոցիալապես նեգատիվ հատկանիշների ամբողջություն, որը նրա մեջ ձևավորել է այլ անձանց հետ բազմաբնույթ և սիստեմատիկ փոխգործողությունների գործընթացում⁶: Իհարկե պետք է նշել, որ հանցագործի անձի հասկացությունը որոշակիորեն պայմանական բնույթ է կրում, քանզի որոշակի արարքներ հանցագործություն ճանաչելը կախված է օրենսդրից: Նա կարող է վերացնել քրեական պատասխանատվությունը այն արարքների համար, որոնք ավելի վաղ ճանաչվել են հանցավոր և հակառակը: Ընդհանրապես, որպես «հանցագործի անձ» կարելի է դիտարկել

այն անհատին, որը կատարել է հանցանքն իրեն բնորոշ հոգեբանական առանձնահատկությունների, հակահասարակական հայացքների, բարոյական արժեքների նկատմամբ բացասական վերաբերմունքի հետևանքով և որն ընտրել է իր պահանջմունքների բավարարման հասարակայնորեն վտանգավոր ուղին, կամ չի դրսևորել համապատասխան վարքագիծ բացասական հետևանքների կանխման համար, եթե դրանց կանխումը մտել է իր պարտականությունների մեջ: Հանցագործի անձի կրիմինալոգիական հետազոտումը հիմնականում իրականացվում է նրա այն հատկանիշների բացահայտման և գնահատման համար, որոնք ծնում են հանցավոր վարքագիծը: Հենց սրանով է պայմանավորված այնպիսի խնդրի լուծումը, ինչպիսին է Զինված ուժերում հանցավոր վարքագծի պատճառների և մեխանիզմի բացահայտումը և հանցավորության կանխման արդյունավետությունը:

Զինծառայող հանցագործի անձն ունի էական առանձնահատկություններ, որոնք պայմանավորված են մի շարք հանգամանքներով՝

1. փակ՝ միասեռ, սոցիալական խմբերի ներանձնային շփումներով,
2. առօրյա կենցաղի խիստ կանոնակարգվածությամբ,
3. որոշակի պայմաններում սեփական կյանքը վտանգի տակ դնելու անհրաժեշտությամբ,
4. պետերի և ենթակաների հարաբերությունների հիերարխիկ կառուցվածքով միանձնյա ղեկավարման սկզբունքի անխուս կատարմամբ,
5. ազատ ժամանակի, ինչպես նաև հոգևոր-մշակութային և սպորտային միջոցառումների ընտրության սահմանափակմամբ,
6. ամենօրյա ֆիզիկական և հոգեկան ծանրաբեռնվածությամբ,
7. ապրելակերպի ժամանակավոր բնույթով և այլ հանգամանքներով:

Հատկապես իր բնորոշ առանձնահատկություններով զինծառայողը հանդիսանում է գինվորական հանցավորության սուբյեկտ: Ըստ Վ.

³ Տե՛ս Кургужкина Е. Б. Նշվ. աշխ., ժ. 258-259.

⁴ Տե՛ս Резник Г. М. Криминологическая профилактика и социальная планирование. М. 1979 ժ. 29.

⁵ Տե՛ս Долгова А. И. Изучение личности преступника. //Сов. гос. и право. 1978, № 6, ժ. 79.

⁶ Տե՛ս Личность преступника: методы изучения и проблемы воздействия: Сб. науч. трудов. ВНИИ МВД СССР, М., 1988, ժ. 100-101.

Վ. Լունիևի կարծիքի՝ հանցագործ-զինծառայողներին բնորոշ են հետևյալ գծերը, հոգևոր պահանջների և արժեքների ցածր մակարդակ, զինծառայության, կանոնադրային պահանջների և քրեական արգելքների նկատմամբ անտարբեր վերաբերմունք, իրավագիտակցության ցածր աստիճան, կենցաղային դրդապատճառների գերակայում, կենսական իրավիճակի ոչ խորը քննադատական գնահատականով պատճառաբանվածության դյուրինություն, սեփական գործողությունների հետևանքների կանխատեսման թույլ զարգացվածություն և հուզական անկայունություն⁷:

Դրա հետ մեկտեղ որոշակի առանձնահատկություններ և տարբերություններ գոյություն ունեն պարտադիր ծառայության զինծառայող հանցագործի և հրամանատար (պետ) հանցագործի անձի միջև: Այժմ քննարկենք այդ առանձնահատկությունները:

Պարտադիր ծառայության զինծառայող հանցագործները հիմնականում կատարում են կանոնադրային կանոնների կոպիտ խախտումների և բռնության հետ կապված հանցագործություններ, որոնք այդ հակասությունների անհաջող լուծման անմիջական հետևանք են⁸: Օրինակ՝ զորամասը և ծառայության վայրը ինքնագլուխ թողնելը կամ դասալքությունը կապված զինծառայողի նկատմամբ զորամասում կատարված անօրինական, բռնի գործողությունների հետ, որը հիմնականում կատարվում է սպաների կամ ավելի վաղ զորակոչված զինծառայողների կողմից: Ավելի քիչ նրանց կողմից կատարվում են շահադիտական բնույթի հանցագործություններ, որոնք մեծամասամբ կատարվում են սպաների հետ հանցակցությամբ: Իսկ եթե շահադիտական հանցագործությունները կատարում են ինքնուրույն, ապա դա կապված է լինում զենքի կամ այլ ռազմական գույքի հափշտակությունների, կամ զորամասի տարածքից դուրս գտնվելու ընթացքում (օրինական կամ անօրինական) կատարված հանցավոր գործողությունների հետ: Ընդ ո-

րում, շահադիտական մոտիվացիան կարող է լինել տարբեր՝ սկսած շահ ստանալու սովորական ձգտումից, մինչև դրամի հայթայթում, այլ զինծառայողին փրկագին վճարելու համար: Պարտադիր ծառայության զինծառայող հանցագործի անձը հիմնականում դիտվում է օբյեկտիվ իրականության ընկալման սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Ինչ վերաբերում է հոգեբանական առանձնահատկություններին, այստեղ որոշիչ են հանդիսանում մարդկային խառնվածքի հանրահայտ տիպերը, որոնք իր ժամանակին առաջ էին քաշվել Հիպոկրատի և զարգացվել Պավլովի կողմից, մասնագիտական գրականության մեջ դասակարգվում են հետևյալ չորս տիպերի.

1. Սանգվինիկներ (հիմնականում հանգիստ, կենսուրախ մարդիկ են),
2. Ֆլեգմատիկներ (հինականում հանգիստ, դանդաղկոտ մարդիկ են),
3. Խոլերիկներ (հիմնականում բռնկվող, բայց դանդաղկոտ մարդիկ են),
4. Մելանխոլիկներ (թախծոտ, մռայլ մարդիկ են)⁹:

Զինծառայող սանգվինիկներին բնորոշ է արագությունն ու խիզախությունը:

Զինծառայող խոլերիկները դրսևորում են նախանձելի, բայց չհիմնավորված վճռականություն ու խիզախություն: Դրա հետ մեկտեղ նրանք կարող են զգալ ուժեղ վախ: Զինծառայող ֆլեգմատիկներին բնութագրական են գիտակցված վճռականությունն ու խիզախությունը, սակայն այդ հատկանիշները նրանց մոտ ուժեղ են միայն այն խնդիրներն իրականացնելիս, որոնց հատուկ պատրաստվել են: Առավել քիչ բանակային կյանքին պատրաստված են զինծառայող մելանխոլիկները, քանի որ նրանց վճռականությունն ու խիզախությունը կարճաժամկետ են և դրսևորվում են միայն նրանց առջև ծագած չնչին արգելքները հաղթահարելիս: Պարտադիր ծառայության զինծառայող հանցագործներին կարելի է դասակարգել հետևյալ տեսակների՝

⁷ Տե՛ս **Лунеев В. В.** Мотивация воинских преступлений. М., 1996. ст. 44.

⁸ Մանրամասն տե՛ս **Кудрявцев В. Н., Лунеев В. Н.** О криминологической классификации преступлений // Государство и право, 2005, № 6, ст. 54-66.

⁹ Տե՛ս **Флоря Евгений.** Личность преступника (Криминологическое и уголовно-правовое исследование). Дис. ... канд. юрид. наук. Кишинев-2002, էջ 10-11, **Хьелл Л., Зиглер Д.** Теория личности. Основные положения, исследование и применение. СПб., 1998, ст. 22-23.

1. Պատահական հանցագործներ, որոնք հիմնականում բնութագրվում են դրական և հանցանքը կատարում են արտաքին հանգամանքների (ծագած սուր կոնֆլիկտային իրավիճակներ և այլն), էքստրեմալ պայմանների մեկանգամյա, պատահական ազդեցության ներքո:

2. Իրադրության հանցագործներ, որոնք հիմնականում բնութագրվում են դրական և հանցանքը կատարում են իրադրության, կոնֆլիկտային իրավիճակների ազդեցության ներքո՝ չկարողանալով դիմագրավել դրան: Այնուամենայնիվ այս անձիք օժտված են այնպիսի առանձնահատկություններով, որոնք էլ հենց թույլ չեն տալիս դիմագրավել իրադրության ազդեցությանը:

3. «Անկայուն» հանցագործներ: Սրանք անձիք են, որոնք բնութագրվում են ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմերով: Մինչև հանցանքի կատարումը նրանք կարող են դրսևորել բարոյական նորմերից շեղվող վարքագիծ, թույլ տալ ոչ ծանր զանցանքներ: Հանցագործության պատճառական մեխանիզմում փաստորեն գրեթե հավասար դեր են կատարում ինչպես իրադրության, այնպես էլ անձի առանձնահատկությունները:

4. «Կայուն» հանցագործներ, որոնք առանձնանում են մշտական ագրեսիվ ուղղվածությամբ և բռնի ուժի կիրառման ձևավորված ստերեոտիպով (մասամբ Չ. Աոմբրոզյի տեսության համաձայն):

5. Չարամիտ հանցագործներ, որոնց համար ագրեսիվ վարքագիծն ինքնին համարվում է բնական: Սրանք հիմնականում բացասական են բնութագրվում, մինչև հանցանքի կատարումը աչքի են ընկնում հակասոցիալական վարքագծի վառ արտահայտված ձևերի սիստեմատիկ կատարմամբ: Փաստորեն իրադրությունն այս դեպքում ուղղակիորեն նպաստում է հանցագործության կատարմանը: Դրա հետ մեկտեղ համարյա միշտ ագրեսիվ բռնի վարքագիծն ունի շահադիտական մոտիվացիա:

6. Առանձնապես չարամիտ հանցագործներ: Այսպես են բնութագրվում այն անձինք, որոնք շատ հաճախ իրենք են ստեղծում նպատավոր իրադրություն և քրեածին վիճակ հանցագործության կատարման համար:

Քրեաբանները առանձնացնում են շահադիտական - բռնի մոտիվացիայով հանցանք կատարող անձանց չորս տիպեր: Դրանք են՝
 ա. պատահական հանցագործներ,
 բ. հիմնականում բռնության հանցագործներ,
 գ. հակահասարակական ուղղվածության հանցագործներ,
 դ. առանձնապես դաժանությամբ աչքի ընկնող հանցագործներ հոգեկան շեղումներով¹⁰:

Վերջին տիպի վրա կարելի էր ուշադրություն չդարձնել, եթե ծառայության չգորակոչվեին հոգեկան հիվանդությամբ տառապող անձիք: Պրակտիկայում, ինչպես հայտնի է, դա հիմնականում տեղի է ունենում զորակոչային հանձնաժողովների թերի գործունեության և որակյալ կադրերի բացակայության հետևանքով: Չինծառայող հանցագործի անձի դասակարգումն ինքնանպատակ չէ: Այն թույլ է տալիս ճիշտ կազմակերպել հանցագործությունների կանխման միջոցառումները, մասնավորապես, ագրեսիվ, բռնի մոտիվացիայով աչքի ընկնող զինծառայող հանցագործների նկատմամբ պետք է կիրառվեն բոլորովին այլ միջոցառումներ, քան, ասենք շահադիտական մոտիվացիայով աչքի ընկնողների նկատմամբ, կամ պատահականների և իրադրության հանցագործության կանխման միջոցառումները պետք է ուղղված լինեն անձին շրջապատող արտաքին միջավայրին, անկայունների դեպքում՝ հավասարապես թե՛ անձին, թե՛ միջավայրին, մյուսների դեպքում՝ հիմնականում անձին: Հանցավոր վարքագծի անարխիստա-անհատապաշտական մոտիվացիան էապես տարբերվում է շահադիտական և բռնի-էգոիստական մոտիվացիայից ինչպես բովանդակությամբ, այնպես էլ սոցիալ-հոգեբանական ձևով, կառուցվածքով և ձևավորման գործընթացով: Եթե շահադիտական պատճառների հիմքում ընկած են նյութական պահանջմունքները, իսկ բռնի-էգոիստականինը՝ գլխավորապես բացասական էմոցիաները, ապա անարխիստա-անձնականի հիմքում ընկած է իր բարեկամների, հարազատների հետ շփման, անձնական բարոյական կայացման պահանջմունքը, պահան-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, № 125 2021

¹⁰ Տե՛ս Թարարухин С. А. Преступное поведение. Социальные и психологические черты. М., 1974, ст. 79- 80.

ջը ավկոհողի նկատմամբ, հետաքրքրությունները տարբեր տեսակի զվարճանքների նկատմամբ, կենցաղային կարիքների, իսկ որոշ մասն էլ՝ զգացմունքային ոլորտում առկա պահանջմունքները: Օրինակ՝ զինվորական ծառայությունից խուսափելու հետ կապված հանցագործությունների (ինքնակամ բացակայություն, ծառայության վայրը ինքնազուլու թողնելը, դասալքություն կ. այլն) կրիմինալոգիական հետազոտությունները վեր են հանել հետևյալ դրդապատճառները՝

1. ցանկությունը հանդիպել ծնողների հետ, ուրախ անցկացնել ժամանակը (մոտ 30%-ը),
2. ցանկությունը տեսակցել մերձավոր ազգականների հետ (մոտ 27.4%-ը),
3. զինվորական ծառայության դժվարություններից խուսափելու ցանկությունը (մոտ 16.6%-ը),
4. պատասխանատվության ենթարկվելու վախի գիտակցումը կատարված զանցանքների ու հանցանքների համար (մոտ 9.6%-ը),
5. մնացած դրդապատճառները (մոտ 16.4%-ը)¹¹:

Բոլոր վերը թվարկված դրդապատճառները կրում են կենսական բնույթ և հակասոցիալական գնահատական են ստանում միայն այն դեպքում, երբ հակադրվում են զինվորական ծառայության շահերին և էականորեն վնաս են պատճառում դրանց: Սա պայմանավորված է զինվորական ծառայության խիստ առանձնահատուկ բնույթով, քանզի ցանկացած շեղում զինվորական ծառայության կրելու սահմանված կարգից ուղղակիորեն, թե անուղղակիորեն կապված է պետության ռազմական հզորության և նրա միակ պաշտպանական կառույցի՝ բանակի ներսում հաստատված և խստորեն կա-

նոնակարգված կարգ ու կանոնի հետ: Բանակում անարխիստա-անհատապաշտական վերաբերմունքի ձևավորումը օրենքների, քաղաքացիական, պաշտոնական, զինվորական և այլ պարտականությունների նկատմամբ որոշակի չափով կապված է ոչ այնքան մարդկանց գիտակցության և վարքագծի մեջ անցյալի հայացքների կենսունակությամբ, ինչպես բացատրվում էր դա շատ տարիներ,¹² որքան սոցիալ-տնտեսական, գաղափարախոսական, կազմակերպչական, իրավական, սոցիալ-հոգեբանական բնույթի օբյեկտիվ պատճառների առկայությամբ:

Հանցավոր վարքագծի անարխիստա-անհատապաշտական մոտիվացիայի ձևավորման վրա իր հսկայական ազդեցությունն է ունենում ընդունվող քրեաիրավական արգելքների սոցիալական ուղղվածությունը, դրանց համապատասխանությունը համամարդկային արժեքներին և մարդկանց բնականոն պահանջմունքներին, նրանց հասարակական անհրաժեշտության աստիճանը և նրանց կատարման պրակտիկ, իրական հնարավորությունը, այդ արգելքների իրականացման փաստացի հնարավորությունը կյանքում:¹³ Քմահարական վերաբերմունքն օրենքի, կոնկրետ պարտականությունների, իրավակարգի, բանակում գործող կանոնադրությունների, ենթաօրենսդրական ակտերի, հրամանատարների (պետերի) կողմից արձակված հրամանների նկատմամբ ձևավորվում է ինչպես ընդհանուր, այնպես էլ իրավական պատշաճ մշակույթի բացակայության պատճառով, ինչպես նաև այդ օրենքների, կանոնադրությունների, հրամանների ոչ կենսունակ, չիմնավորված և սոցիալական արդարության պահանջներից շեղված լինելու պատճառով:



¹¹ Հարցումները կատարվել են զինծառայողների հետ ատենախոսի անձնական շփումների ժամանակ՝ 2017-2018թթ.:

¹² Տե՛ս օրինակ՝ **Антонян Ю. М.** Тени прошлого. М., 2016.

¹³ Տե՛ս Лунеев В.В. Мотивация преступного поведения. М.1991, ст. 262.

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի
Զինժառայողների և նրանց ընտանիքների անդամների
իրավունքների պաշտպանության բաժնի առաջատար մասնագետ

**ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՉՈՐԱՅԱՎԱՔԱՅԻՆ ՉՈՐԱԿՈՉԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ**

Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը:

Սահմանադրական այս իրավունքի իրացումը տարբեր հարաբերություններում յուրովի դրսևորում ունի. սույն հոդվածի շրջանակներում անդրադարձ է կատարվելու զորահավաքային զորակոչի ընթացքում առողջության պահպանության իրավունքի իրացման հետ կապված գործնական և օրենսդրական խնդիրներին:

Չորահավաքային զորակոչը բարդ և տարբերությամբ խնդիրներից բաղկացած գործընթաց է, որի բաղկացուցիչ մասերից են կազմում զորակոչվող անձանց պատշաճ բժշկական հետազոտություններն ու փորձաքննությունը:

Բացի նրանից, որ այս հարցն ուղղակիորեն բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքից, զինապարտ անձանց առողջության պահպանության վերաբերյալ հստակ կարգավորումներ և ձևավորված դիրքորոշումներ են ամրագրված նաև միջազգային իրավական ակտերով:

Օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ պետությունն է որոշում զորակոչիկների առողջության և պիտանիության չափանիշները, այնուամենայնիվ զորակոչիկները պետք է ֆիզիկապես և հոգեպես պատրաստ լինեն զինվորական ծառայության առանձնահատկություններով պայմանավորված

փոփոխությունների մարտահրավերներին: Նրանք պետք է պատրաստ լինեն նաև զինված ուժերի անդամներին բնորոշ պարտականության ու պատասխանատվության բարձրացմանը: Երիտասարդ առողջ մարդու համար զինվորական ծառայությունը կարող է որևէ խնդիր չառաջացնել, մինչդեռ այն կարող է լուրջ բեռ դառնալ անձի համար, ով առողջական խնդիրների պատճառով չունի բավարար ֆիզիկական տոկոսություն: Հետևաբար, հաշվի առնելով զինվորական ծառայության պահանջները, պետությունները պետք է միջոցներ ձեռնարկեն ներդնելու զորակոչիկի փաստացի առողջական վիճակը բժշկական փորձաքննությամբ ստուգելու չափանիշներ, որպեսզի նրանց առողջությունը զինվորական ծառայության ընթացքում վտանգի չենթարկվի¹:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է նաև, որ պետությունը պետք է գործնական միջոցներ ձեռնարկի զորակոչիկների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու ուղղությամբ՝ նվազագույնի հասցնելով նրանց առողջությանը սպառնացող ռիսկը, ի թիվս այլնի, տրամադրելով նաև պահանջվող բժշկական օգնություն²:

Հայաստանի Հանրապետության ներպետական օրենսդրությունը ևս հստակ կարգավորումներ է սահմանում զինապարտ քաղաքացիների, այդ թվում՝ զորահավաքային զորակոչի ենթակա անձանց առողջության պահպանության իրավունքի իրացման տեսանկյունից:

«Զինվորական ծառայության և զինժառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ զորա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 125 2021

¹ Տե՛ս Կայանկին ընդդեմ Ռուսաստանի գործով (Kayankin v. Russia) վճիռ, գանգատ թիվ 24427/02, կետ 87:
² Տե՛ս Քիլինջը և այլք ընդդեմ Թուրքիայի (Kilinc and others v. Turkey) գործով վճիռ, գանգատ թիվ 40145/98, կետեր 41, 42:

հավաքային զորակոչի ժամանակ իրականացվում է քաղաքացիների առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին ադրբեջանական կողմը Արցախի, ինչպես նաև Հայաստանի դեմ սանձագերծեց ռազմաօդային և հրետանային ագրեսիվ հարձակումներ, ինչի արդյունքում մեր ողջ հասարակությունը հայտնվեց բարդ, ճգնաժամային իրավիճակում՝ հատկապես հաշվի առնելով աշխարհում տարածված Նոր կորոնավիրուսային (COVID-19) համավարակի պայմանները:

Նույն օրը Կառավարության որոշմամբ Հայաստանի Հանրապետությունում հայտարարվեց ռազմական դրություն և ընդհանուր զորահավաք, սկսվեց պահեստազորում հաշվառված զինապարտ քաղաքացիների մոբիլիզացիան:

2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետությունում իրականացված զորահավաքի ընթացքը ցույց տվեց, որ գործնականում միշտ չէ, որ պետությունն անթերի կատարում է Սահմանադրությամբ, միջազգային իրավական ակտերով և ներպետական օրենսդրությամբ ամրագրված դրույթների իրականացումը:

Այսպես՝ Պաշտպանության նախարարությունից Մարդու իրավունքների պաշտպանին տրամադրված տեղեկությունների համաձայն՝ 2020 թվականի սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին քաղաքացիներին ՀՀ զինված ուժեր ներգրավելիս եղել են դեպքեր, երբ նրանք ունեցել են առողջական խնդիրներ, ուստի բժշկական համապատասխան փաստաթղթեր ներկայացնելուց հետո նրանց ծառայությունը դադարեցվել է, և նրանք արձակվել են պահեստազոր (458 բողոք, բոլորն էլ բավարարված)³:

Բացի դրանից, նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին են հասցեագրվել որոշակի առողջական խնդիրներ ունեցող անձանց առանց պատշաճ բժշկական հետազոտություններ (իսկ որոշ դեպքերում առհասարակ առանց հետազոտելու) և փորձաքննություն իրականացնելու զորահավաքային զինվորական ծառայության զորակոչելու վերաբերյալ բողոքներ:

Օրինակ՝ քաղաքացին Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած բողոքով տեղեկացրել է, որ ծանուցվել է զորահավաքային զինվորական ծառայության զորակոչվելու վերաբերյալ, ներկայացել ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում (զինկոմիսարիատ), ներկայացրել առողջական խնդիրները, սակայն որևէ հետազոտություն չի իրականացվել:

Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված մեկ ուրիշ բողոքով տեղեկացվել է, որ անձն իր ունեցած հոգեկան առողջության հետ կապված խնդիրների մասին զորակոչվելիս չի հայտնել, սակայն կամավորական հիմունքներով անցել է զորահավաքային զինվորական ծառայության և մեկնել մարտական գործողությունների իրականացման վայր⁴:

Այսպիսի խնդիրների առկայությունն ապացուցում է, որ չնայած 30 տարի շարունակ պատերազմի վտանգի մեջ գտնվելուն՝ պետությունը պատշաճորեն չի նախապատրաստվել գործնականում հնարավոր զորահավաքի իրականացմանը և դրա ընթացքում քաղաքացիների իրավունքները լավագույնս ապահովելուն:

Այս առումով հարկ է ընդգծել, որ խնդիրն առաջին հերթին թեկուզև կապված է զորահավաքային զորակոչի պատշաճ կազմակերպման գործընթացի հետ, սակայն այդպիսի խնդրի հնարավորությունը կարող էր մոտեցվել նվազագույնի այն պարագայում, եթե նախապես մշակված միջոցառումների շրջանակներում պետությունը գնահատեր և մշտապես թարմացներ իր քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ տեղեկությունները: Ընդ որում, այս խնդիրն ուղղակիորեն կապված է Սահմանադրությամբ պետության ստանձնած պարտավորության հետ:

Խնդրի վերլուծությունը կառուցելիս հարկ է անդրադառնալ առողջության պահպանության սահմանադրական նորմերին և դրանք համեմատական վերլուծության ենթարկել մի շարք պետություններում ոլորտին վերաբերող կարգավորումների հետ:

Ինչպես նշվեց, Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր

³ Տե՛ս, 2020 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության վիճակի մասին տարեկան հաղորդում, էջ 1091:

⁴ Տե՛ս, նույն տեղում, էջ 1092-1093:

ոք, օրենքին համապատասխան, ունի առողջության պահպանման իրավունք: Ըստ հոդվածի 2-րդ մասի՝ օրենքը սահմանում է անվճար հիմնական բժշկական ծառայությունների ցանկը և մատուցման կարգը: Բացի դրանից, Սահմանադրության 86-րդ հոդվածով սահմանվում են պետության քաղաքականության հիմնական նպատակները, և որպես այդպիսին է նշվում բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը:

Անհրաժեշտ է նաև մեջբերել 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության վերաբերելի դրույթը (հոդված 38), որով սահմանվում էր օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու յուրաքանչյուրի իրավունքը:

Ինքնին դրական քայլ էր այն, որ 2015 թվականի փոփոխություններով ոչ թե պարզապես բժշկական օգնություն և սպասարկում ստանալը, այլ առողջության պահպանությունն ամրագրվեց որպես իրավունք, քանի որ ինչպես արդարացիորեն նշել է Վ. Ն. Այվազյանը: «...անհրաժեշտ է բժշկական օգնության իրավունքը տարբերել առողջության պահպանման իրավունքից: Բժշկական օգնության իրավունքը մարդու բնական իրավունքն է՝ հիվանդության դեպքում ստանալու անհրաժեշտ բուժում⁵»:

Առողջության պահպանության իրավունքի վերաբերյալ կարգավորումներ են նախատեսում նաև այլ պետությունների Սահմանադրություններ: Օրինակ՝ Իսպանիայի Սահմանադրության 43-րդ հոդվածով (ճանաչում է առողջության պահպանության իրավունքը: Պետական իշխանության մարմինները խթանում են առողջապահական կրթությունը), Իտալիայի Սահմանադրության 32-րդ հոդվածով առողջությունը պաշտպանվում է՝ որպես անհատի հիմնարար իրավունք և հավաքական շահ, և երաշխավորում է կարիքավորների անվճար բուժօգնությունը:

Ռուսաստանի Սահմանադրության վերաբերելի հոդվածներով սահմանվում է, որ յուրա-

քանչյուր ոք ունի առողջության պահպանության և բժշկական օգնության իրավունք: Բժշկական օգնությունը պետական և տեղական բժշկական հաստատություններում քաղաքացիներին տրամադրվում է անվճար՝ համապատասխան բյուջեի միջոցների, ապահովագրական ներդրումների, այլ եկամուտների հաշվին: Ռուսաստանի դաշնությունում ֆինանսավորվում են հանրային առողջության պահպանության և ամրապնդման դաշնային ծրագրերը, միջոցներ են ձեռնարկվում պետական, տեղական, մասնավոր առողջապահական ծրագրերի զարգացման համար, խթանվում է մարդու առողջության, ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման, էկոլոգիական և սանիտարահամաճարակային բերելեցությանը նպաստող գործունեությունը⁶:

Ռուսաստանի Սահմանադրության 71-րդ հոդվածի «ե» մասով սահմանվում է, որ ի թիվս այլնի, Ռուսաստանի Դաշնության իրավասությունը ներառում է առողջապահական համակարգի, դաստիարակության և կրթության համակարգի, այդ թվում՝ շարունակական կրթության միասնական իրավական հիմքերի հաստատումը: 114-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ Ռուսաստանի Դաշնության կառավարությունն ապահովում է մշակույթի, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, ընտանիքի աջակցության, ամրապնդման և պաշտպանության, ընտանեկան ավանդական արժեքների պահպանության, ինչպես նաև շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում միասնական, սոցիալական ուղղվածությամբ պետական քաղաքականության իրականացումը:

Այսպիսով, ինչպես երևում է մյուս երկրների փորձից, առողջության պահպանության իրավունքը, բացի պարզապես իրավունք սահմանվելուց, Սահմանադրության մակարդակով ամրագրված են այդ ուղղությամբ պետության քաղաքականության, հստակ պարտավորությունների, ոլորտի հետ կապված կրթության իրականացման անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքերում, այդ իրավունքը սահմանվում է որ-

⁵ Տեն, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք. Գիրք առաջին», Երևանի պետական համալսարան, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2016, պատասխանատու խմբագիր՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն. Ա. Այվազյան, էջ 331:

⁶ Տեն, Ռուսաստանի Սահմանադրություն, հոդված 41:

պես հիմնարար իրավունք: Ընդ որում, օրինակ, Ռուսաստանի Դաշնության պարագայում, առողջության պահպանության իրավունքը նախատեսված է «Մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները» գլխում:

Հայաստանի Հանրապետությունը, ճիշտ է, սահմանադրորեն ամրագրել է առողջության պահպանության իրավունքը (ինչն ինքնին հանգեցնում է նաև պետության պարտականության), սակայն նպատակահարմար կլիներ քննարկել այդ իրավունքը Սահմանադրության 3-րդ (տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում օրենսդրական երաշխիքները և պետության քաղաքականության հիմնական նպատակները) գլխի փոխարեն 2-րդ (մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները) գլխում, որպես հիմնարար իրավունք նախատեսելու հարցը: Ավելին, պետության քաղաքականության հիմնական նպատակներից պետք է լինի ոչ միայն բնակչության առողջության պահպանման և բարելավման ծրագրերի իրականացումը, արդյունավետ և մատչելի բժշկական սպասարկման պայմանների ստեղծումը, այլ նաև Սահմանադրությամբ պետության նպատակների թվում անհրաժեշտ է ներառել առողջապահական կրթության խթանումը, քանի որ առողջության պահպանության իրավունքի լավագույնս իրականացումը ոչ միայն պետության, այլ նաև հենց մարդու կողմից դրա կարևորության գիտակցումն է:

Անդրադառնալով զորահավաքային զորակոչի ընթացքում առողջության պահպանության իրավունքի համատեքստում բժշկական հետազոտությունների և փորձաքննություն անցնելու զինապարտ քաղաքացիների իրավունքին և դրա հետ կապված վերը թվարկված գործնական խնդիրներին՝ հարկ է ընդգծել, որ մի կողմից հասկանալի է, որ պատերազմի նման ճգնաժամային իրավիճակներում ժամանակը չափազանց սուղ ռեսուրս է, և որոշ գործողություններ կարող են իրականացվել որոշակի թերացումներով: Սակայն, զինապարտ քաղաքացիներին զորահավաքային զինվորական ծառայության

զորակոչելիս բժշկական հետազոտությունների և փորձաքննությունների իրականացումը կարևոր է ոչ միայն իրենց, այլև մյուս զինծառայողների իրավունքների, հնարավոր ու անկանխատեսելի վտանգների կանխարգելման տեսանկյունից:

Ինչպես նշվեց վերևում, 2020 թվականին տեղի ունեցած ընդհանուր զորահավաքի ընթացքում արձանագրվել են դեպքեր, երբ ծառայության են զորակոչվել նույնիսկ հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձինք, ինչը կարող էր բերել բացասական հետևանքների (ընդհուպ մինչև կյանքի իրավունքի խախտման) նաև յուրային զինծառայողների հետ կապված:

Նշվածի կապակցությամբ անհրաժեշտ է մեջբերել Վ. Ն. Այվազյանի կողմից արտահայտված հետևյալ միտքն, ըստ որի՝ «Մարդու առողջության իրավունքը բացարձակ չէ, ուստի և չի կարող երաշխավորվել ամենուրեք և բոլոր հանգամանքներում: Շատ հիվանդություններ համարվում են բնական հանգամանքների հետևանք, որը միատեսակորեն ազդում է բոլոր մարդկանց վրա: Բնակչության առավել խոցելի խավերը ավելի շատ են դատապարտված հիվանդությունների, ինչը նրանց դուրս է թողնում ակտիվ աշխատանքային գործունեությունից և ավելի է վատթարացնում նրանց նյութական վիճակը, համապատասխանաբար, և առողջությունը:

Հիվանդանալով նրանք սպառնալիքի տակ են դնում նաև շրջապատող մարդկանց առողջությունը, քանի որ շատ հիվանդություններ վարակիչ են և «չեն ճանաչում թույլատրելի սահմանները»: Այստեղից էլ ծագում է բնակչության առողջության պահպանման գործում պետությունների պարտականությունները: Այդ կապակցությամբ «Սոցիալական, տնտեսական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը (12-րդ հոդվ.) պարտավորեցնում է անդամ պետություններին՝ ճանաչելու յուրաքանչյուրի՝ ֆիզիկական և հոգեկան առողջության հասանելի մակարդակից օգտվելու իրավունքը:»⁷:

⁷ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք», գիրք առաջին, 6-րդ լրամշակված հրատարակություն, պատասխանատու խմբագիր՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ն.Ա. Այվազյան, Երևան, «Տիգրան Մեծ», 2016, էջ 329:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի կարգավորումների ներքո ստանձնած պոզիտիվ պարտավորությունները պետություններից պահանջում են սահմանել այնպիսի կարգավորումներ, որոնք պարտադրում են թե՛ պետական, թե՛ մասնավոր բժշկական հաստատություններին առողջական խնդիրներ ունեցող անձանց կյանքի պաշտպանության համար ձեռնարկել համապատասխան միջոցներ (Trocellier v. France, §4):

Այս առումով հարկ է ընդգծել, որ պետությունը գործող օրենսդրական կարգավորումների համատեքստում ունի որոշակիորեն արդյունավետ գործիքներ, որպեսզի պարբերաբար թարմացնի զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի և զինվորական ծառայության համար պիտանիության աստիճանի վերաբերյալ տեղեկությունները: Այդպիսի գործիքներից մեկը վարժական հավաքներն են:

Ըստ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նույն 17-րդ հոդվածի 1-ին մասի՝ ի թիվս այլնի, վարժական հավաքների ներգրավելիս ևս պարտադիր պետք է իրականացվի քաղաքացիների առողջական վիճակի հետազոտություն և փորձաքննություն: Ընդ որում, այսպիսի վարժական հավաքներ զինապարտ քաղաքացիներին պետությունը կարող է ներգրավել տարեկան մի քանի անգամ՝ կախված պահեստազորում հաշվառված անձի կարգավիճակից⁸:

Հետևաբար, վարժական հավաքները պարբերաբար և պատշաճ կազմակերպելու դեպքում պետությունը մշտապես կտիրապետի զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվությանը:

Հաջորդ գործիքը, որ կարող է լինել չափազանց արդյունավետ, **առողջական վիճակի վերաբերյալ այլ՝ ոչ զինվորական, բժշկական հաստատություններում զինապարտ քաղաքացիների անցած հետազոտությունների արդյունքներին նաև Պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության (նախկինում՝ զինվորական կոմիսարիատ) համար հասանելիության նախատեսումն է՝** հատկապես հաշվի առնելով այն, որ ներկայում այդպիսի միասնական համակարգ գործարկելու փորձ Հայաստանի Հանրապետությունում ներկայում արդեն իսկ առկա է⁹:

Նշվածի կապակցությամբ հարկ է ընդգծել, որ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 2-րդ հոդվածի կարգավորումներից է բխում նաև պետության պարտավորությունը, ապահովելու առողջական խնդիրներ ունեցող անձանց իրավունքների պաշտպանության համար արդյունավետ գործող օրենսդրական և վարչական կառուցակարգեր¹⁰:

ՀՀ կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 23-ի նիստի թիվ 50 արձանագրության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ պետությունը նույնպես ընդգծել է առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման անհրաժեշտությունը՝ նշելով, որ «Առողջապահության միասնական տեղեկատվական համակարգը հասանելի է դարձնում յուրաքանչյուր անձի բժշկական պատմությունը առողջապահության ոլորտի մասնագետներին, ինչը թույլ է տալիս ապահովել առողջապահության ավելի բարձր արդյունավետություն և որակ, քանի որ բուժական միջամտությունների ընթացքում որոշումների կայացումը հիմնվում է ամբողջական, լիարժեք և արդիական տեղե-

⁸ Տե՛ս, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենք, հոդված 59:

⁹ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային առողջապահության միասնական տեղեկատվական ԱՐՄԵԴ համակարգն առողջապահական տվյալների կառավարման միասնական համակարգ է, որտեղ մուտքագրվում և պահվում են բնակչի առողջությանը վերաբերվող ամբողջական տվյալներ: Դա հնարավորություն է տալիս բուժող բժշկին անհրաժեշտության դեպքում էլեկտրոնային եղանակով տեսնել պացիենտի առողջության պատմությունն ու նրա բուժման վերաբերյալ կայացնել տեղեկացված որոշումներ, ավելի մանրամասն հետևյալ հղմամբ՝ <https://corporate.armed.am/about-us>:

¹⁰ Տե՛ս «Health-related issues in the case-law of the European Court of Human Rights» Եվրոպայի խորհրդի թեմատիկ զեկույցը, 2-րդ բաժին, «A» ենթաբաժին, 2-րդ պարբերություն, 6-րդ էջում, հետևյալ հղմամբ՝ https://www.echr.coe.int/Documents/Research_report_health.pdf:

կատվության վրա»¹¹: «Առողջապահության համակարգի գործընթացների օպտիմալացումը հնարավորություն է տալիս ճիշտ ժամանակին ապահովել անհրաժեշտ տեղեկատվության հասանելիությունը մասնագետների համար: Համակարգի շրջանակներում տեղեկատվության հոսքերը կազմակերպված են լինելու այնպես, որպեսզի անձի վերաբերյալ բժշկական անհրաժեշտ տվյալները նվազագույն ժամանակում հասանելի լինեն համապատասխան մասնագետին»¹²:

Այսպիսի համակարգի ներդրումն, անշուշտ, դրական քայլ է, և զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվության հասանելիությունը նաև Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությանը, ինչպես նաև մյուս մասնագիտացված հանձնաժողովներին¹³ ապահովելու սույն հոդվածով կատարված առաջարկն իրացնելու նպատակով օրենսդրական փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն է առաջանալու նաև ոլորտային իրավական ակտերում:

Էլեկտրոնային առողջապահության համակարգի վերաբերյալ կարգավորումները սահմանված են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով, որում **համապատասխան փոփոխություններով առաջարկվում է համակարգի շահառու նախատեսել նաև զինապարտ քաղաքացիների բժշկական հետազո-**

տություն և փորձաքննություն իրականացնող հանձնաժողովներին:

Հարկ է նաև նշել, որ առողջության պահպանության սահմանադրական իրավունքը զորահավաքային զորակոչի ընթացքում լավագույնս ապահովելու նպատակով հնարավոր է նաև քննարկել առողջապահական համակարգում եթե ոչ բոլորի, ապա առնվազն պահեստազորում հաշվառված, զինապարտ, զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիների առողջության պարտադիր ապահովագրության համակարգի ներդրման հնարավորությունը:

Ինչպես նշվեց, պետական և տեղական բժշկական հաստատություններում քաղաքացիներին անվճար բժշկական օգնության տրամադրման կարգավորում է նախատեսված Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության վերաբերելի կարգավորմամբ, ընդ որում, սահմանվում է, որ պետությունն այդ պարտավորությունն իրականացնում է ոչ միայն համապատասխան բյուջեի միջոցների, այլև ապահովագրական ներդրումների և այլ եկամուտների հաշվին:

Ապահովագրական այսպիսի համակարգի ներդրումը զգալիորեն կթոթափի պետության բեռը հատկապես պատերազմական իրավիճակներում քաղաքացիների բժշկական հետազոտություններն իրականացնելու տեսանկյունից:



¹¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք», 23 դեկտեմբերի 2010 թվականի N 50, «1. Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին», կետ 4:
¹² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք», 23 դեկտեմբերի 2010 թվականի N 50, «1. Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտում միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգի ներդրման հայեցակարգին հավանություն տալու մասին», կետ 6:
¹³ Այդ թվում՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողով, Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողով, Հոսպիտալային ռազմաբժշկական հանձնաժողով:

ԶՈՐԱՅՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի անդամ, Փաստաբան
իրավ. գիտ. թեկնածու

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ԱՐԱՐՔՈՒՄ
ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՑԱՌՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔ**

Սույն գիտական հոդվածի սահմաններում քննարկման առարկա է դարձվում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող անձանց ծառայողական պարտականությունների բերմամբ ձևականորեն որևէ հանցակազմի հատկանիշներին համապատասխանող արարքի կատարման համար քրեական պատասխանատվությունից ազատելու հիմնահարցը: Աշխատանքի ծավալում ներառված են ոլորտային օրենսդրության և քրեական օրենքի բացի սահմանադրականության վերաբերյալ վերլուծությունը, ինչպես նաև արտասահմանյան փորձի ուսումնասիրությունը:

Բանալի բառեր. Օպերատիվ-հետախուզական գործունեություն, արարքում հանցավորությունը բացառող հանգամանք:

ЗОРАЙР АРУТЮНЯН

Адвокат, Член Палаты Адвокатов Республики Армения
канд.юрид.наук

**ИСПОЛНЕНИЕ СЛУЖЕБНЫХ ОБЯЗАННОСТЕЙ КАК ОБСТОЯТЕЛЬСТВО ИСКЛЮЧАЮЩЕЕ
ПРЕСТУПНОСТЬ ДЕЯНИЯ**

В рамках настоящей научной статьи обсуждается вопрос освобождения от уголовной ответственности лиц осуществляющих оперативно-розыскную деятельность совершивших деяния формально соответствующих какому-либо составу преступления. В объем работы включены анализ отраслевого законодательства и вопрос конституциональности пробела в уголовном законе, а также рассмотрение иностранного опыта.

Ключевые слова: Оперативно-розыскная деятельность, обстоятельство исключаящее преступность деяния.

ZORAYR HARUTYUNYAN

Advocate, Member of the Chamber of Advocates of the Republic of Armenia
PhD in Law

**PERFORMANCE OF OFFICE DUTIES AS A CIRCUMSTANCE EXCLUDING
THE CRIMINALITY OF ACTION**

In the frames of the current scientific article, the issue of freeing from criminal responsibility of people that have committed actions formally corresponding to any crime while performing an operational-search activity is being discussed. Analysis of the relative branch of legislation, a question of the constitutionality of the gap in criminal law, and the experiences of foreign countries are included in the scale of the article.

Keywords: Operational-search activity, circumstance excluding the criminality of action.

ՀԱՅԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ոստիկանության ՀՀ-ում ինտերպոլի ԱԿԲ-ի ավագ օպերիվագոր,
 ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

**ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ
 ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ**

Հեղինակային և հարակից իրավունքների խախտումները կարող են կատարվել այդ իրավունքներով պաշտպանվող տարատեսակ օբյեկտների նկատմամբ: Նշված օբյեկտները սահմանվում և դրանց հետ կապված իրավահարաբերությունները կարգավորվում են ու պաշտպանվում ՀՀ կողմից վավերացրած միջազգային պայմանագրերով ու ներպետական օրենսդրությամբ: Սույն հոդվածում հեղինակի կողմից ներկայացվել են հեղինակային իրավունքի և հարակից իրավունքները խախտելու հանցատեսակի համատեքստում մի շարք օբյեկտների հետ կապված ՀՀ ներպետական օրենսդրության խնդիրները, կատարվել է ինչպես ՀՀ ներպետական օրենսդրության, այնպես էլ տարբեր երկրների օրենսդրությունների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն, ներկայացվել են առաջարկություններ, որոնք ուղղված են առկա խնդիրները լուծելուն:

Բանալի բառեր. Հեղինակային իրավունք, հարակից իրավունքներ, համակարգչային ծրագրեր, բջջային հավելվածներ, օպերացիոն համակարգեր, օբյեկտ:

АЙК МАРГАРЯН

Старший оперуполномоченный НЦБ
 Интерпола Полиции Республики Армения,
 аспирант Образовательного комплекса полиции РА

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНО-ПРАВОВОЙ ЗАЩИТЫ АВТОРСКИХ И СМЕЖНЫХ ПРАВ

Нарушения авторских и смежных прав могут быть совершены в отношении различных объектов, защищенных этими правами. Данные объекты определяются а связанные с ними правовые отношения регулируются и охраняются международными договорами ратифицированными Республикой Армения, а также внутренним законодательством. В данной статье представлены проблемы законодательства Республики Армения в связи с рядом объектов в контексте нарушения авторских прав. Кроме того, было проведено исследование внутреннего законодательства РА, а также законодательств разных стран, проведен сравнительный анализ и, наконец, автором были внесены предложения, направленные на решение существующих проблем.

Ключевые слова: авторское право, смежные права, программное обеспечение, мобильные приложения, операционные системы, объект.

HAYK MARGARYAN

Senior detective of the NCB Interpol
 of the Police of the Republic of Armenia,
 PhD student of the Educational Complex of the Police of the RA

SOME ISSUES OF CRIMINAL PROTECTION OF COPYRIGHT AND RELATED RIGHTS

Violations of copyright and related rights can be committed in relation to various objects protected by these rights. These objects are determined and the legal relations associated with them are regulated and protected by international treaties ratified by the Republic of Armenia, as well as by domestic legislation. This article presents the problems of the internal legislation of the Republic of Armenia in connection with a number of objects in the context of the type of copyright infringement. Besides, a study of the domestic legislation of the RA, as well as the legislations of different countries, a comparative analysis was carried out and finally, the author made suggestions, which are aimed at solving the existing problems.

Keywords: Copyright, related rights, software, mobile applications, operating systems, object.

ՆԵԼԼԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի
Իրավաբանական վարչության
Իրավական խորհրդատվության և
զարգացման բաժնի պետ, Փաստաբան

ԳՈՒՐԳԵՆ ՔՈԹԱՆՋՅԱՆ

Իրավաբանական գիտությունների
թեկնածու, Փրիորիթի իրավաբանական
գրասենյակի հիմնադիր-տնօրեն, փաստաբան

**ԻՐԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՂԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԿԱՄ
ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԱՔՑՆԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՈՐԱԿՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Սույն հոդվածը նվիրված է Իրական շահառուի վերաբերյալ կեղծ տեղեկություններ ներկայացնելու կամ ներկայացման ենթակա տեղեկությունները թաքցնելու հանցակազմին վերաբերող վիճահարույց հարցերին: Հեղինակները վերլուծել են հանցակազմի առանձին տարրերը՝ մատնանշելով դրա թերությունները և ներկայացնելով դրա կատարելագործմանն ուղղված առաջարկություններ: Հոդվածի շրջանակներում առանձին ուշադրություն է հատկացվել քննարկվող արարքի որակման առանձնահատկություններին: Այդ կապակցությամբ արտահայտվել են դիտարկումներ, որոնք կարող են օգտակար լինել իրավակիրառ պրակտիկայում:

Բանալի բառեր. Իրական շահառու, կեղծ տվյալներ, քրեական օրենսգիրք, փողերի վաճում, սուբյեկտիվ կողմ, իրավաբանական անձ:

НЕЛЛИ КИРАКОСЯН

Центральный банк Армении.
Юридический отдел.
Начальник отдела Юридическая
консультация и
развития, адвокат

ГУРГЕН КОТАНДЖЯН

Кандидат юридических наук,
Адвокат, директор юридической
Компании Приорити

**УГОЛОВНО-ПРАВОВАЯ ХАРАКТЕРИСТИКА И ОСОБЕННОСТИ КВАЛИФИКАЦИИ СОСТАВА
ПРЕСТУПЛЕНИЯ О ПРЕДОСТАВЛЕНИИ ЛОЖНОЙ ИНФОРМАЦИИ О РЕАЛЬНОМ БЕНЕФИЦИАРЕ ИЛИ
СОКРЫТИЯ ПРЕДОСТАВЛЯЕМОЙ ИНФОРМАЦИИ**

В этой статье рассматриваются спорные вопросы, связанные с преступлением, состоящим в предоставлении ложной информации о реальном бенефициаре или сокрытии информации, которая должна быть предоставлена. Авторы проанализировали отдельные элементы преступления, указали на его недостатки и дали рекомендации по их устранению. В рамках статьи особое внимание было уделено особенностям квалификации обсуждаемого деяния. В этом отношении были сделаны замечания, которые могут быть полезны в правоприминительной практике.

Ключевые слова: Реальный бенефициар, ложная информация, уголовный кодекс, отмывание денег, субъективная сторона, юридическое лицо.

NELLI KIRAKOSYAN

Central Bank of Armenia.
Legal Department.
Head of Legal advice and

GURGEN KOTANJYAN

